Դրամական միջոցները և դրանց համարժեքները բաղկացած են կանխիկ դրամից, ՀՀ ԿԲ-ում պահվող միջոցներից (բացառությամբ ԱրՔա վճարային համակարգով իրականացվող փոխհաշվարկների համար դեպոնացված գումարների) և այլ բանկերում հաշիվներից, որոնք կարող են փոխարկվել կանխիկ կարճ ժամանակամիջոցում, այդ թվում, բարձր իրացվելի ներդրումները, որոնց մարման ժամկետը ձեռք բերման օրից 90 օր է, որոնք հնչառությամբ փոխարկելի են հայտնի կանխիկ գումարների, և չեն ենթարկվում արժեքի փոփոխման զգալի ռիսկի: Դրամական միջոցները և դրանց համարժեքները հաշվառվում են ամորտիզացված արժեքով:

Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Իր բնականոն գործունեության ընթացքում Բանկն օգտագործում է այլ բանկերում տարբեր ժամկետայնության բացված ավանդային հաշիվներ: Բանկերին տրամադրված ֆիրմային ժամկետով վարկերն ու կանխավճարները հաշվառվում են ամորտիզացված արժեքով

օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ոչ ֆիքսված ժամկետներով միջոցներն ամորտիզացվում են Բանկի ղեկավարության կողմից գնահատված ժամկետներում: Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների գումարները նվազեցվում են արժեզրկումից պահուստների գումարներով:

Ֆինանսական գործիքներ

Բանկը ֆինանսական ակտիվները և պարտավորություններն իր հաշվեկշռում ճանաչում է միայն և միայն այն դեպքում, երբ նա դառնում է գործիքի պայմանագրային կողմ: Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների սովորական բնույթ կրող առք ու վաճառքների դեպքում դրանք ձեռնարկվում են գործարքի օրվա ամսաթվով: Մովորական բնույթ կրող ձեռք բերումների դեպքում, երբ ֆինանսական գործիքը հետագայում պետք է չափվի իրական արժեքով, պայմանագրի օրվա և գործարքի օրվա միջև ընկած ժամանակամիջոցում այն հաշվառվում է նույն սկզբունքով, ինչ որ ձեռք բերված գործիքների դեպքում:

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները սկզբնական ճանաչման ժամանակ չափվում են սկզբնական արժեքով, գումարած գործարքի հետ կապված ցանկացած ծախսումները, բացի ֆինանսական արդյունքներով ճշգրտվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքների:

Սկզբնական ճանաչումից հետո բոլոր ֆինանսական պարտավորությունները, բացի ֆինանսական արդյունքներով ճշգրտվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքների (ներառված նաև առևտրային նպատակներով պահվող գործիքները), հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի

մեթոդը: Սկզբնական ճանաչումից հետո ֆինանսական արդյունքներով ճշգրտվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքները հաշվառվում են իրական արժեքով:

Բանկի կողմից ֆինանսական ակտիվները դասակարգվում են ըստ հետևյալ կատեգորիաների.

- ֆինանսական արդյունքներով ճշգրտվող, իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ,
- մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ,
- վարկեր և ղեքիտորական պարտքեր,
- վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ:

Ներդրումների դասակարգումը կատարվում է դրանց ձեռքբերման պահին՝ Բանկի ղեկավարության կողմից տահմանված գնահատումների հիման վրա հաշվի առնելով ձեռքբերման նպատակները: Ակտիվների հետագա վերահասակարգումը կատարվում է անհրաժեշտության և հնարավորության դեպքում յուրաքանչյուր ֆինանսական տարվա ավարտից հետո:

Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ

Ֆիրմավաճ մարման ժամկետով ներդրումները դասակարգվում են որպես մինչև մարման ժամկետը պահվող, երբ Բանկը հաստատարվես մտադրված է և հնարավորություն ունի պահել այդ ներդրումները մինչև դրանց մարման ժամկետի լրանալը: Եթե Բանկի կողմից իրականացվում է մարման ժամկետին ոչ մտադրված ակտիվների էական գումարի վաճառք, ապա ամբողջ դասը վերադասակարգվում է որպես վաճառքի համար մատչելի: Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույթի մեթոդը՝ հանած դրանց գծով արժեզրկումից պահուստները:

Վարկեր և դեբիտորական պարտքեր

Վարկերը և դեբիտորական պարտքերը ֆիրմավաճ կամ որոշելի վճարումներով ֆինանսական ակտիվներն են, որոնք ստեղծվում են Բանկի կողմից ուղղակիորեն պարտապահին դրամ տրամադրելու միջոցով՝ առանց պարտքը վաճառելու մտադրության:

Ֆիրմավաճ ժամկետներով տրամադրված վարկերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ գումարած գործարքից ծախսումները: Երբ տրամադրված գումարների իրական արժեքը տարբերվում է վարկի իրական արժեքից, օրինակ երբ վարկը տրամադրվում է շուկայականից ցածր տոկոսադրույթով, տրամադրված գումարի և վարկի իրական արժեքների տարբերությունը վարկի սկզբնական ճանաչման ժամանակ ձևակերպվում է որպես ծախս շուկայականից ցածր դրույթներով ակտիվների տեղաբաշխումից՝ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Այնուհետև վարկերն ու փոխառվությունները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույթի մեթոդը: Ֆիրմավաճ մարման ժամկետ չունեցող վարկերն ու փոխառվությունները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ ելնելով մարման ենթադրվող ժամկետներից: Հաճախորդներին տրված վարկերի ու փոխառվությունների գումարները նվազեցվում են դրանց գծով արժեզրկումից պահուստների գումարներով:

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ներդրումներ

Վաճառքի համար մատչելի ներդրումները պարտքային, ինչպես նաև կապիտալի գործիքներում կատարված այն ներդրումներն են, որոնք Բանկը մտադիր է պահել անորոշ ժամկետով, և որոնք կարող են վաճառվել իրացվելիության կարիքների բավարարման համար, ինչպես նաև տոկոսադրույթներում, փոխարժեքներում կամ բաժնետոմսերի գներում փոփոխությունների դեպքում: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները նախնական ճանաչումից հետո հաշվառվում են իրական արժեքով: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի փոփոխություններից առաջացած օգուտն ու վնասը վերագրվում է սեփական կապիտալին մինչև ֆինանսական ակտիվի օտարումը կամ արժեզրկումը, որի դեպքում կապիտալում ճանաչված օգուտը կամ վնասը վերաձևակերպվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Ամեն դեպքում, տոկոսները հաշվարկվում են արդյունավետ տոկոսադրույթի մեթոդով՝ շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Վաճառքի համար մատչելի կապիտալի գործիքների գծով շահաբաժինները շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում գրանցվում են այն ժամանակ, երբ Բանկը իրավունք է ձեռք բերում ստանալու այդ շահաբաժինները:

Ակտիվ ֆինանսական շուկաներում գործող ֆինանսական ակտիվի իրական արժեքը հաշվետու ամսաթվին բորսայի փակման պահին այդ ակտիվի գծով գնանշվող գինն է: Եթե գնանշված շուկայական գինը առկա չէ, ապա գործիքի իրական արժեքը որոշվում է գնային մոդելների կամ գեղջված դրամական հոսքերի տեխնիկայի միջոցով: Հակառակ դեպքում ներդրումները հաշվառվում են ինքնարժեքով՝ նվազեցնելով արժեզրկումից կորուստները:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով Բանկն իրականացնում է արժեզրկման գնահատում ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական ակտիվների խմբի համար:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ակտիվներ

Ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական ակտիվների խումբը արժեզրկվում է ն արժեզրկումից կորուստը ճանաչվում է միայն այն դեպքում, եթե կա օբյեկտիվ վկայություն արժեզրկման մասին՝ որպես ակտիվի նախնական ճանաչումից հետո կատարված մեկ կամ մի քանի իրադարձությունների (“ծախսային իրադարձություն”) արդյունք, և երբ այդ իրադարձությունը կամ իրադարձություններն ազդեցություն ունեն ֆինանսական ակտիվի կամ ակտիվների խմբի ակնկալվող ապագա դրամական հոսքերի վրա, որոնք կարելի է արժանահավաստորեն չափել:

Արժեզրկումից կորստի օբյեկտիվ վկայության գոյությունը որոշվում է որոշ չափանիշներով, որոնք վկայում են, որ վարկատուն կամ վարկատուների խումբն ունեն զգալի ֆինանսական դժվարություններ (օրինակ՝ կապիտալի նորմատիվ, գուտ եկամտի և վաճառքների հարաբերակցություն), առկա են տոկոսագումարների և մայր գումարների վճարման պարտավորությունների, վարկային համաձայնության կամ պայմանների խախտումներ, գրավի արժեքի նվազում, հավանականություն, որ կլիևի սնանկացում կամ այլ ֆինանսական վերակազմակերպում և կա տեղեկատվություն ակնկալվող ապագա դրամական հոսքերի չափելի նվազման վերաբերյալ՝ կապված տնտեսական պայմանների փոփոխություններով, որոնք ազդում են վարկատուի և չվճարումների վրա:

Բանկը սկզբից գնահատում է արժեզրկման օբյեկտիվ պայմանների գոյությունը անհատական գնահատման արդյունքում այն ակտիվների համար, որոնք անհատապես էական են և հետո անհատական կամ խմբային գնահատումների արդյունքում այն ֆինանսական ակտիվների համար, որոնք անհատապես էական չեն: Անհատական գնահատման արդյունքում արժեզրկման օբյեկտիվ գոյությունը հաստատելուց կամ ժխտելուց հետո ակտիվները դասակարգվում են վարկային ռիսկի նմանատիպ բնույթ ունեցող խմբերում՝ խմբային գնահատում իրականացնելու նպատակով: Այն ակտիվները, որոնց գծով անհատական գնահատման արդյունքում ձևավորվել են արժեզրկումից պահուստներ, չեն ներառվում վերոհիշյալ խմբերում:

Երբ առկա է վկայություն ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվի արժեզրկման վերաբերյալ, արժեզրկման պահուստի գումարը որոշվում է որպես ակտիվի հաշվեկշռային արժեքի և այդ ֆինանսական գործիքի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով՝ գեղջված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի

(բացառությամբ վարկի հետ կապված ապագա ծախսերի) ներկա արժեքի միջև տարբերություն: Ակտիվի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է արժեզրկման պահուստի միջոցով, արժեզրկումից ծախսը արտացոլվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Եթե վարկը կամ մինչև մարման ժամկետը պահվող ներդրումն ունի փոփոխական տոկոսադրույթ, ցանկացած արժեզրկումից ծախս չափելու համար գեղջման դրույթը պայմանագրով որոշված ընթացիկ արդյունավետ տոկոսադրույթն է: Բանկը կարող է արժեզրկումը չափել գործիքի իրական արժեքի հիման վրա՝ օգտագործելով տեսանելի շուկայական գինը:

Ապահովված ֆինանսական ակտիվների դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի ներկա արժեքը ներառում է գրավների իրացումից փոխհատուցվող գումարները, հանած գրավի ձեռքբերման և իրացման ծախսերը, անկախ նրանից, թե գրավը կփոխանցվի Բանկին, թե ոչ:

Արժեզրկման խմբային գնահատման նպատակով, ֆինանսական ակտիվները խմբավորվում են Բանկի ներքին վարկային դասակարգման հիման վրա, որը հաշվի է առնում վարկային ռիսկի բնութագրիչները, ինչպես՝ ակտիվի տեսակը, արդյունաբերական ոլորտը, աշխարհագրական դիրքը, գրավի տեսակը, ժամկետանց կարգավիճակը և այլ կապակցված գործոններ:

Ֆինանսական ակտիվների ապագա դրամական հոսքերը, որոնց արժեզրկումը խմբային է գնահատված, որոշվում են խմբում գտնվող ակտիվների պայմանագրային դրամական հոսքերի և նմանատիպ ակտիվների պատմական ծախսերի պրակտիկայի հիման վրա: Վերջինս ճշգրտվում է ընթացիկ տեսանելի տեղեկատվությամբ, որպեսզի արտացոլվեն ներկա պայմանները, որոնք չեն ազդել այն ժամանակահատվածում, որի վրա հիմնված է պատմական ծախսերի պրակտիկան, և պատմական ժամանակաշրջանում ներկայում գոյություն չունեցող պայմանների հետևանքները չեզոքացնելու նպատակով:

Ակտիվների խմբերի ապագա դրամական հոսքերում փոփոխությունների գնահատականը պետք է արտացոլի և համապատասխան լինի դրանց հետ կապված տեսանելի տվյալների ժամանակաշրջանից ժամանակաշրջան փոփոխությունների հետ (օրինակ՝ փոփոխություններ գործազրկության դրույթներում, գույքի գնի, վճարումների կարգավիճակի կամ խմբում կորուստների հավանականությունը մատնանշող այլ գործոնների և կորուստների ծավալների մեջ): Ապագա դրամական հոսքերի գնահատման համար օգտագործվող մեթոդոլոգիան և վարկածները պարբերաբար վերանայվում են Բանկի կողմից՝ կորուստների իրական և գնահատված արժեքների միջև տարբերությունները նվազեցնելու համար:

Վարկերը համապատասխան պահուստների հետ միասին դուրս են գրվում, եթե ապագայում չկա վարկը հավաքագրելու իրատեսական հեռանկար, և երբ բոլոր գրավներն օգտագործվել են կամ փոխանցվել Բանկին: Եթե հաջորդող տարում, գնահատված արժեզրկման ծախսը ավելանում կամ նվազում է արժեզրկման ճանաչումից հետո կատարված իրադարձությունների պատճառով, նախկինում ճանաչված արժեզրկման ծախսը ավելացվում կամ նվազեցվում է

պահուստի գումարը ճշտելով: Եթե ապագա դուրսգրումը հետագայում վերականգնվում է, ապա վերականգնված գումարը կրեդիտագրվում է պահուստի հաշվին:

Ֆինանսական ակտիվների արժեզրկման պահուստները ֆինանսական հաշվետվություններում ձևավորվել են գոյություն ունեցող տնտեսական պայմանների հիման վրա: Բանկը չի կարող կանխատեսել ինչպես Հայաստանում կարող են փոխվել տնտեսական պայմանները, և ինչ ազդեցություն կարող են ունենալ այդ փոփոխությունները ֆինանսական ակտիվների արժեզրկման պահուստների ճշտության վրա հետագա ժամանակաշրջաններում:

Վերանայված վարկեր

Որտեղ հնարավոր է, Բանկը փորձում է վերանայել վարկերը, քան բոնագանձել գրավը: Սա կարող է հանգեցնել վճարումների երկարաձգումների և վարկի մարման նոր պայմանների մասին համաձայնության: Երբ վարկի պայմանները վերանայված են, վարկն այլևս չի համարվում ժամկետանոց: Ղեկավարությունը շարունակաբար վերանայում է վերանայված պայմաններով վարկերը, համոզվելու համար, որ բոլոր համաձայնությունները պահպանված են և որ ապագա վճարումները կկատարվեն: Վարկերը շարունակում են մնալ արժեզրկման անհատական կամ խմբային գնահատման առարկա՝ օգտագործելով վարկի սկզբնական արդյունավետ սոկոսադրույքը:

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ

Երբ վաճառքի համար մատչելի ակտիվն արժեզրկվում է, ապա նրա արժեքի (նվազեցված մարումների և անորոշիզացիայի գումարներով) և ընթացիկ իրական արժեքի տարբերությունը, բացառությամբ եախկինում համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ձանաչված արժեզրկումից՝ գումարների, այլ համապարփակ եկամուտներից վերաձևակերպվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Վաճառքի համար մատչելի դասակարգված կապիտալ գործիքների արժեզրկումից կորուստների հակադարձումը ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում չի ձանաչվում, այլ հաշվառվում է կապիտալի առանձին բաժնում, որպես՝ այլ համապարփակ եկամուտ: Վաճառքի համար մատչելի պարտքային գործիք հանդիսացող ներդրումների գծով արժեզրկումից կորուստների հակադարձումը ձանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, եթե ակտիվի իրական արժեքի բարձրացումը օբյեկտիվորեն կարելի է համարել հետագա իրադարձությունների արդյունք, որոնք կատարվել են կորուստը ֆինանսական արդյունքներով ձանաչելուց հետո:

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների ապաճանաչում

Ֆինանսական ակտիվներ ֆինանսական ակտիվը (կամ ֆինանսական ակտիվի մի մասը, կամ ֆինանսական ակտիվների խմբի մի մասը) ապաճանաչվում է, երբ.

- վերանում է ակտիվից դրամական հոսքեր ստանալու պահանջի իրավունքը,

- Բանկը փոխանցում է ակտիվից դրամական հոսքեր ստանալու պահանջի իրավունքը, կամ պահպանում է այդ իրավունքը, բայց պարտավորվում է ստացված գումարներն ամողջությամբ և ժամանակին փոխանցել երրորդ կողմին փոխանցման համաձայնագրի համաձայն,
- և Բանկը կամ (ա) փոխանցում է ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, կամ (բ) չի փոխանցում, և չի պահպանում ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, այլ փոխանցում է ակտիվի նկատմամբ վերահսկողությունը:

Եթե Բանկը փոխանցում է ակտիվից դրամական հոսքեր ստանալու պահանջի իրավունքը և չի փոխանցում, և չի պահպանում ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, և չի փոխանցում ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, ապա ակտիվը հաշվառվում է Բանկի շարունակվող մասնակցության համապատասխան ֆինանսական ակտիվում: Երբ շարունակվող մասնակցությունը ձեռք է բերում փոխանցվող ակտիվի երաշխիքային ապահովման ձև, ապա այդպիսի մասնակցության չափը համարվում է հետևյալ երկու մեծություններից նվազագույնը՝ ակտիվի հաշվեկշռային արժեք կամ Բանկի կողմից փոխհատուցվելիք առավելագույն գումար:

Երբ շարունակվող մասնակցությունը ձեռք է բերում փոխանցվող ակտիվի դուրս գրված վաճառքի և/կամ գեման օպցիոնի ձև (ներառյալ դրամային և նման պայմաններով օպցիոնները), մասնակցության չափը որոշվում է այն գումարի չափով, որով Բանկը կարող է հետ գնել փոխանցվող ակտիվը, բացառությամբ իրական արժեքով գնահատված դուրսգրված վաճառքի օպցիոնի (ներառյալ դրամային և նման պայմաններով օպցիոնները), երբ շարունակվող մասնակցության չափը համարվում է հետևյալ երկու մեծություններից նվազագույնը՝ փոխանցվող ակտիվի իրական արժեքը կամ օպցիոնի կատարման գինը:

Ֆինանսական պարտավորություններ Ֆինանսական պարտավորությունն ապաճանաչվում է, երբ այն մարվում է, չեղյալ է համարվում կամ լրացել է դրա ուժի մեջ մնալու ժամկետը:

Փոխառուի և փոխատուի միջև պարտքային գործիքների փոխանակումը, որոնց պայմաններն էականորեն տարբերվում են միմյանցից, կամ կատարվում է գործող պարտքային գործիքի պայմանների էական փոփոխություն, իրենից ներկայացնում է հին պարտքի մարում, որը պետք է հանգեցնի այդ պարտքի ապաճանաչմանը և նոր պարտքային գործիքի ճանաչմանը, իսկ տարբերությունը համապատասխան հաշվեկշռային հաշվի հետ ձևակերպվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Ռեպո և հակադարձ ռեպո համաձայնագրեր

Հետգնման պայմանով արժեթղթերի վաճառքի գործառնությունները ("ռեպո") դիտարկվում են որպես ապահովված ֆինանսական գործարքներ: Հետգնման պայմանով վաճառված արժեթղթերը շարունակվում են հաշվառվել ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, և այն դեպքում, երբ գնորդն ունի նշված արժեթղթերի վաճառքի կամ զբաղադրման պայմանագրային իրավունք կամ համաձայնություն, դրանք վերադասակարգվում են որպես "Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր" և ներկայացվում են որպես առանձին

հաշվեկշիռային հոդված: Համապատասխան պարտավորությունն արտացոլվում է ֆինանսական

կազմակերպությունների կամ հաճախորդների նկատմամբ հաշիվներում:

Հետվաճառքի պայմանով գնված արժեթղթերը ("հակադարձ ռեպո") չեն ճանաչվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, իսկ տրամադրված գումարները հաշվառվում են որպես սրահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ կամ հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ:

Արժեթղթերի գնման և վաճառքից առաջացած եկամուտը կամ ծախսը իրենից ներկայացնում է տոկոսային եկամուտ կամ ծախս, որոնք հաշվեգրվում են հետզեման պայմանագրերի գործողության ժամկետների ընթացքում՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Եթե հակադարձ ռեպո պայմանագրով գնված ակտիվները վաճառվեն երրորդ կողմին, արժեթղթերի վերադարձի պարտավորությունը գրանցվում է, որպես առևտրային պարտավորություն և չափվում է իրական արժեքով:

Որպես գրավ տրված և ստացված արժեթղթեր

Արժեթղթերով գործարքները հիմնականում ապահովվում են արժեթղթերով կամ կանխիկ դրամով: Արժեթղթերի փոխանցումը մյուս կողմին արտացոլվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, միայն եթե փոխանցվում են նաև ռիսկերը և օգուտները կապված սեփականության իրավունքի փոխանցման հետ: Վճարված կամ որպես գրավ ստացված կանխիկը գրանցվում է որպես ակտիվ կամ պարտավորություն:

Չեորբերված արժեթղթերը չեն ճանաչվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում մինչև գրանց օտարումը երրորդ կողմին, որի դեպքում նշված արժեթղթերի վերադարձման գծով պարտավորությունը ճանաչվում է իրական արժեքով որպես առևտրական նպատակներով պարտավորություն, իսկ գնման և վաճառքի տարբերությունը հաշվառվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության "Չուտ առևտրային եկամուտ" հոդվածում:

Վարձակալություն

Գործառնական վարձակալություն - Բանկը որպես վարձակալ

Ակտիվների վարձակալությունը, որի դեպքում ակտիվի սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու օգուտները պահպանվում են վարձատուի մոտ, դասակարգվում է որպես գործառնական վարձակալություն: Գործառնական վարձակալության շրջանակներում վարձավճարները ճանաչվում են որպես ծախս ֆինանսական արդյունքում գծային հիմունքով վարձակալության ժամկետի ընթացքում և ներառվում են գործառնական ծախսերում:

Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները ներկայացված են սկզբնական արժեքի և կուտակված մաշվածության տարբերությամբ: Բանկի շենքերը և հողը ներկայացված են իրական արժեքի և կուտակված մաշվածության տարբերությամբ: Երբ ակտիվի հաշվեկշիռային արժեքը ավելի մեծ է նրա

գնահատված փոխհատուցվող գումարից ոչ ժամանակավոր հանգամանքների պատճառով, այն անմիջապես եվազնեցվում է մինչև այդ փոխհատուցվող գումարը:

Մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդով ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում, կիրառելով հետևյալ տարեկան դրույքաչափերը՝

	Օգտակար ծառայության ժամկետ (ամսերն է)	Տոկոսադրույք (%)
Ընկեր	50	2
Համակարգիչներ և կապի միջոցներ	4	25
Տրանսպորտային միջոցներ	10	10
Այլ կիմնական միջոցներ	10	10

Վարձակալված հիմնական միջոցների վրա ուղղված կապիտալ բնույթի ծախսումները կապիտալացվում և ամորտիզացվում են գծային հիմունքով վարձակալման ժամկետի և հիմնական միջոցների և դրանց օգտակար ծառայության ժամկետներից նվազագույնով: Անավարտ շինարարությունը պատկանող ակտիվները չեն ամորտիզացվում:

Հիմնական միջոցների վերանորոգման և պահպանման հետ կապված ծախսումները շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես ծախս՝ դրանց կատարման պահին: Կապիտալ բնույթի նորոգման ծախսումները ավելացվում են ակտիվի հաշվեկշռային արժեքին, երբ հավանական է, որ դրանց շնորհիվ ապագա տնտեսական օգուտները սովորելի շատ, բան ակնկալվում էր առկա ակտիվի նորմատիվային ցուցանիշների սկզբնական գնահատումից, կիսուն դեպի Բանկ: Այս ծախսումների մաշվածությունը հաշվարկվում է համապատասխան ակտիվի օգտակար ծառայության մնացորդային ժամկետի ընթացքում:

Հիմնական միջոցի իրացումից առաջացած օգուտ կամ վնասը որոշվում է որպես ակտիվի իրացումից զուտ մուտքերի և հաշվեկշռային արժեքի տարբերություն և հաշվառվում է գործառնական շահույթում:

Վերագնահատման արդյունքում ակտիվի արժեքի աճը արտացոլվում է կապիտալում հիմնական միջոցների վերագնահատման պահուստում, բացի այն դեպքերից, երբ այն փոխհատուցում է ֆինանսական արդյունքներում տվյալ ակտիվի գծով նախկինում ճանաչված վերագնահատումից վնասը, այս դեպքում վերագնահատումից աճը նույնպես ճանաչվում է ֆինանսական արդյունքներում: Վերագնահատման արդյունքում ակտիվի արժեքի նվազումը ճանաչվում է ֆինանսական արդյունքներում, բացի այն դեպքերից, երբ այն փոխհատուցում է նախկինում տվյալ ակտիվի գծով կապիտալում ճանաչված վերագնահատումից աճը:

Վերագնահատված գումարով հաշվառվող հիմնական միջոցների իրացման դեպքում, իրացված հիմնական միջոցների համապատասխան դասի վերագնահատման պահուստում վերագրված գումարը փոխանցվում է չբաշխված շահույթին:

Ոչ կյութական ակտիվներ

Ոչ կյութական ակտիվները բաղկացած են համակարգչային ծրագրերից, արտոնագրերից և այլն: Առանձին ձեռք բերված ոչ կյութական ակտիվները սկզբնապես ճանաչվում են ինքնարժեքով: Նախնական ճանաչումից հետո ոչ կյութական ակտիվները հաշվառվում են ինքնարժեքով՝ նվազեցնելով կուտակված ամորտիզացիան կամ արժեզրկումից կորուստները: Ոչ կյութական ակտիվների օգտակար ծառայությունների ժամկետները կարող են լինել որոշակի կամ անորոշ: Որոշակի օգտակար ծառայությունների ժամկետներ ունեցող ոչ կյութական ակտիվներն ամորտիզացվում են գծային հիմունքով օգտակար ծառայության ընթացքում՝ 5-ից 10 տարվա ընթացքում և գնահատվում են արժեզրկման առումով, երբ առկա են արժեզրկման հասկանիշներ: Ամորտիզացիայի հաշվառման մեթոդները և ժամկետները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում:

Անորոշ օգտակար ծառայությունների ժամկետներ ունեցող ոչ կյութական ակտիվները չեն ամորտիզացվում, սակայն յուրաքանչյուր տարի գնահատվում են արժեզրկման առումով՝ անհատապես կամ առանձին դրամատեղծ միավորի համար: Անորոշ օգտակար ծառայությունների ժամկետներ ունեցող ոչ կյութական ակտիվները յուրաքանչյուր տարի հսկվում են հիմնավորելու համար նրանց հաշվառման շարունակականությունը նշված դասում: Համակարգչային ծրագրերի ընթացիկ սափասարկման ծախսերը հաշվառվում են որպես ծախս դրանց կատարման ժամանակ:

Բոնազանձված ակտիվներ

Որոշ դեպքերում, ակտիվները բոնազանձվում են վարկային պարտավորությունների չկատարման արդյունքում: Բոնազանձված ակտիվները չափվում են սկզբնական արժեքից և իրացման գույք արժեքից նվազագույնով:

Ներգրավված միջոցներ

Ներգրավված միջոցները, որոնք ներառում են 22 կառավարության և կենտրոնական բանկի, այլ ֆինանսական կազմակերպությունների և հաճախորդների հաշիվները սկզբնապես ճանաչվում են ստացված միջոցների իրական արժեքով՝ հանած գործառնությունների գծով ուղղակի ծախսերը: Ակզբնական ճանաչումից հետո ներգրավված միջոցները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ սովորապարտության մեթոդը: Եկամուտները և ծախսերը գրանցվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, ինչպես պարտավորությունների ապաճանաչման ժամանակ, այնպես էլ ամորտիզացիայի ընթացքում:

Ֆինանսական երաշխիքներ

Ֆինանսական երաշխիքների պայմանագրերը այն պայմանագրերն են, որոնք պահանջում են, որ երաշխիքը արամադրողը փոխհատուցի երաշխիքը ստացողին կոնկրետ պարտապանի կողմից պարտքային գործիքի ժամկետներին հստակապես վճարումները ժամանակին չկատարելու պատճառով վերջինիս կողմից կրած վնասների դիմաց: Նման ֆինանսական

երաշխիքներ տրամադրվում են բանկերին, ֆինանսական և այլ կազմակերպություններին հաճախորդների վարկերը, օվերդրաֆտները և այլ բանկային գործիքները ապահովելու նպատակով:

Ֆինանսական երաշխիքները ֆինանսական հաշվետվություններում սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով "Այլ պարտավորություններ"-ում որպես կոմիսիոն վճար: Սկզբնական ճանաչումից հետո Բանկը յուրաքանչյուր երաշխավորության տակ պարտավորությունը չափում է ամբողջագցված վճարից և երաշխավորության արդյունքում առաջացած ցանկացած ֆինանսական պարտավորություն լուծելու համար անհրաժեշտ էլքերի լավագույն գնահատումից առավելագույնով:

Պահուստներ

Պահուստը ճանաչվում է, երբ Բանկը ունի ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու նպատակով կսպանելվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, և պարտականության գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Մեվական կապիտալ

Բաժնետիրական կապիտալ

Նոր բաժնետոմսերի թողարկմանը, բացի կազմակերպությունների միավորման դեպքում թողարկվող բաժնետոմսերի, վերաբերող ուղղակի ծախսերը նվազեցվում են կապիտալի աճից: Երբ թողարկման արդյունքում ստացված գումարների իրական արժեքը գերազանցում է բաժնետոմսերի անվանական արժեքը, տարբերությունը հաշվառվում է որպես հավելյալ ճար:

Էմիսիոն եկամուտ

Էմիսիոն եկամուտը ներառում է բաժնետոմսերի թողարկումից ստացված ցանկացած հավելյալ ճար: Գործարքի գծով ցանկացած ծախսում, որը կապված է բաժնետոմսերի թողարկման հետ նվազեցվում է էմիսիոն եկամուտից:

Չբաշխված շահույթ

Չբաշխված շահույթը ներառում է ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների չբաշխված շահույթը:

Շահաբաժիններ

Հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով շահաբաժինները դուրս են գրվում կապիտալից և ճանաչվում են որպես պարտավորություն, միայն երբ դրանք հաստատվում են հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով կամ մինչև այդ: Հաշվապահական հաշվեկշռի ամսաթվից հետո մինչև ֆինանսական հաշվետվությունների հրատարակման ամսաթիվը հայտարարված կամ հաստատված շահաբաժինները բացահայտվում են:

Բաժնետերերին վճարվող շահաբաժինները վճարվում են հարկված շահույթից և ՀՀ հարկային օրենսդրության համաձայն՝ հարկման ենթակա չեն:

Հիմնական միջոցների վերագնահատման պահուստ

Հիմնական միջոցների վերագնահատման աճը օգտագործվում է գրանցելու համար հիմնական միջոցների իրական արժեքի աճը և նվազումը այն չափի, որ նման նվազումը վերաբերում է նույն ակտիվի աճին, որը նախկինում ճանաչվել էր սեփական կապիտալում:

Վաճառքի համար մատչելի արժեթղթերի վերագնահատման պահուստ

Այս պահուստը արտացոլում է վաճառքի համար մատչելի ներդրումների իրական արժեքի փոփոխությունները:

Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները, եկամուտներն ու ծախսերը ֆինանսական հաշվետվություններում ներկայացվում են հաշվանցված, եթե գոյություն ունի օրենսդրորեն հաստատված իրավունք իրականացնելու հաշվառված գումարների հաշվանցում, ինչպես նաև մտադրություն իրականացնելու հաշվանցում կամ միասնական իրացնելու ակտիվը և մարելու պարտավորությունը:

Եկամուտները և ծախսերը ներկայացվում են գուտ արժեքի հիման վրա, միայն երբ դա բույրատրվում է համաձայն ՀՀՄԱ, կամ մի խումբ համանման գործարքների օգուտի և վնասի համար, ինչպիսին եստիմանում է Բանկի անտրային գործունեությունը:

Ներդրումային արժեթղթերի դասակարգում

Բանկի ներդրումային արժեթղթերը ներառում են ՀՀ պետական և ոչ պետական պարտատոմսերը, ոչ պետական բաժնետոմսերը: Մկզբնական ճանաչման ժամանակ Բանկը դասակարգում է արժեթղթերը որպես մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվներ և վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ, որոնց իրական արժեքի ճշգրտումն իրականացվում է կապիտալում:

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետ

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետի գնահատումը դատողության արդյունք է հիմնված նման ակտիվի հետ կապված փորձի վրա: Ապագա տնտեսական օգուտները մարմնավորվում են ակտիվներում և սպասվում հիմնականում օգտագործմանը գուզրնթաց: Այնուամենայնիվ, այնպիսի գործոնները, ինչպիսիք են գործառնական, տեխնիկական կամ անտրային մաշվածությունները, հաճախ հանգեցնում են ակտիվի տնտեսական օգուտների նվազեցմանը: Ղեկավարությունը մնացորդային օգտակար ծառայության ժամկետը գնահատում է ակտիվի ընթացիկ տեխնիկական վիճակին համապատասխան և ըստ այն գնահատված ժամանակաշրջանի, որի ընթացքում Բանկը կանխատեսում է ստանալ օգուտներ: Մնացորդային օգտակար ծառայության ժամկետի գնահատման համար հաշվի են առնվում հետևյալ հիմնական գործոններն, ակտիվների կանխատեսվող օգտագործումը, գործառնական գործոններից և պահպանման ծրագրից կախված՝ մաշվածությունը և շուկայական պայմանների փոփոխություններից առաջացող տեխնիկական և անտրային մաշվածությունը:

Կապակցված կողմերի հետ գործառնություններ

Բանկն իր գործունեության ընթացքում իրականացնում է գործառնություններ կապակցված կողմերի հետ: Նշված գործառնությունները հիմնականում իրականացվում են շուկայական պայմաններով: Գործող շուկայի բացակայության դեպքում Բանկը կատարում է դատողություններ գործառնությունների շուկայական կամ ոչ շուկայական բնույթի վերաբերյալ: Դատողությունները հիմնվում են այլ հաճախորդների հետ նմանատիպ գործառնությունների, ինչպես նաև արդյունավետ դրույքների վերլուծությունների վրա (տես ծանոթ. 30):

Վարկերի և այլ փոխառվածությունների արժեզրկում

Բանկը գնահատում է խնդրահարույց վարկերը և փոխառվածությունները յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի համար պարզելու համար, ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Մասնավորապես, ղեկավարության դատողությունն անհրաժեշտ է ապագա դրամական հոսքերի գումարը և պարբերականությունը գնահատելու համար, երբ անհրաժեշտ է պահանջվող պահուստի չափը որոշել: Նման գնահատումները հիմնված են որոշ գործոնների շուրջ ենթադրությունների վրա և ներկա արդյունքները կարող են տարբեր լինել հանգեցնելով պահուստում հետագա փոփոխությունների:

Նշանակալի վարկերի և փոխառվածությունների համար անհատական ստեղծված հատուկ պահուստներից բացի, Բանկը նաև ստեղծում է արժեզրկման խմբային պահուստներ, այն ռիսկերի գծով, որոնք չնայած որ անհատապես չեն գնահատվել, սակայն պարունակում են չվճարման ավելի մեծ ռիսկ, քան սկզբնապես որոշվել էր: Սա հաշվի է առնում այնպիսի գործոնների ազդեցությունը, ինչպիսիք են վատթարացումը երկրի ռիսկում, արդյունաբերության մեջ և տեխնոլոգիական հնացումը, ինչպես նաև բացահայտված կառուցվածքային թերությունները կամ դրամական հոսքերի նվազումները:

Հարկային օրենսդրություն

22 հարկային օրենսդրությունը ենթակա է տարակարծիք մեկնաբանությունների:

Բանկի ղեկավարությունը չի վերանայել իր նախորդ գնահատումները և շարունակում է կատարել իր հարկային հաշվառումը, ինչպես նախկինում:


Կապիտալի գործիք հանդիսացող վաճառքի համար մասշտիկ ներդրումների արժեզրկում

Բանկը համարում է կապիտալի գործիք հանդիսացող վաճառքի համար մասշտիկ ներդրումն արժեզրկված, երբ դրա իրական արժեքի նվազումը էական է կամ կրում է երկարատև բնույթ: Որոշելու համար էական է կամ երկարատև նվազումը՝ Բանկը կատարում է որոշակի դատողություններ: Այդ դատողությունները կատարելիս, այլ գործոնների հետ մեկտեղ, Բանկը հաշվի է առնում նաև բաժնետոմսերի գնի փոփոխականությունը: Բացի դրանից, արժեզրկումը հնարավոր է, երբ առկա են ապացույցներ, որ վառացել է ֆինանսական վիճակը տվյալ կազմակերպության, արդյունաբերության կամ ճյուղի, որտեղ կատարվել է ներդրումը, կատարվել են փոփոխություններ տեխնոլոգիաներում և գործառնական կամ ֆինանսական դրամական հոսքերում:

3. Տոկոսային և նմանատիպ եկամուտներ և ծախսեր


Շաբաթ 22 դրամ

Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	01/01/2017թ. – 31/03/2017թ.	01/01/2016թ. – 31/03/2016թ.
Տոկոսային եկամուտներ բանկերում և այլ ֆինանսական կազմակերպություններում տեղաբաշխված միջոցներից	23,149	8,767
Տոկոսային եկամուտ հաճախորդներին տրված վարկերից և փոխառվություններից	5,416,412	2,188,724
Տոկոսային եկամուտ արժեթղթերից	591,843	159,256
Տոկոսային եկամուտ «Ռեպո» պայմանագրերից	69,353	2,598
Ընդամենը	6,100,757	2,359,345



Շաբաթ 22 դրամ

Տոկոսային և նմանատիպ ծախսեր	01/01/2017թ. – 31/03/2017թ.	01/01/2016թ. – 31/03/2016թ.
Տոկոսային ծախսեր բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններից ներգրավված միջոցների դիմաց	1,002,545	384,590
Տոկոսային ծախսեր հաճախորդների ժամկետային ավանդների և ընթացիկ հաշիվների դիմաց	2,921,917	1,231,363
Տոկոսային ծախսեր բանկի կողմից բողոքված արժեթղթերի դիմաց	44,795	-
Տոկոսային ծախսեր «Ռեպո» պայմանագրերի դիմաց	14,950	2,844
Էլլ տոկոսային ծախսեր	60,468	44,442
Ընդամենը	4,044,675	1,663,239



Չուտ տոկոսային և նմանատիպ եկամուտ

2,056,082

696,106

4. Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ և ծախսեր

Հազար ՀՀ դրամ

Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ

01/01/2017թ. –
31/03/2017թ.

01/01/2016թ. –
31/03/2016թ.

Դրամարկղային գործառնություններից

9,121

11,604

Հաշվարկային ծառայություններից և սպասարկումից

133,804

179,434

Վճարային քարտերի սպասարկումից

102,357

52,803

Այլ կոմիսիոն վճարներ


-

20


Ընդամենը

245,282

243,861



Կումիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	01/01/2017թ. – 31/03/2017թ.	01/01/2016թ. – 31/03/2016թ.
Թղթակցային և այլ հաշիվների դիմաց կումիսիոն վճարներ	6,017	6,529
Վճարային քարտերով գործառնությունների գծով վճարներ	7,176	12,487
Արտարժույթով և արժեթղթերով գործառնություններից	2,347	573
Այլ կումիսիոն վճարներ	9	24
Ընդամենը	15,549	19,613




Ստացված գուտ կումիսիոն և այլ վճարներ	166,339	224,248
--------------------------------------	---------	---------

5. Զուտ եկամուտ առևտրային գործունեությունից

Հազար ՀՀ դրամ

Զահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքներից	01/01/2017թ. – 31/03/2017թ.	01/01/2016թ. – 31/03/2016թ.
Զուտ շահույթ արտարժույթային պայմանագրերից	55,811	17,801
Զուտ շահույթ ֆինանսական ակտիվների առք ու վաճառքից	6,675	-
Ընդամենը	62,486	17,801



վաճառքի համար մատչելի ակտիվներից


Ջուտ շահույթ վաճառքի համար մատչելի ակտիվներից
Շղթամներ

	01/01/2017թ. – 31/03/2017թ.	01/01/2016թ. – 31/03/2016թ.
	136	-
	136	17,801

Արտարժույթային գործառնություններից

Արտարժույթի արդ ու վաճառքից ստացված գուտ եկամուտ
Արտարժույթի վերագնահատումից ստացված գուտ
եկամուտ
Շղթամներ

	01/01/2017թ. – 31/03/2017թ.	01/01/2016թ. – 31/03/2016թ.
	40,783	52,386
	(57,632)	(34,780)
	(16,849)	17,606



Այլ գործառնություններից


	01/01/2017թ. – 31/03/2017թ.	01/01/2016թ. – 31/03/2016թ.
Առարկայազուրկ մետաղական հաշիվների արք ու վաճառքից ստացված գուտ եկամուտ	(194)	-
Առարկայազուրկ մետաղական հաշիվների վերագնահատումից ստացված գուտ եկամուտ	(5)	-
Ընդամենը	(199)	-
Զուտ եկամուտ առևտրային գործառնություններից	45,574	35,407

6. Այլ գործառնական եկամուտներ

Հազար ՀՀ դրամ

Այլ գործառնական եկամուտներ


	01/01/2017թ. – 31/03/2017թ.	01/01/2016թ. – 31/03/2016թ.
Եկամուտներ ստացված առյժծերից և տուգանքներից	331,764	184,511
Օգուտներ հիմնական միջոցների և այլ գույքի օտարումից	1,222	2,457
Այլ եկամուտներ	56,829	42,569
Ընդամենը	389,815	229,537



7. Արժեզրկման ծախս

Հազար ՀՀ դրամ

	01/01/2017թ. – 31/03/2017թ.	01/01/2016թ. – 31/03/2016թ.
Արժեզրկումից կորուստներ		
Հաճախորդներին տրված վարկեր, փոխառություններ	412,994	1,708,948
Այլ ակտիվներ	23,177	11,434
Երաշխավորություններ և պարտքային ռիսկ պարունակող այլ պայմանական պարտավորություններ	-	1,036
Ընդամենը	436,171	1,721,418




8. Ընդհանուր վարչական ծախսեր

Հազար ՀՀ դրամ

Ընդհանուր վարչական ծախսեր

	01/01/2017թ. – 31/03/2017թ.	01/01/2016թ. – 31/03/2016թ.
Անձնակազմի գծով ծախսեր	601,128	527,542
Հ. մ. և ոչ նյութ ակտիվ աճորտ ծախսեր	126,548	126,501
Գովազդային և ներկայացուցչական ծախսեր	16,911	14,181
Գործատ վարձակալ գծով ծախսեր	40,939	57,670
Կապի և հաղորդի միջոցների գծով ծախսեր	13,819	13,708
Ծախսեր հարկերի և այլ պարտ վճ. գծով	49,412	50,517
Վերանորոգման և պահպ. ծախսեր	50,273	46,810
Գործուղման ծախսեր	5,037	10,676
Անվտանգության գծով ծախսեր	36,423	40,238
Գրասենյակային ծախսեր	7,314	5,566
Աուդիտ և խորհ. ծառ. գծով ծախսեր	9,841	7,043
Այլ վարչական ծախսեր	34,747	26,754
Ընդամենը	992,392	927,206

Բանկի աշխատակիցների միջին քանակը հաշվետու ետանդակում կազմել է 358 (2016թ. 1-ին ետանդակում՝ 404)



9. Այլ գործառնական ծախսեր

Հարց 22 դրամ

Այլ գործառնական ծախսեր

Վճարված տույժեր և տուգանքներ
 Ինկասագիտալի համար կատարված վճարումներ
 Կորուստներ հիմնական միջոցների և այլ գույքի
 օտարումից
 Այլ ծախսեր
 այդ թվում՝ վնասվածքի գործառնականությունների փոփոխություններ

	01/01/2017թ. – 31/03/2017թ.	01/01/2016թ. – 31/03/2016թ.
Վճարված տույժեր և տուգանքներ	2,373	2,816
Ինկասագիտալի համար կատարված վճարումներ	5,772	6,522
Կորուստներ հիմնական միջոցների և այլ գույքի օտարումից	293	2,288
Այլ ծախսեր	73,411	70,899
այդ թվում՝ վնասվածքի գործառնականությունների փոփոխություններ	37,555	31,966
Ընդամենը	81,849	82,525



10. Շահութահարկի գծով ծախսեր

Հազար ՀՀ դրամ

Շահութահարկի գծով ծախս	01/01/2017թ. – 31/03/2017թ.	01/01/2016թ. – 31/03/2016թ.
Ընթացիկ հարկի գծով ծախս	99	-
Հետաձգված հարկի գծով ծախս/(հատուցում)	203,693	-
Ընդամենը	203,792	-

Հայաստանի Հանրապետությունում շահութահարկի դրույքաչափը կազմում է 20% (2016թ.՝ 20%)։ ՀՀ հարկային օրենսդրության և ՖՀՄԱ-ի միջև եղած տարբերությունը մի շարք ակտիվների և պարտավորությունների գծով առաջացնում է ժամանակավոր տարբերություններ ֆինանսական հաշվետվությունների կազման նպատակներով դրանց հաշվեկշռային արժեքների և հարկման բազայի միջև։ Հետաձգված շահութահարկի գումարը հաշվարկվում է 20% հիմնական դրույքաչափը կիրառելով։

11. Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ


Հազար ՀՀ դրամ

Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ	31/03/17թ.	31/03/16թ.
Ժամանակաշրջանի գուտ շահույթ	1,007,000	(1,545,701)
Բաժնետոմսերի քանակը	679,437	273,926
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթ	1.5	(5.6)

12. ՀՀ կենտրոնական բանկում տեղաբաշխված միջոցներ

Հազար ՀՀ դրամ

ՀՀ կենտրոնական բանկում տեղաբաշխված միջոցներ	31/03/17թ.	31/12/16թ.
Թղթակցային հաշիվներ ՀՀ ԿԲ-ում	18,696,934	24,366,895
Դեպոնացված միջոցներ ՀՀ ԿԲ-ում	120,000	320,000
Ավանդներ ՀՀ ԿԲ-ում	-	3,000,778
ՀՀ կենտրոնական բանկում տեղաբաշխված միջոցներ	18,816,934	27,687,673



2017թ. մարտի 31-ի դրությամբ թղթակցային հաշիվները ՀՀ ԿԲ-ում ներառում են նաև ՀՀ բանկային օրենսդրության համաձայն ՀՀ ԿԲ-ում տեղաբաշխված պարտադիր պահուստները, որոնք հաշվարկվում են Բանկի կողմից ներգրավված դրամային որոշ միջոցների 2%-ի և արտարժույթով որոշ միջոցների 18%-ի չափով:

13. Պահանջներ բանկերի նկատմամբ

Համար ՀՀ դրամ

Թղթակցային / ևուսորո / հաշիվներ

	31/03/17թ.	31/12/16թ.
Շրջաններ	1,760,439	481,917
Միջբանկային վարկեր Շրջաններ	1,940,097	-
Այլ պահանջներ բանկերի նկատմամբ Շրջաններ	205	-
Շրջաններ պահանջներ բանկերի նկատմամբ	3,700,741	481,917

Միջբանկային վարկեր տրամադրվել է ՀՀ ռեզիդենտ բանկի, որ ժամկետանց կամ արժեզրկված չէ:



14. Հակադարձ հետզնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ
Հետզնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ

	31/03/17թ.	31/12/16թ.
ՀՀ բանկեր	-	7,532,432
ՀՀ ֆինանսական կազմակերպություններ	2,344,664	190,078
Հետզնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	2,344,664	7,722,510



15. Հաճախորդներին տրված վարկեր

	31/03/2017թ.	(հազ. դրամ) 31/12/2016թ.
Հաճախորդներին տրված վարկեր		
Առևտրային վարկեր		
Վարկեր ընկերություններին	187,687,266	187,790,392
Վարկեր անհատ ձեռնարկատերերին	2,161,199	2,505,815
Ընդամենը	189,848,465	190,296,207
Անուստներին տրված վարկեր		
Սպառողական վարկեր	16,833,656	17,724,424
Լոմբարդային վարկեր	5,708,012	4,832,296
Հիպոթեքային և վերանորոգման վարկեր	3,690,703	3,783,630
Վարկային քարտեր	1,160,291	1,265,119
Գյուղատնտեսական վարկեր	300,739	318,831
Ավտոմեքենայի ձեռք բերման վարկեր	88,372	121,089
Ընդամենը	27,781,773	28,045,389
Ընդամենը վարկեր	217,630,238	218,341,596
Արժեզրկման գծով պահուստ	(909,609)	(714,296)
Ընդամենը զուտ վարկեր	216,720,629	217,627,300
Ընդամենը հաճախորդներին տրված վարկեր և այլ փոխառվածություններ	216,720,629	217,627,300

Հաճախորդներին տրված վարկերի որակական ցուցանիշները

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն հաճախորդներին տրված վարկերի որակական ցուցանիշների վերաբերյալ 2017 թվականի մարտի 31-ի դրությամբ:

	Համախառն վարկեր հազ. դրամ	Արժեզրկում հազ. դրամ	Զուտ վարկեր հազ. դրամ	Համախառն վարկերի արժեզրկում %
Վարկեր ընկերություններին				
Վարկեր, որոնց գծով արժեզրկման առանձին հայտանիշ չի հայտնաբերվել	185,121,206	29,696	185,091,510	
<i>Արժեզրկված վարկեր</i>				

Մինչև 30 օր ժամկետանց	196,557	983	195,574	0.5%
31-90 օր ժամկետանց	279,368	34,217	245,151	12.2%
91-180 օր ժամկետանց	1,693,444	249,364	1,444,080	14.7%
181-270 օր ժամկետանց	200,445	4,679	195,766	2.3%
271 օր և ավել ժամկետանց	196,246	70,397	125,849	35.9%
Ընդամենը արժեզրկված վարկեր	2,566,060	359,640	2,206,420	14.02%
Ընդամենը վարկեր ընկերություններին	187,687,266	389,336	187,297,930	0.21%

Վարկեր անհատ ձեռնարկատերերին

Վարկեր, որոնց գծով արժեզրկման առանձին հայտատիչ չի հայտնաբերվել *Արժեզրկված վարկեր*

Մինչև 30 օր ժամկետանց	101,629	508	101,121	0.5%
31-90 օր ժամկետանց	177,467	887	176,580	0.5%
91-180 օր ժամկետանց	177,533	10,357	167,176	5.8%
181-270 օր ժամկետանց	230,511	14,055	216,456	6.1%
271 օր և ավել ժամկետանց	31,667	15,409	16,258	48.7%
Ընդամենը արժեզրկված վարկեր	718,807	41,216	677,591	5.73%
Ընդամենը վարկեր անհատ ձեռնարկատերերին	2,161,199	48,429	2,112,770	2.24%
Ընդամենը առևտրային վարկեր	189,848,465	437,765	189,410,700	0.23%

	Համախառն վարկեր հազ. դրամ	Արժեզրկում հազ. դրամ	Ցուտ վարկեր հազ. դրամ	Համախառն վարկերի արժեզրկում %
Սպառողական վարկեր				
Ոչ ժամկետանց	14,705,267	242,272	14,462,995	1.6%
Մինչև 30 օր ժամկետանց	507,192	7,445	499,747	1.5%

- 31-90 օր ժամկետանց	566,757	11,717	555,040	2.1%
- 91-180 օր ժամկետանց	446,661	25,215	421,446	5.6%
- 181-270 օր ժամկետանց	607,779	60,974	546,805	10.0%
Շղամենը սպառողական վարկեր	16,833,656	347,623	16,486,033	2.1%
Լումբարդային վարկեր				
- Ոչ ժամկետանց	5,542,607	27,713	5,514,894	0.5%
- Մինչև 30 օր ժամկետանց	42,283	211	42,072	0.5%
- 31-90 օր ժամկետանց	37,665	188	37,477	0.5%
- 91-180 օր ժամկետանց	74,625	373	74,252	0.5%
- 181-270 օր ժամկետանց	10,832	54	10,778	0.5%
Շղամենը լումբարդային վարկեր	5,708,012	28,539	5,679,473	0.5%
Հիփոթեքային և վերանորոգման վարկեր				
- Ոչ ժամկետանց	3,110,538	18,065	3,092,473	0.6%
- Մինչև 30 օր ժամկետանց	7,587	38	7,549	0.5%
- 31-90 օր ժամկետանց	296,763	51112	245,651	17.2%
- 91-180 օր ժամկետանց	99,977	4377	95,600	4.4%
- 181-270 օր ժամկետանց	175,838	879	174,959	0.5%
Շղամենը հիփոթեքային և վերանորոգման վարկեր	3,690,703	74,471	3,616,232	2.0%
Վարկային քարտեր				
- Ոչ ժամկետանց	1,110,217	14,368	1,095,849	1.3%
- Մինչև 30 օր ժամկետանց	7,547	122	7,425	1.6%
- 31-90 օր ժամկետանց	7,050	110	6,940	1.6%
- 91-180 օր ժամկետանց	14,713	3,267	11,446	22.2%
- 181-270 օր ժամկետանց	20,764	335	20,429	1.6%
Շղամենը վարկային քարտեր	1,160,291	18,202	1,142,089	1.6%
Գյուղատնտեսական վարկեր				
- Ոչ ժամկետանց	279,374	1,437	277,937	0.5%

- Մինչև 30 օր ժամկետանց	4,230	24	4,206	0.6%
- 31-90 օր ժամկետանց	9,293	46	9,247	0.5%
- 91-180 օր ժամկետանց	2,053	31	2,022	1.5%
- 181-270 օր ժամկետանց	5,789	44	5,745	0.8%
Շղթամները գույքատեսակային վարկեր	300,739	1,582	299,157	0.5%
Ավտոմեքենայի ձեռք բերման վարկեր				
- Ոչ ժամկետանց	80,431	1,299	79,132	1.6%
- 31-90 օր ժամկետանց	4,081	66	4,015	1.6%
- 181-270 օր ժամկետանց	3,860	62	3,798	1.6%
Շղթամները ավտոմեքենայի ձեռք բերման վարկեր	88,372	1,427	86,945	1.6%
Շղթամները անհատներին տրված վարկեր	27,781,773	471,844	27,309,929	1.7%
Շղթամները հաճախորդներին տրված վարկեր և այլ փոխառություններ	217,630,238	909,609	216,720,629	0.4%

Մտերև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն հաճախորդներին տրված վարկերի որակական ցուցանիշների վերաբերյալ 2016 թվականի դետեմբերի 31-ի դրությամբ:

	Համախառն վարկեր հազ. դրամ	Արժեզրկում հազ. դրամ	Ձուտ վարկեր հազ. դրամ	Համախառն վարկերի արժեզրկում %
Վարկեր ընկերություններին				
Վարկեր, որոնց գծով արժեզրկման առանձին հայտանիշ չի հայտնաբերվել	183,628,215	59,615	183,568,600	-
<i>Արժեզրկված վարկեր</i>				
- Մինչև 30 օր ժամկետանց	1,143,054	6,924	1,136,130	0.6%
- 31-90 օր ժամկետանց	840,702	13,306	827,396	1.6%

- 91-180 օր ժամկետանց	237,123	22,609	214,514	9.5%
- 181-270 օր ժամկետանց	1,941,298	159,845	1,781,453	8.2%
Ընդամենը արժեզրկված վարկեր	<u>4,162,177</u>	<u>202,684</u>	<u>3,959,493</u>	<u>4.87%</u>
Ընդամենը վարկեր ընկերություններին	<u>187,790,392</u>	<u>262,299</u>	<u>187,528,093</u>	<u>0.14%</u>

Վարկեր անհատ ձեռնարկատերերին

Վարկեր, որոնց դեռևս արժեզրկման առանձին հայտանիշ չի հայտնաբերվել
Արժեզրկված վարկեր

- Մինչև 30 օր ժամկետանց	126,037	772	125,265	0.6%
- 31-90 օր ժամկետանց	100,847	601	100,246	0.6%
- 91-180 օր ժամկետանց	174,559	969	173,590	0.6%
- 181-270 օր ժամկետանց	116,033	28,958	87,075	25.0%
- 271 օր և ավել ժամկետանց	15,946	7,514	8,432	47.1%
Ընդամենը արժեզրկված վարկեր	<u>533,422</u>	<u>38,814</u>	<u>494,608</u>	<u>7.28%</u>
Ընդամենը վարկեր անհատ ձեռնարկատերերին	<u>2,505,815</u>	<u>50,871</u>	<u>2,454,944</u>	<u>2.03%</u>
Ընդամենը առևտրային վարկեր	<u>190,296,207</u>	<u>313,170</u>	<u>189,983,037</u>	<u>0.16%</u>

Համախառն
վարկեր
հազ. դրամ

Արժեզրկում
հազ. դրամ

Ցուտ
վարկեր
հազ. դրամ

Համախառն
վարկերի
արժեզրկում
%

Սպառողական վարկեր

- Ոչ ժամկետանց	16,112,687	244,721	15,867,966	1.5%
- Մինչև 30 օր ժամկետանց	471,397	7,323	464,074	1.6%
- 31-90 օր ժամկետանց	452,592	7,254	445,338	1.6%
- 91-180 օր ժամկետանց	446,907	38,772	408,135	8.7%
- 181-270 օր ժամկետանց	240,841	31,804	209,037	13.2%
Ընդամենը սպառողական վարկեր	<u>17,724,424</u>	<u>329,874</u>	<u>17,394,550</u>	<u>1.9%</u>
Լուծարարային վարկեր				

• Ոչ ժամկետանց	4,712,657	23,563	4,689,094	0.5%
• Մինչև 30 օր ժամկետանց	58,178	291	57,887	0.5%
• 31-90 օր ժամկետանց	50,528	253	50,275	0.5%
• 91-180 օր ժամկետանց	7,495	37	7,458	0.5%
• 181-270 օր ժամկետանց	3,438	17	3,421	0.5%
Ընդամենը լուծարարային վարկեր Հիփոթեքային և վերանորոգման վարկեր	4,832,296	24,161	4,808,135	0.5%
• Ոչ ժամկետանց	3,487,005	23,146	3,463,859	0.7%
• Մինչև 30 օր ժամկետանց	23,250	283	22,967	1.2%
• 31-90 օր ժամկետանց	78,950	792	78,158	1.0%
• 91-180 օր ժամկետանց	168,761	844	167,917	0.5%
• 181-270 օր ժամկետանց	25,664	365	25,299	1.4%
Ընդամենը հիփոթեքային և վերանորոգման վարկեր Վարկային քարտեր	3,783,630	25,430	3,758,200	0.7%
• Ոչ ժամկետանց	1,132,978	14,411	1,118,567	1.3%
• Մինչև 30 օր ժամկետանց	38,694	901	37,793	2.3%
• 31-90 օր ժամկետանց	45,517	1,184	44,333	2.6%
• 91-180 օր ժամկետանց	29,573	979	28,594	3.3%
• 181-270 օր ժամկետանց	18,357	230	18,127	1.3%
Ընդամենը վարկային քարտեր Գյուղատնտեսական վարկեր	1,265,119	17,705	1,247,414	1.4%
• Ոչ ժամկետանց	293,603	2,039	291,564	0.7%
• Մինչև 30 օր ժամկետանց	1,336	19	1,317	1.4%
• 31-90 օր ժամկետանց	7,858	50	7,808	0.6%
• 91-180 օր ժամկետանց	5,423	37	5,386	0.7%
• 181-270 օր ժամկետանց	10,611	89	10,522	0.8%
Ընդամենը գյուղատնտեսական վարկեր Ավտոմեքենայի ձեռք բերման վարկեր	318,831	2,234	316,597	0.7%

Ոչ ժամկետանց	114,623	1,630	112,993	1.4%
91-180 օր ժամկետանց	4,087	58	4,029	1.4%
181-270 օր ժամկետանց	2,379	34	2,345	1.4%
Շրջաններ ավտոմեքենայի ձեռք բերման վարկեր	121,089	1,722	119,367	1.4%
Շրջաններ անհատներին տրված վարկեր	28,045,389	401,126	27,644,263	1.4%

Հաճախորդներին տրված վարկերի վերլուծությունը ըստ տևողության ճյուղերի

	31.03.2017թ. հազ. դրամ	31.12.2016թ. հազ. դրամ
Եինարարություն	611,980	648,060
Էներգետիկայի ոլորտ	994,429	997,856
Առևտուր	3,316,276	5,615,571
Արդյունաբերություն	3,284,467	6,345,916
Գյուղատնտեսություն	262,282	262,464
Հանրային ծառայություններ	97,516	143,558
Տրանսպորտ	685,266	596,140
Հանրապրդյունաբերություն/մետալուրգիա	-	261,819
Այլ	180,596,249	175,424,823
Անհատներին տրված վարկեր	27,781,773	28,045,389
	217,630,238	218,341,596
Արժեզրկման գծով պահուստ	(909,609)	(714,296)
	216,720,629	217,627,300


Վարկերի գծով արժեզրկման կորուստների պահուստի շարժը հունյալն է

	31/03/17թ. հազ. դրամ	31/03/16թ. հազ. դրամ
<i>Սկզբնական մնացորդ</i>	714,296	1,728,024
<i>Տարվա ծախս(հակադարձում)</i>	412,994	1,708,948
<i>Հետհաշվեկշիռ (դուրս գրում)/վերադարձ</i>	(217,681)	(911,551)
<i>Վերջնական մնացորդ մնացորդ</i>	909,609	2,525,421

	<i>Իրավաբանական անձ</i>	<i>Անհատ ձևերից</i>	<i>Անհատներ</i>	31.03.2017թ. հազ. դրամ
<i>Անհատական արժեզրկում խմբային արժեզրկում</i>	357,782	38,980	146,599	543,361
<i>Ընդամենը</i>	389,336	48,429	471,844	909,609

16. Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ

	31/03/17թ. հազ. դրամ	31/12/16թ. հազ. դրամ
- Կառավարության պարտատոմսեր		
22 կառավարության արժեթղթեր	28,918,222	16,655,422
Ներդրումներ սեփական կապիտալում		
Ոչ պետական բաժնային արժեթղթեր	1,854,035	1,659,146
Ընդամենը	30,772,257	18,314,568
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների ենթաակտիվ կորուստների պահուստ	-	(795)
Ընդամենը վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	30,772,257	18,313,773



17. Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ

	<u>31/03/17թ. հազ. դրամ</u>	<u>31/12/16թ. հազ. դրամ</u>
<i>Բանկի կողմից պահվող</i>		
- Իրավաբանական անձանց պարտատոմսեր		
Իրավաբանական անձանց պարտատոմսեր	357,524	353,392
Շղթամներ իրավաբանական անձանց պարտատոմսեր	357,524	353,392
Շղթամներ մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ	<u>357,524</u>	<u>353,392</u>



18. Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ

Հոդվածի անվանումը	Շեքեր	Համակ. և կապի միջոցներ	Փոխադրամիջոցներ	Այլ հիմն.	Վարձակ հիմն միջոցով կապ. ներդ.	Շղթամներ
Սկզբնական արժեք						
Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի վերջում (31.12.15)	4,324,745	1,141,491	88,617	825,081	399,057	6,778,991
Ավելացում		20,379	5,146	34,682	57,409	117,616
Ըտարում		(70,100)		(82,780)	(271,430)	(424,310)

Մնացորդ նախորդ ժամանակաշրջանի սկզբում (31.12.16)	4,324,745	1,091,770	93,763	776,983	185,036	6,472,297
Ավելացում		4,411		5,865		10,276
Օտարում		(48)	(16,835)			(16,883)
Մնացորդ հաշվետու ժամանակաշրջանի վերջում (31.03.17)	4,324,745	1,096,133	76,928	782,848	185,036	6,465,690
Նույնակված մաշվածություն						
Մնացորդ նախորդ ժամանակաշրջանի վերջում (31.12.15)	622,763	671,897	68,663	430,828	255,957	2,050,108
Ավելացում	80,748	101,126	6,437	61,547	8,870	258,728
Օտարում		(63,798)		(76,392)	(229,301)	(359,491)
Մնացորդ նախորդ ժամանակաշրջանի վերջում (31.12.16)	703,511	709,225	75,100	415,983	35,526	1,939,345
Ավելացում	22,099	26,477	1,028	15,754	2,369	67,727
Օտարում		(34)	(16,835)			(16,869)
Մնացորդ հաշվետու ժամանակաշրջանի վերջում (31.03.17)	725,610	735,668	59,293	431,737	37,895	1,990,203
Ձուռ հաշվեկշռային արժեք						
հաշվետու ժամանակաշրջանի վերջում	3,599,135	360,465	17,635	351,111	147,141	4,475,487
նախորդ հաշվետու ժամանակաշրջանի վերջում	3,621,234	382,545	18,663	361,000	149,510	4,532,952

Այլ կապակցական ակտիվներ

	Համակարգչային իրավունքներ	Լիցենզիաներ և վստահագրեր	Այլ ոչ կապակցական ակտիվներ	Ընդամենը
Մեզընտանեկան արժեք				
Մնացորդ նախորդ ժամանակաշրջանի վերջում (31.12.15)	264,030	179,164	56,876	500,070
Ավելացում	36,229	18,295		54,524
Օտարում	(87,326)	(20,968)		(108,294)
Մնացորդ հաշվետու ժամանակաշրջանի վերջում (31.12.16)	212,933	176,491	56,876	446,300
Ավելացում	4,600	18,663		23,263
Օտարում				

Մնացորդը հաշվառու ժամանակաշրջանի վերջում (31.03.17)	217,533	195,154	56,876	469,563
Կուտակված մաշվածություն				
Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի վերջում (31.12.15)	87,482	93,778	50,801	202,595
Մասնատումներ	13,561	33,498	4,826	51,885
*Ներադասակարգում	(63,049)	(28,082)		(91,131)
Մնացորդը հաշվառու ժամանակաշրջանի վերջում (31.12.16)	37,994	99,194	55,627	192,815
Ավելացում	44,339	13,233	1,249	58,821
Ժառայում				
Մնացորդը հաշվառու ժամանակաշրջանի վերջում (31.03.17)	82,333	112,427	56,876	251,636
Ցուտ հաշվեկշռային արժեք				
Հաշվառու ժամանակաշրջանի վերջում	135,200	82,727	-	217,927
Նախորդ հաշվառու ժամանակաշրջանի վերջում	174,939	77,297	1,249	253,485

Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ



31/03/16

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով, բացառությամբ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների և վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների, որոնք ներկայացված են իրական արժեքով ու վերագնահատված արժեքով հաշվառվող շենքերի:

Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Բանկի ֆունկցիոնալ արժույթն է հանդիսանում ՀՀ դրամը («դրամ»), որը, լինելով Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը, արտացոլում է Բանկի գործունեության հիմքում ընկած իրադարձությունների և հանգամանքների տնտեսական էությունը:

Դրամը հանդիսանում է նաև այս ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը:

Ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ:

2. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Ստորև ներկայացվող հաշվապահական հաշվառման քաղաքականությունը հետևողականորեն կիրառվում է այս ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար:

Արտարժույթով գործարքներ

Արտարժույթով իրականացված գործարքները փոխարկվում են դրամի գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով:

Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները վերափոխարկվում են դրամի այդ օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Դրամային հոդվածների գծով արտարժույթով իրականացված գործարքություններից առաջացած օգուտը կամ վնասն իրենից ներկայացնում է տարբերություն ժամանակաշրջանի սկզբում ֆունկցիոնալ արժույթով արտահայտված, արդյունավետ տոկոսադրույքի ու ժամանակաշրջանի վճարումների ճշգրտումով

ամորտիզացված արժեքի և հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործող փոխարժեքով փոխարկված ֆունկցիոնալ արժույթով արտահայտված ամորտիզացված արժեքի միջև:

Արտարժույթով արտահայտված ոչ դրամային ակտիվները և պարտավորությունները, որոնք չափվում են իրական արժեքով, վերափոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի իրական արժեքի որոշման ամսաթվի դրությամբ սահմանված փոխարժեքով: Սկզբնական արժեքով չափվող, արտարժույթով արտահայտված ոչ դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով:

Վերափոխարկման արդյունքում առաջացող արտարժույթային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում, բացառությամբ վաճառքի համար մատչելի բաժնային գործիքների վերափոխարկման արդյունքում առաջացող տարբերությունների, բացի այն դեպքերից, երբ տարբերությունն առաջանում է արժեզրկման պատճառով, որի դեպքում այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված արտարժույթային տարբերությունները վերադասակարգվում են որպես շահույթ կամ վնաս:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ են համարվում կանխիկ թղթադրամները և մետաղադրամները, ՀՀ ԿԲ-ում և այլ բանկերում պահվող սահմանափակումներ չունեցող մնացորդները (նոստրո հաշիվներ) և բարձր իրացվելիությամբ ֆինանսական ակտիվները, որոնց սկզբնական մարման ժամկետը կազմում է մինչև երեք ամիս, որոնք ենթարկվում են իրական արժեքի փոփոխման ոչ էական ռիսկի ու օգտագործվում են Բանկի կողմից կարճաժամկետ պարտավորվածությունների կատարման համար: ՀՀ ԿԲ-ում պահվող նվազագույն պահուստային ավանդը չի համարվում դրամական միջոցների համարժեք, քանի որ դրանից միջոցների երազրույթը սահմանափակված է: Դրամական միջոցները և դրանց համարժեքները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

Ֆինանսական գործիքներ

Դասակարգում

Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքները իրենցից ներկայացնում են ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ, որոնք՝

- հիմնականում ձևեր են բերվել կամ առաջացել են մոտ ապագայում վաճառելու կամ հետ գնելու ելքատակով,
- կազմում են միասին կառավարվող որոշված ֆինանսական գործիքների պորտֆելի մաս, որի համար առկա է վկայություն կարճ ժամկետում շահույթ ստանալու արդիական փաստացի ուղիների վերաբերյալ,
- հանդիսանում են ածանցյալ ֆինանսական գործիք (բացառությամբ ֆինանսական երաշխավորության պայմանագիր հանդիսացող ածանցյալ գործիքի կամ այն ածանցյալ գործիքի, որը նախատեսված է և հանդիսանում է արդյունավետ հեջավորման գործիք), կամ
- սկզբնական ճանաչման պահին Բանկի կողմից նախատեսվում են որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ:

Բանկը ֆինանսական ակտիվները և պարտավորությունները նախատեսում է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ստորև ներկայացված պայմաններից մեկի բավարարման դեպքում.

- ակտիվները կամ պարտավորությունները կառավարվում, գնահատվում և ներկայացվում են իրական արժեքի հիմունքով,
- նախատեսումը վերացնում կամ էականորեն նվազեցնում է հաշվապահական անհամապատասխանությունները, որոնք կառաջանային այլ հանգամանքներում, կամ

- ակտիվը կամ պարտավորությունը ներառում է պարունակվող ածանցյալ գործիք, որը էականորեն ձևափոխում է դրամական միջոցների հոսքերը, որոնք այլապես կապահանջվեին պայմանագրի համաձայն:

Ձուտ ստացվելիք դիրքում գտնվող (դրական իրական արժեք) առևտրական նպատակներով պահվող բոլոր ածանցյալ գործիքները, ինչպես նաև ձեռք բերված օպցիոնները, ներկայացվում են որպես ակտիվ: Ձուտ վճարվելիք դիրքում գտնվող (բացասական իրական արժեք) առևտրական նպատակներով պահվող բոլոր ածանցյալ գործիքները, ինչպես նաև տրամադրված օպցիոնները, ներկայացվում են որպես պարտավորություն:

Ֆինանսական գործիքների համապատասխան դասակարգումը ղեկավարությունը որոշում է սկզբնական ճանաչման պահին: Ածանցյալ ֆինանսական գործիքները և որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ նախատեսված գործիքները սկզբնական ճանաչման պահին չեն վերդասակարգվում շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների դասից: Ֆինանսական ակտիվը, որը համապատասխանում է վարկերի և դեբիտորական պարտքերի սահմանմանը, կարող է վերադասակարգվել շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների կամ վաճառքի համար մատչելի ֆինանսական գործիքների դասից, եթե Բանկը մտադիր է և ի վիճակի է պահել այդ գործիքները մոտ ապագայում կամ մինչև մարման ժամկետը: Այլ ֆինանսական գործիքները կարող են վերադասակարգվել շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների դասից միայն հազվադեպ հանգամանքներում: Հազվադեպ հանգամանքներն ի հայտ են գալիս եզակի արտասովոր դեպքի արդյունքում, երբ գրեթե անհավանական է, որ այն կրկին տեղի կունենա մոտ ապագայում:

Տրամադրված վարկերը և դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներն են, որոնք գնանշված չեն գործող շուկայում, բացառությամբ այն գործիքների:

- որոնց Բանկը մտադիր է անմիջապես կամ կարճ ժամկետում վաճառել,
- որոնց Բանկը սկզբնական ճանաչման պահին նախատեսում է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող,
- որոնց Բանկը սկզբնական ճանաչման պահին նախատեսում է որպես վաճառքի համար մատչելի, կամ
- որոնց գծով Բանկը չի փոխհատուցի իր բոլոր սկզբնական ներդրումները՝ վճարունակության անկարողությունից տարբեր այլ պատճառներով:

Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները ֆիքսված կամ որոշելի վճարումներով և ֆիքսված մարման ժամկետով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներն են, որոնք Բանկը տրամադրված է և հնարավորություն ունի պահել մինչև մարման ժամկետի լրանալը, բացառությամբ այն ներդրումների:

- որոնց սկզբնական ճանաչման պահին Բանկը նախատեսում է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող,
- որոնց Բանկը նախատեսում է որպես վաճառքի համար մատչելի, կամ
- որոնք համապատասխանում են վարկերի ու դեբիտորական պարտքերի սահմանմանը:

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներն իրենցից ներկայացնում են այնպիսի ֆինանսական ակտիվներ, որոնք նախատեսված են որպես վաճառքի համար մատչելի կամ դասակարգված չեն որպես վարկեր ու դեբիտորական պարտքեր, մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ կամ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ:

Ճանաչում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները ճանաչվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ Բանկը դառնում է գործիքի սպայմանագրային կողմ: Ֆինանսական ակտիվների կանոնավոր կերպով գնումները հաշվառվում են այդ ու վաճառքի ամսաթվի դրությամբ:

Չափում

Ֆինանսական ակտիվի կամ պարտավորության սկզբնական չափումը տեղի է ունենում իրական արժեքով: Եանույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների խմբում չդասակարգված ֆինանսական ակտիվների կամ պարտավորությունների դեպքում իրական արժեքին գումարվում են գործարքի հետ կապված ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը:

Սկզբնական ճանաչումից հետո ֆինանսական ակտիվները, ներառյալ ակտիվ համարվող անանցյալ գործիքները, չափվում են իրական արժեքով առանց նվազեցնելու գործարքի հետ կապված ծախսումները, որոնք կարող են առաջանալ վաճառքի կամ այլ օտարման հետ կապված, բացառությամբ

- վարկերի ու դեբիտորական պարտքերի, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը,
- միջև մարման ժամկետը պահվող ներդրումների, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը, և
- բաժնային գործիքներում ներդրումների, որոնք գործող շուկայում չունեն գնահատվող շուկայական գին, որոնց իրական արժեքները հնարավոր չէ արժանահավաստորեն չափել և որոնք չափվում են սկզբնական արժեքով: Բոլոր ֆինանսական պարտավորությունները չափվում են ամորտիզացված արժեքով, բացառությամբ այն ֆինանսական պարտավորությունների, որոնք նախատեսված են որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող և այն ֆինանսական պարտավորությունների, որոնք առաջանում են, երբ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվի փոխանցումը չի բավարարում ապաճանաչման պահանջները:

Ամորտիզացված արժեք

Ֆինանսական ակտիվի կամ պարտավորության ամորտիզացված արժեքն իրենից ներկայացնում է այն գումարը, որով ֆինանսական ակտիվը կամ պարտավորությունը չափվում է սկզբնական ճանաչման պահին հանած սպառ գումարի վճարումները, գումարած կամ հանած սկզբնապես ճանաչված գումարի և մարման պահին գումարի տարբերության կուտակված ամորտիզացիան, որը հաշվարկվել է կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ հանած արժեզրկումից կորուստը: Հավելյալձարները և գեղչերը, ներառյալ գործարքի հետ կապված սկզբնական ծախսումները, ընդգրկված են համապատասխան գործիքի հաշվեկշռային արժեքում և ամորտիզացվում են՝ կիրառելով գործիքի արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Իրական արժեքի չափման սկզբունքներ

Իրական արժեքն այն գինն է, որը շուկայի մասնակիցների միջև սովորական գործարքում կստացվեր ակտիվի վաճառքից կամ կվճարվեր պարտավորության փոխանցման դիմաց չափման ամսաթվի դրությամբ հիմնական շուկայում կամ, վերջինիսի բացակայության դեպքում, ամենաբարենպաստ շուկայում, որին մուտքի հնարավորություն ունի Բանկը կշված ամսաթվի դրությամբ: Պարտավորության իրական արժեքն արտացոլում է վերջինիս չկատարման ռիսկը:

Չնարավորության դեպքում, Բանկը չափում է գործիքի իրական արժեքը՝ կիրառելով այդ գործիքի համար ակտիվ շուկայում գնանշվող գները: Շուկան համարվում է ակտիվ, եթե ակտիվի կամ պարտավորության գծով գործարքները տեղի են ունենում բավարար հաճախականությամբ և բավարար ծավալով՝ շարունակական հիմունքով գնաչին տեղեկատվություն արամաղբելու համար: Ակտիվ շուկայում գնանշվող գնի բացակայության դեպքում, Բանկը կիրառում է գնահատման մեթոդներ դիտարկելի տվյալների օգտագործումն առավելագույնի և ոչ դիտարկելի տվյալների օգտագործումը նվազագույնի հասցնելու նպատակով: Ընտրված գնահատման մեթոդը ներառում է բոլոր այն գործոնները, որոնք շուկայի մասնակիցները հաշվի կառնեին նման հանգամանքներում:

Սկզբնական ճանաչման պահին ֆինանսական գործիքի իրական արժեքի լավագույն ապացույցը սովորաբար գործարքի գինն է, այսինքն՝ արված կամ ստացված հառուցման իրական արժեքը: Եթե Բանկը որոշում է, որ սկզբնական ճանաչման պահին իրական արժեքը տարբերվում է գործարքի գնից, և իրական արժեքը չի հիմնավորվում է ակտիվ շուկայում նմանատիպ ակտիվի կամ պարտավորության համար գնանշվող գնով կամ հիմնված չէ գնահատման այնպիսի մեթոդի վրա, որն օգտագործում է միայն դիտարկելի տվյալները, ապա ֆինանսական գործիքի սկզբնական չափումն իրականացվում է իրական արժեքով՝ ճշգրտված սկզբնական ճանաչման պահին իրական արժեքի և գործարքի գնի միջև տարբերության հետաձգումով: Հետագայում, տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում համապատասխան հիմունքով՝ գործիքի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում, սակայն ոչ ուշ այն պահից, երբ գնահատումն ամբողջովին հիմնավորվում է շուկայի դիտարկելի տվյալներով կամ գործարքն ավարտվում է:

Եթե իրական արժեքով չափվող ակտիվը կամ պարտավորությունն ունի պահանջարկի և առաջարկի գին, ապա Բանկը չափում է ակտիվները և երկար դիրքերը պահանջարկի գնով, իսկ պարտավորությունները և կարճ դիրքերը՝ առաջարկի գնով:

Բանկը ճանաչում է իրական արժեքի հիերարխիայի մակարդակների միջև տեղի ունեցող փոխանցումներն այն հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ, որի ընթացքում կատարվել են այդ փոփոխությունները:

Հետագա չափման հետևանքով առաջացած շահույթ և վնաս

Ֆինանսական ակտիվների կամ պարտավորությունների իրական արժեքի փոփոխությունից առաջացած շահույթը կամ վնասը ճանաչվում է հետևյալ կերպ.

- շահույթում կամ վնասում ճանաչվում է այն ֆինանսական գործիքի գծով շահույթը կամ վնասը, որը դասակարգված է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող,
- վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների գծով շահույթը կամ վնասը ճանաչվում է սեփական կապիտալում որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունք (բացառությամբ արժեզրկումից կորուստների և վաճառքի համար մասշնչի պարտալիս ֆինանսական գործիքների գծով փոխարժեքային տարբերություններից առաջացած շահույթի և վնասի), մինչև որ նշված ակտիվն ապաճանաչվում է և այդ պահին կուտակված շահույթը կամ վնասը, որը նախկինում ճանաչվել էր սեփական կապիտալում, ճանաչվում է շահույթում կամ վնասում: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվի գծով սոկոսները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կիրառելով արդյունավետ սոկոսադրույքի մեթոդը:

Անորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գծով շահույթը կամ վնասը ճանաչվում է շահույթում կամ վնասում, երբ ֆինանսական ակտիվը կամ պարտավորությունն ապաճանաչվում է կամ արժեզրկվում է, ինչպես նաև անորտիզացիայի հաշվարկի ընթացքում:

Ապաճանաչում

Բանկն ապաճանաչում է ֆինանսական ակտիվն այն դեպքում, երբ ֆինանսական ակտիվից ստաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ երբ փոխանցում է ֆինանսական ակտիվն այնպիսի գործարքում, որում փոխանցվում են ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու հատույցները, կամ որում Բանկը ոչ պահպանում, ոչ էլ փոխանցում է սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու հատույցները և չի պահպանում ֆինանսական ակտիվի նկատմամբ վերահսկողությունը: Ապաճանաչման պայմանները բավարարող փոխանցված ֆինանսական ակտիվի գծով տոկոսները, որոնք ստաջացել կամ պահպանվել են Բանկի կողմից, ճանաչվում են որպես առանձին ակտիվ կամ պարտավորություն ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում: Բանկն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ պայմանագրային պարտականությունները կատարվում են, կամ չեղյալ են համարվում, կամ ուժը կորցնում են:

Բանկը կատարում է գործարքներ, որոնցով փոխանցում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված ակտիվները, սակայն պահպանում է փոխանցված ակտիվների սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու հատույցները կամ դրանց մի մասը: Եթե ակտիվի սեփականության հետ կապված բոլոր կամ ըստ էության բոլոր ռիսկերն ու հատույցները պահպանվում են, ապա փոխանցված ակտիվները չեն ապաճանաչվում:

Գործարքներում, որոնցում Բանկը ոչ փոխանցում է, ոչ էլ պահպանում է ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, այն ապաճանաչում է ակտիվը, եթե կորցնում է դրա նկատմամբ վերահսկողությունը:

Փոխանցումների այն գործարքներում, որոնցում Բանկը պահպանում է ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, Բանկը շարունակում է ճանաչել ֆինանսական ակտիվը այնքանով, որքանով շարունակվում է իր ներգրավվածությունը ֆինանսական ակտիվի մեջ, որն այն չափն է, որով նա ենթարկված է փոխանցված ակտիվի արժեքի փոփոխությունների ազդեցությանը:

Եթե Բանկը ձեռք է բերում իր սեփական պարտքը, ապա այն դուրս է բերվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունից, և պարտավորության հաշվեկշռային արժեքի ու վճարված հատուցման տարբերությունը ներառվում է պարտքի ժամկետից շուտ մաքման արդյունքում առաջացած շահույթում կամ վնասում:

Բանկը դուրս է գրում անհավարպարելի համարվող ակտիվները:

Հետզնման և հակադարձ հետզնման պայմանագրեր

Վաճառքի և հետզնման պայմանագրերով ("ոճպո") վաճառված արժեթղթերը հաշվառվում են որպես գրավով ապահովված ֆինանսավորման գործարքներ, որի դեպքում արժեթղթերն արտացոլվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, իսկ պայմանագրային կողմի պարտավորությունը ներառվում է հետզնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարների կազմում: Վաճառքի և հետզնման գների տարբերությունը դիտվում է որպես տոկոսային ծախս և ճանաչվում է շահույթում կամ վնասում ոճպո պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Վերավաճառքի նպատակով հակադարձ հետզնման պայմանագրերով ("հակադարձ ոճպո") ստացվելիք գումարները գրանցվում են որպես հակադարձ հետզնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ: Ձեռքբերման և վերավաճառքի գների տարբերությունը դիտվում է որպես տոկոսային եկամուտ և ճանաչվում է շահույթում կամ վնասում հակադարձ հետզնման պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Եթե հետադարձ վաճառք նախատեսող պայմանագրի շրջանակներում գնված ակտիվները վաճառվում են երրորդ անձանց, ապա արժեթղթերը վերագործակցվում պարտավորությունն արտացոլվում է որպես անտրական նպատակներով պահվող պարտավորություն և չափվում է իրական արժեքով:

Ածանցյալ ֆինանսական գործիքներ

Ածանցյալ ֆինանսական գործիքները ներառում են սվուպերը, ֆորվարդները, ֆուչերները, տոկոսադրույքների, արտարժույթների փոխարժեքների, թանկարժեք մետաղների, բորսաներում շրջանառվող օպցիոնները, ինչպես նաև այս գործիքների ցանկացած համակցությունը:

Ածանցյալ գործիքների սկզբնական ճանաչումն իրականացվում է ածանցյալ գործիքի պայմանագրի կնքման օրը գործող իրական արժեքով: Հետագայում ածանցյալ գործիքները վերաչափվում են իրական արժեքով: Բոլոր ածանցյալ գործիքները հաշվառվում են որպես ակտիվ՝ դրական իրական արժեքի դեպքում և որպես պարտավորություն՝ բացասական իրական արժեքի դեպքում:

Ածանցյալ գործիքների իրական արժեքի փոփոխությունները ճանաչվում են անմիջապես շահույթում կամ վնասում:

Թեև Բանկն ածանցյալ գործիքների առև ու վաճառքն իրականացնում է ռիսկի հեջավորման նպատակով, այս գործիքները չեն համապատասխանում հեջի հաշվառման պահանջներին:

Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են՝ ֆինանսական միճակի մասին հաշվետվությունում ներկայացվելով զուտ գումարով, միայն այն դեպքում, երբ Բանկն ունի ճանաչված գումարները հաշվանցելու ներկայումս իրագործելի իրավաբանորեն ամրագրված իրավունք, ինչպես նաև հաշվարկը զուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն:

Հիմնական միջոցներ

Սեփական ակտիվներ

Հիմնական միջոցների միավորները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները, բացառությամբ շենքերի, որոնք հաշվառվում են վերագնահատված արժեքով, ինչպես ներկայացված է ստորև:

Երբ հիմնական միջոցի միավորը բաղկացած է օգտակար ծառայության տարրեր ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, այդ բաղկացուցիչները հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ:

Վերագնահատում

Շենքերը ներթափանցում են վերագնահատման կանոնավոր հիմունքով: Վերագնահատման հաճախականությունը կախված է վերագնահատման ենթակշիռների իրական արժեքների շարժից: Երբ շենքի հաշվեկշռային արժեքը վերագնահատման հետևանքով աճում է, աճը ճանաչվում է որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունք: Սակայն եթե այդ աճը վերականգնում է նույն ակտիվի շահույթում կամ վնասում ճանաչված նախկին վերագնահատումների արդյունքում առաջացած նվազումը, ապա այն ճանաչվում է շահույթում կամ վնասում: Երբ շենքի հաշվեկշռային արժեքը վերագնահատման հետևանքով նվազում է, նվազումը ճանաչվում է շահույթում կամ վնասում: Սակայն եթե այդ նվազումը վերականգնում է նույն ակտիվի սեփական կապիտալում որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունք ճանաչված նախկին վերագնահատումների արդյունքում առաջացած աճը, ապա այն ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում:

Մաշվածություն

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը առանձին ակտիվների օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է հիմնական միջոցի ձեռք բերման պահից, իսկ սեփական ուժերով կառուցված ակտիվների դեպքում՝ վերջիններս կառուցումն ավարտելու և շահագործման հանձնելու պահից: Հողի գծով մաշվածություն չի հաշվարկվում:

Օգտակար ծառայության գնահատված ժամկետները հետևյալն են.

շենքեր	50 տարի
փորձակալված գույքի բարեկարգում	20 տարի
համակարգիչներ և կապի սարքավորումներ	4-10 տարի
փոխադրամիջոցներ	10 տարի
անտեսական գույք	10 տարի

Ոչ նյութական ակտիվներ

Ձեռք բերված ոչ նյութական ակտիվները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հսկած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Համակարգչային ծրագրերի լիցենզիաների ձեռքբերման ծախսերը կապիտալացվում են որպես առանձին ծրագրի ձեռքբերման և ներդրման ծախսեր:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության գնահատված ժամկետը կազմում է 10 տարի:

Արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Բանկը գնահատում է, թե արդյոք առկա է անկողմնակալ վկայություն ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական ակտիվների խմբի արժեզրկված լինելու մասին: Նման վկայության առկաության դեպքում, Բանկը որոշում է արժեզրկումից կորստի գումարը:

Ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական ակտիվների խումբն արժեզրկվում է, և արժեզրկումից կորուստներ ճանաչվում են այն և միայն այն դեպքում, երբ առկա է անկողմնակալ վկայություն ֆինանսական ակտիվի սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ ավելի դեպքերի արդյունք հանդիսացող արժեզրկման մասին (կորստի դեպք), և այդ դեպքը (կամ դեպքերը) ազդեցություն է ունեցել ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական ակտիվների խմբի գծով դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերի վրա, որոնք ենթադրվում է արժանահավաստորեն գնահատել:

Ֆինանսական ակտիվների արժեզրկման անկողմնակալ վկայությունը կարող է ներառել պարտավորությունների չկատարումը կամ վճարումների հետաձգումը վարկառուի կողմից, վարկային պայմանագրի պայմանների խախտումները վարկառուի կողմից, ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական ակտիվների խմբի պայմանների այնպիսի վերանայումը, որը Բանկն այլ հանգամանքներում չէր դիտարկի, վարկառուի կամ թաղարկչոյի սնանկացման հայտանիշները, արժեթղթի համար գործող շուկայի վերացումը, գրավի արժեքի նվազումը կամ ակտիվների խմբին վերաբերող այլ դիտարկելի տվյալները, ինչպիսիք են խմբի կազմի մեջ մտնող վարկառուների վճարունակության վատթարացումը, կամ տվյալ խմբի կազմի մեջ մտնող

վարկառուների կողմից պարտականությունների չկատարման հետ փոխկապակցված տնտեսական պայմանների փոփոխությունը:

Բացի այդ, վաճառքի համար մատչելի բաժնային արժեքը երբեք չի կարողանում իր սկզբնական արժեքից նշանակալի կամ տևողական նվազումը նույնպես հանդիսանում է արժեզրկման անկողմնակալ վկայություն:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները հիմնականում ներառում են վարկերը և այլ դեբիտորական պարտքերը («վարկեր և դեբիտորական պարտքեր»): Բանկը վերանայում է իր վարկերը և դեբիտորական պարտքերը՝ արժեզրկումը կանոնավոր հիմունքով գնահատելու նպատակով:

Բանկը նախ գնահատում է, թե արդյոք գոյություն ունի արժեզրկման անկողմնակալ վկայություն այն առանձին վարկերի ու դեբիտորական պարտքերի գծով, որոնք առանձին վերցված նշանակալի են, և ապա առանձին կամ հավաքական հիմունքով՝ այն վարկերի ու դեբիտորական պարտքերի գծով, որոնք առանձին վերցված նշանակալի չեն: Եթե Բանկը որոշում է, որ առանձին գնահատված վարկի կամ դեբիտորական պարտքի գծով լինի այն նշանակալի կամ ոչ նշանակալի, արժեզրկման անկողմնակալ վկայություն չկա, ապա այն ներառում է այդ վարկը կամ դեբիտորական պարտքը վարկային ռիսկի համաձայն բնութագրերով վարկերի և դեբիտորական պարտքերի խմբում և դրանք հավաքական հիմունքով գնահատում արժեզրկման տեսանկյունից: Այն վարկերը և դեբիտորական պարտքերը, որոնք առանձին են գնահատվում արժեզրկման տեսանկյունից, և որոնց գծով արժեզրկումից կորուստը ճանաչվում կամ շարունակվում է ճանաչվել, չեն ներառվում արժեզրկման հավաքական հիմունքով գնահատման մեջ:

Եթե առկա է վարկի կամ դեբիտորական պարտքի գծով արժեզրկումից կորստի անկողմնակալ վկայություն, ապա կորստի գումարը չափվում է որպես վարկի կամ դեբիտորական պարտքի հաշվեկշռային արժեքի և այդ վարկի կամ դեբիտորական պարտքի սկզբնական արդյունավետ տոկոսադրույթով գնված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի, ներառյալ երաշխիքների գծով ստացվելիք գումարների և դրավի ներկա արժեքի միջև տարբերությունը: Պայմանագրով նախատեսված դրամական միջոցների հոսքերը և նախկին փորձի վրա հիմնված վնասները, որոնց գծով ներկա տնտեսական պայմաններն արտացոլող դիտարկելի տվյալների հիման վրա կատարվել են ճշգրտումներ, հանդիսանում են դրամական միջոցների ակնկալվող հոսքերի գնահատման հիմք: Որոշ դեպքերում դիտարկելի տվյալները, որոնք պահանջվում են վարկի կամ դեբիտորական պարտքի գծով արժեզրկումից կորստի չափը գնահատելու համար, կարող են լինել սահմանափակ կամ այլևս ոչ ամբողջությամբ անչվող տվյալ հանգամանքներին: Դա կարող է տեղի ունենալ, երբ վարկառու ֆինանսական դժվարությունների մեջ է, և համաձայն վարկառուների վերաբերյալ քիչ պատմական տվյալներ կան: Այդպիսի դեպքերում, ցանկացած արժեզրկումից կորստի չափը գնահատելու համար Բանկն օգտագործում է իր փորձը և դատողությունները:

Վարկերի և դեբիտորական պարտքերի գծով արժեզրկումից կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում և հակադարձվում են այնքանով, որքանով փոխհատուցվող գումարի հետագա աճը կարելի է անկողմնակալորեն կապել արժեզրկումից կորստի ճանաչումից հետո տեղի ունեցած իրադարձությանը:

Այն դեպքերում, երբ վարկի հավաքագրումը հնարավոր չէ, վարկը դուրս է գրվում ի հաշիվ արժեզրկման գծով ձևավորված համապատասխան պահուստի: Բանկը վարկի մնացորդը (և արժեզրկման գծով ձևավորված ցանկացած պահուստը) դուրս է գրում, երբ ղեկավարությունը որոշում է, որ վարկը ներթափանցելի է հավաքագրման և ձեռնարկվել է վարկի վերադարձի հետ կապված բոլոր անհրաժեշտ քայլերը:

Սկզբնական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ

Սկզբնական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները ներառում են վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներում ընդգրկված չզննանշվող բաժնային գործիքները, որոնք չեն հաշվառվում իրական արժեքով, քանի որ այն հնարավոր չէ արժանահավատորեն գնահատել: Եթե առկա է այդ ներդրումների գծով արժեզրկումից կորստի անկողմնակալ վկայություն, ապա կորստի գումարը չափվում է որպես ներդրման հաշվեկշռային արժեքի և նմանատիպ ֆինանսական ակտիվների ներկա շուկայական հասույցադրույթով գեղջված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի ներկա արժեքի միջև տարբերությունը:

Այս ներդրումների գծով արժեզրկումից կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում և ենթակա չեն հակադարձման:

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների գծով արժեզրկումից կորուստները ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված կուտակված վնասը փոխանցելով շահույթի կամ վնասի կազմ՝ որպես վերադասակարգման ճշգրտում: Կուտակված վնասը, որը այլ համապարփակ ֆինանսական արդյունքից վերադասակարգվում է շահույթի կամ վնասի կազմ, հանդիսանում է ձեռքբերման արժեքի հանած մայր գումարի մարումները ու մաշվածությունը, և ընթացիկ իրական արժեքի հանած նախկինում շահույթում կամ վնասում ճանաչված արժեզրկումից կորուստները, միջև տարբերությունը: Ժամանակի արժեքին վերագրելի արժեզրկման գծով պահուստի փոփոխություններն արտացոլվում են որպես առկուսային եկամտի բաղադրիչ:

Եթե հետագա ժամանակաշրջանում արժեզրկված վաճառքի համար մատչելի պարտքային արժեքի իրական արժեքն աճում է, և այդ աճը հնարավոր է անկողմնակալորեն կապել շահույթում կամ վնասում արժեզրկումից կորստի ճանաչումից հետո տեղի ունեցած իրադարձությանը, ապա արժեզրկումից կորուստը հակադարձվում է, իսկ հակադարձված գումարը ճանաչվում է շահույթում կամ վնասում: Այնուամենայնիվ, արժեզրկված վաճառքի համար մատչելի բաժնային արժեքի իրական արժեքի ցանկացած հետագա վերականգնումը ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում:

Ոչ ֆինանսական ակտիվներ

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ այլ ոչ ֆինանսական ակտիվները, բացառությամբ հետաձգված հարկերի, գնահատվում են արժեզրկման հայտանիշ բացահայտելու նպատակով: Գուդվիլի փոխհատուցվող գումարը գնահատվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ: Ոչ ֆինանսական ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է որպես նրանց իրական արժեքից (հանած վաճառքի ծախսերը) և օգտագործման արժեքից առավելագույնը:

Օգտագործման արժեքը գնահատելիս դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերը գեղջվում են իրենց ներկա արժեքով՝ օգտագործելով մինչև հարկումը գեղջման այն դրույթը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի շուկայի ներկա գնահատականը և ակտիվի բնորոշ ռիսկերը: Այլ ակտիվներից առաջացող դրամական միջոցների ներհոսքից մեծապես անկախ և դրամական միջոցների ներհոսք չառաջացնող ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է այն դրամատեսնի միավորի համար, որին պատկանում է սոցյալ ակտիվը: Արժեզրկումից կորուստը ճանաչվում է, երբ ակտիվի կամ նրա դրամատեսնի միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է նրա փոխհատուցվող գումարը:

Ոչ ֆինանսական ակտիվների գծով արժեզրկումից կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում և հակադարձվում է միայն այն դեպքում, եթե փոխվել են փոխհատուցվող գումարը որոշելու համար օգտագործվող գնահատումները: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է միայն այն չափով, որ ակտիվի հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլինի ատանց համապատասխան մաշվածության և ամորտիզացիայի, եթե արժեզրկումից կորուստ ճանաչված չլինի: Գուդվիլի գծով արժեզրկումից կորուստը չի հակադարձվում:

Պահուստներ

Պահուստը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում է, երբ Բանկը որպես անցյալ դեպքերի արդյունք ունի իրավական կամ կառուցողական պարտականություն, և համահավասար է, որ այդ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե ազդեցությունն էական է, պահուստները որոշվում են գերըելով ակնկալվող դրամական հոսքերը օգտագործելով գեղչման միջին հարկումը գործող այն դրույքը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի շուկայի ներկա գնահատականը և, անհրաժեշտության դեպքում՝ պարտավորությունը բնորոշ ռիսկերը:

Վարկային պարտավորվածություններ

Բնականոն գործունեության ընթացքում Բանկը հանձն է առնում վարկային պարտավորվածություններ, որոնք ներառում են չօգտագործված վարկային պարտավորվածությունները, ակրեդիտիվները և երաշխիքները, ինչպես նաև տրամադրում է վարկային ապահովագրման այլ տեսակներ:

Ֆինանսական երաշխավորություններն իրենցից ներկայացնում են պայմանագրեր, որոնք պարտավորեցնում են Բանկին կատարել որոշակի վճարումներ, որոնք կփոխհատուցեն երաշխավորության սեփականատիրոջ այն վնասները, որոնք կհարկվեն, եթե առանձին պարտապանն ի վիճակի չլինի կատարել վճարումները պարտքային գործիքի պայմաններով նախատեսված ժամկետներում:

Ֆինանսական երաշխավորության գծով պարտավորությունը սկզբնապես ճանաչվում է իրական արժեքով, հաշվի չառնելով գործարքի հետ կապված ծախսումները, և հետագայում չափվում է երկու մեծություններից առավելագույնով սկզբնապես ճանաչված գումարը՝ հանած կուտակված ամորտիզացիան կամ երաշխիքի գծով կորուստների պահուստը: Ֆինանսական երաշխավորությունների գծով կորուստների պահուստը և վարկավորման այլ պարտավորվածությունները ճանաչվում են, երբ գոյություն ունի վնաս կրելու հավանականություն և այդ վնասը հնարավոր է արժանահավատորեն չափել:

Ֆինանսական երաշխավորության գծով պարտավորությունները և վարկային այլ պարտավորվածությունների գծով պահուստները ներառվում են այլ պարտավորությունների կազմում:

Վարկային պարտավորվածությունները չեն ճանաչվում, բացառությամբ հետևյալ պարտավորվածությունների.

- վարկային պարտավորվածություններ, որոնք Բանկը նախատեսում է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ,
- եթե Բանկն ունի իր վարկային պարտավորվածություններից առաջացող ակտիվների դրանց առաջացումից կարճ ժամանակ անց վաճառելու նախկին պրակտիկա, ապա նույն դասում գտնվող բոլոր վարկային պարտավորվածությունները դիտվում են որպես ածանցյալ գործիքներ,
- վարկային պարտավորվածություններ, որոնք կարող են մարվել զուտ հիմունքով՝ դրամական միջոցներով կամ մեկ այլ ֆինանսական գործիք մատակարարելով կամ թողարկելով,
- շուկայականից ցածր տոկոսադրույքով վարկ տրամադրելու պարտավորվածություններ:

Բաժնետիրական կապիտալ

Սուվորական բաժնետոմսեր

Սուվորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես սեփական կապիտալ: Սուվորական բաժնետոմսերի և բաժնետոմսերի օպցիոնների թողարկմանն ուղղակիորեն վերագրելի լրացուցիչ ծախսերը ճանաչվում են որպես սեփական կապիտալի նվազեցում՝ առանց հարկային հետևանքների:

Էմիսիոն եկամուտ

Թողարկված բաժնետոմսերի անվանական արժեքից ավել վճարվող գումարը ճանաչվում է որպես էմիսիոն եկամուտ:

Շահաբաժիններ

Շահաբաժիններ հայտարարելու և վճարելու Բանկի կարողությունը կարգավորվում է Հայաստանի
Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կանոնակարգերով:

Սուվորական բաժնետոմսերի շահաբաժիններն արտացոլվում են որպես չբաշխված շահույթի բաշխում այն ժամանակահատվածում, երբ հայտարարվում են:

Հարկում

Շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն մասի, որը վերաբերում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքի հողվածներին կամ ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված բաժնետերերի հետ իրականացված գործառնություններին, որի դեպքում շահութահարկը ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում կամ ուղղակիորեն սեփական կապիտալում:

Ընթացիկ հարկ

Ընթացիկ հարկը տարվա հարկվող եկամտի գծով ակնկալվող վճարման ենթակա հարկի գումարն է, որը հաշվարկվում է կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ, և կախորդ տարիների վճարման ենթակա հարկերի գծով կատարված ձշգրտումները:

Հետաձգված հարկ

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները ճանաչվում են ֆինանսական հաշվետվությունների նպատակների համար օգտագործվող ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակների համար օգտագործվող գումարների ժամանակավոր տարբերությունների գծով: Հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ չեն ճանաչվում ակտիվների կամ պարտավորությունների սկզբնական ճանաչման համար ձեռնարկատիրական

գործունեության միավորում չհանդիսացող գործարքում, որն ազդեցություն չունի հաշվապահական կամ հարկվող շահույթի վրա:

Հետաձգված հարկային ակտիվների և պարտավորությունների չափումն արտացոլում է այն հարկային հետևանքները, որոնք կարող են առաջանալ, եթե Բանկը կիրառի այն մոտեցումը, որով ակնկալում է վերականգնել կամ մարել իր ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքը հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չափվում են կիրառելով հարկերի այն դրույթները, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ժամանակավոր տարբերությունների նկատմամբ վերջիններս հակադարձելիս՝ հիմք ընդունելով այն օրենքների դրույթները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ:

Հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են միայն այն չափով, որքանով հավանական է, որ առկա կլինի ապագա հարկվող շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել ժամանակավոր տարբերությունները, չօգտագործված հարկային վնասները և արտոնությունները: Հետաձգված հարկային ակտիվները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և նվազեցվում են այնքանով, որքանով հավանական չէ, որ հարկի գծով համապատասխան օգուտը կարող է իրացվել:

Եկամտի և ծախսի ճանաչում

Տոկոսային եկամուտը և ծախսը ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույթի մեթոդը:

Վարկերի տրամադրման, սպասարկման և այլ վճարները, որոնք գործարքի հետ կապված ծախսերի հետ միասին դիտարկվում են որպես վարկի ընդհանուր շահութաբերության անբաժան մաս, հետաձգվում են և ամորտիզացվում են տոկոսային եկամտի կազմում ֆինանսական գործիքի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույթի մեթոդը:

Այլ վճարները, կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտը և ծախսը ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ համապատասխան ծառայությունը տրամադրելիս:

Գործառնական վարձակալության գծով վճարները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ գծային մեթոդով՝ վարձակալության գործողության ժամկետի ընթացքում:


Համադրելի տեղեկատվություն

Համադրելի տեղեկատվությունը վերադասակարգվել է հաշվետու տարվա ներկայացման հետ համապատասխանություն ապահովելու նպատակով:

3. Տոկոսային և նմանատիպ եկամուտներ և ծախսեր

հոլադայ 22 ցամաք

Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	01/04/2017թ. 30/06/2017թ.	01/01/2017թ. 30/06/2017թ.	01/04/2016թ. 30/06/2016թ.	01/01/2016թ. 30/06/2016թ.
Տոկոսային եկամուտներ բանկերում և այլ ֆինանսական կազմակերպություններում տեղաբաշխված միջոցներից	59,318	82,467	8,156	16,923
Տոկոսային եկամուտ հաճախորդների տրված վարկերից և փոխառվածություններից	5,480,611	10,897,023	2,374,605	4,723,329
Տոկոսային եկամուտ արժեթղթերից	787,897	1,379,740	261,365	420,621
Տոկոսային եկամուտ «Ռեպո» պայմանագրերից	36,022	105,375	4,627	7,225
Ընդամենը	6,364,990	12,465,747	2,648,753	5,168,098




հոլադայ 22 ցամաք

Տոկոսային և նմանատիպ ծախսեր	01/04/2017թ. 30/06/2017թ.	01/01/2017թ. 30/06/2017թ.	01/04/2016թ. 30/06/2016թ.	01/01/2016թ. 30/06/2016թ.
Տոկոսային ծախսեր բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններից ներգրավված միջոցների դիմաց	967,778	1,970,323	386,537	771,127
Տոկոսային ծախսեր հաճախորդների ժամկետային ավանդների և ընթացիկ հաշիվների դիմաց	2,922,504	5,844,421	1,278,867	2,510,230
Տոկոսային ծախսեր բանկի կողմից թողարկված արժեթղթերի դիմաց	98,793	143,588	-	-

Տոկոսային ծախսեր «Ռեպո» պարտանագրերի դիմաց Այլ տոկոսային ծախսեր

	60,613	75,563	12,138	14,982
	18,461	34,710	46,615	91,057
Ընդամենը	4,068,149	8,068,605	1,724,157	3,387,396

Ընդամենը



Չուտ տոկոսային և տնտեսադիպ եկամուտ

	2,296,841	4,397,142	924,596	1,780,702
--	-----------	-----------	---------	-----------

4. Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ և ծախսեր

հազար ՀՀ դրամ

Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ

Դրամարկղային գործառնություններից


Ջաշվարկային ծառայություններից և սպասարկումից

Վճարային քարտերի սպասարկումից

Այլ կոմիսիոն վճարներ

Ընդամենը


	01/04/2017-30/06/2017	01/01/2017-30/06/2017	01/04/2016-30/06/2016	01/01/2016-30/06/2016
Դրամարկղային գործառնություններից	8,931	18,052	14,464	19,923
Ջաշվարկային ծառայություններից և սպասարկումից	96,768	268,572	17,961	41,276
Վճարային քարտերի սպասարկումից	29,131	93,488	80,223	133,026
Այլ կոմիսիոն վճարներ	-	-	3,478	5,762
Ընդամենը	134,830	380,112	116,126	199,987



Տաղանթ 22-ը զրոսով

Կումիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր

	01/04/2017թ. 30/06/2017թ.	01/01/2017թ. 30/06/2017թ.	01/04/2016թ. 30/06/2016թ.	01/01/2016թ. 30/06/2016թ.
Թղթակցային և այլ հաշիվների դիմաց կումիսիոն վճարներ	16,036	22,053	5,621	12,150
Վճարային քարտերով գործառնությունների գծով վճարներ	9,718	16,894	9,997	22,484
Արտարժույթով և արժեթղթերով գործառնություններից	3,989	6,336	1,261	1,834
Այլ կումիսիոն վճարներ	560	569	466	490
Ընդամենը	30,303	45,852	17,345	36,958




Ստացված զուտ կոմիսիոն և այլ վճարներ	104,527	334,260	98,781	163,029
-------------------------------------	---------	---------	--------	---------

5. Զուտ եկամուտ առևտրային գործունեությունից

հաջորդ 27 թիվ


Ըստույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքներից	01/04/2017թ. 30/06/2017թ.	01/01/2017թ. 30/06/2017թ.	01/04/2016թ. 30/06/2016թ.	01/01/2016թ. 30/06/2016թ.
Զուտ շահույթ արտարժույթային պայմանագրերից	146,425	202,236	-	17,801
Զուտ շահույթ ֆինանսական ակտիվների առ ու վաճառքից	(79,472)	(72,797)	-	-
Ընդամենը	66,953.0	129,439	-	17,801



հաջորդ 28 թիվ

վաճառքի համար մատչելի ակտիվներից	01/04/2017թ. 30/06/2017թ.	01/01/2017թ. 30/06/2017թ.	01/04/2016թ. 30/06/2016թ.	01/01/2016թ. 30/06/2016թ.
Զուտ շահույթ վաճառքի համար մատչելի ակտիվներից	321,406	321,542	-	-
Ընդամենը	321,406	321,542	-	-


Արտարժույթային գործառնություններից	01/04/2017թ. 30/06/2017թ.	01/01/2017թ. 30/06/2017թ.	01/04/2016թ. 30/06/2016թ.	01/01/2016թ. 30/06/2016թ.
Արտարժույթի առ ու վաճառքից ստացված գուտ եկամուտ	77,031	117,814	56,926	109,312
Արտարժույթի վերագնահատումից ստացված գուտ եկամուտ	(122,507)	(180,139)	104,905	70,125
Ընդամենը	(45,476)	(62,325)	161,831	179,437



Այլ գործառնական եկամուտներ	01/04/2017թ. 30/06/2017թ.	01/01/2017թ. 30/06/2017թ.	01/04/2016թ. 30/06/2016թ.	01/01/2016թ. 30/06/2016թ.
Եկամուտներ ստացված սույվերից և սուգանքներից	94,760	426,524	157,905	372,416
Օգուտներ հիմնական միջոցների և այլ գույքի օտարումից	17	1,239	1,697	4,154
Այլ եկամուտներ	92,568	149,397	7,186	19,755
Ընդամենը	187,345	577,160	166,788	396,325

հարաբ. 22 դրամ

Այլ Գործառնություններից	01/04/2017թ. 30/06/2017թ.	01/01/2017թ. 30/06/2017թ.	01/04/2016թ. 30/06/2016թ.	01/01/2016թ. 30/06/2016թ.
Առարկայազուրկ մետաղական հաշիվների առ ու վաճառքից ստացված գուտ եկամուտ	47	(147)	-	-
Առարկայազուրկ մետաղական հաշիվների վերագնահատումից ստացված գուտ եկամուտ	47	42	-	-
Ընդամենը	94	(105)	-	-



Ջուտ էկամուտ առևտրային գործառնություններից

342,977	388,551	161,831	197,238
---------	---------	---------	---------

6. Այլ գործառնական էկամուտներ

Հազար ՀՀ դրամ


Այլ գործառնական էկամուտներ

	01/04/2017թ. 30/06/2017թ.	01/01/2017թ. 30/06/2017թ.	01/04/2016թ. 30/06/2016թ.	01/01/2016թ. 30/06/2016թ.
Էկամուտներ ստացված տույժերից և տուգանքներից	94,760	426,524	157,905	372,416
Օգուտներ հիմնական միջոցների և այլ գույքի ստարումից	17	1,239	1,697	4,154
Այլ էկամուտներ	92,568	149,397	7,186	19,755
Շուկաներ	187,345	577,160	166,788	396,325



7. Արժեզրկման ծախս

	01/04/2017թ. 30/06/2017թ.	01/01/2017թ. 30/06/2017թ.	01/04/2016թ. 30/06/2016թ.	01/01/2016թ. 30/06/2016թ.
Արժեզրկումից կորուստներ				
Հաճախորդներին տրված վարկեր, փոխատվություններ	245,810	(167,184)	(182,029)	(1,908,289)
Այլ ակտիվներ	(32,000)	(55,177)	(44,564)	(39,722)
Ընդամենը	213,810	(222,361)	(226,593)	(1,948,011)




8. Ընդհանուր վարչական ծախսեր

հարյուր ՀՀ դրամ

Ընդհանուր վարչական ծախսեր	01/04/2017թ. 30/06/2017թ.	01/01/2017թ. 30/06/2017թ.	01/04/2016թ. 30/06/2016թ.	01/01/2016թ. 30/06/2016թ.
Անձնակազմի գծով ծախսեր	578,248	1,179,376	511,919	1,039,461
Հ. ս. և ոչ կյուր ակտի անորոշ ծախսեր	54,567	181,115	85,561	212,062
Գովազդային և ներկայացուցչական ծախսեր	21,228	38,139	14,576	28,757

Գործառ վարձակալ գծով ծախսեր	43,572	84,511	43,172	100,842
Կապի և հաղորդի միջոցների գծով ծախսեր	15,254	29,073	14,515	28,223
Ծախսեր հարկերի և այլ պարտ վճ գծով	64,142	113,554	67,998	118,515
Վերանորոգման և պահպ ծախսեր	51,859	102,132	59,915	106,725
Գործուղման ծախսեր	13,776	18,813	12,568	23,244
Անվտանգության գծով ծախսեր	31,394	67,817	38,001	78,239
Գրասենյակային ծախսեր	7,399	14,713	6,910	12,476
Աուդիտ և խորհ ծառ գծով ծախսեր	13,754	23,595	9,911	16,954
Այլ վարչական ծախսեր	31,738	66,485	34,546	61,300
Շղթամենք	926,931	1,919,323	899,592	1,826,798

Բանկի աշխատակիցների միջին քանակը հաշվետու կտանալում կազմել է 362 (2016թ. 2-րդ կտանալում՝ 390):



9. Այլ գործառնական ծախսեր

ձեռքար ԸՂ զրամ

Այլ գործառնական ծախսեր	01/04/2017թ. 30/06/2017թ.	01/01/2017թ. 30/06/2017թ.	01/04/2016թ. 30/06/2016թ.	01/01/2016թ. 30/06/2016թ.
Վճարված տույժեր և տուգանքներ	2,918	5,291	15	2,831

Ինկասացիայի համար կատարված վճարումներ	-	5,772	6,162	12,684
Կորուստներ հիմնական միջոցների և այլ գույքի օտարումից	453	746	12,262	14,550
Այլ ծախսեր	118,445	236,075	79,673	150,572
<i>սպ. թվում՝ վճարային ցերեկատուությունների գծով</i>	<i>48,470</i>	<i>86,025</i>	<i>38,917</i>	<i>70,881</i>
Ընդամենը	121,816	247,884	98,112	180,637



10. Շահութահարկի գծով ծախսեր

հարյուր ՀՀ դրամ

Շահութահարկի գծով ծախս	01/04/2017թ. - 30/06/2017թ.	01/01/2017թ. - 30/06/2017թ.	01/04/2016թ. - 30/06/2016թ.	01/01/2016թ. - 30/06/2016թ.
Ընթացիկ հարկի գծով ծախս	560	659	-	-
Հետաձգված հարկի գծով ծախս/(հատուցում)	716,295	919,988	(228,376)	(228,376)
Ընդամենը	716,855	920,647	(228,376)	(228,376)

Հայաստանի Հանրապետությունում շահութահարկի դրույքաչափը կազմում է 20% (2016թ.՝ 20%): ՀՀ հարկային օրենսդրության և ՖՀՄՄ-ի միջև եղած տարբերությունը մի շարք ակտիվների և պարտավորությունների գծով առաջացնում է ժամանակավոր տարբերություններ ֆինանսական հաշվետվությունների կազման նպատակներով դրանց հաշվեկշռային արժեքների և հարկման բազայի միջև: Հետաձգված շահութահարկի գումարը հաշվարկվում է 20% հիմնական դրույքաչափը կիրառելով:



11. Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ

հազար ՀՀ դրամ

<i>Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ</i>	01/04/2017թ. 30/06/2017թ.	01/01/2017թ. 30/06/2017թ.	01/04/2016թ. 30/06/2016թ.	01/01/2016թ. 30/06/2016թ.
Ժամանակաշրջանի զուտ շահույթ	1,380,987	2,387,987	356,221	(1,189,480)
Բաժնետոմսերի քանակը	679,437	679,437	273,926	273,926
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթ	2	4	1	(4)

12. ՀՀ կենտրոնական բանկում տեղաբաշխված միջոցներ

հազար ՀՀ դրամ

ՀՀ կենտրոնական բանկում տեղաբաշխված միջոցներ

	30/06/17թ.	31/12/16թ.
Թղթակցային հաշիվներ ՀՀ ԿԲ-ում	13,556,516	24,366,895
Դեպոնացված միջոցներ ՀՀ ԿԲ-ում	120,000	320,000
Ավանդներ ՀՀ ԿԲ-ում	-	3,000,779
ՀՀ կենտրոնական բանկում տեղաբաշխված միջոցներ	13,676,516	27,687,674




2017թ. հունիսի 30-ի դրությամբ քրթակցային հաշիվները 22 ԿԲ-ում ներառում են նաև 22 բանկային օրենսդրության համաձայն 22 ԿԲ-ում տեղաբաշխված պարտավոր պահուստները, որոնք հաշվարկվում են Բանկի կողմից ներդրված դրամային որոշ միջոցների 2%-ի և արտարժույթով որոշ միջոցների 18%-ի չափով:

13. Պահանջներ բանկերի նկատմամբ

Հազար ՀՀ դրամ

Թղթակցային / ևստոր / հաշիվներ	30/06/17թ.	31/12/16թ.
Շրջանակային վարկեր և սվանդներ	695,042	481,916
Միջբանկային վարկեր և սվանդներ	4,912,319	-
Այլ պահանջներ բանկերի նկատմամբ	163,945	-
Շրջանակային վարկեր և սվանդներ	5,771,306	481,916



14. Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ


	<u>30/06/17թ.</u> հազ. դրամ	<u>31/12/16թ.</u> հազ. դրամ
ԱԿՏԻՎՆԵՐ		
Ածանցյալ ֆինանսական գործիքներ		
Արտարժույթի արք ու վաճառքի պայմանագրեր	1,490,280	77,106
	<u>1,490,280</u>	<u>77,106</u>
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		
Ածանցյալ ֆինանսական գործիքներ		
Արտարժույթի արք ու վաճառքի պայմանագրեր	1,595,523	61,386
	<u>1,595,523</u>	<u>61,386</u>

Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքները ներառում են առևտրական նպատակներով պահվող ֆինանսական գործիքները:

Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներն ժամկետանց կամ արժեզրկված չեն:

15. Հակադարձ հետզնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ

Հետզնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	<u>30/06/17թ.</u>	<u>31/12/16թ.</u>
ՀՀ բանկեր	-	7,532,432
ՀՀ ֆինանսական կազմակերպություններ	2,703,162	190,078
ՀՀ այլ անձինք	16,819	-
Հետզնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	<u>2,719,981</u>	<u>7,722,510</u>



16. Հաճախորդներին տրված վարկեր

	(հազ. դրամ)	
	30/06/2017թ.	31/12/2016թ.
Հաճախորդներին տրված վարկեր		
Առևտրային վարկեր		
Վարկեր իրավաբանական անձանց և ա/ձ-ին	219,509,705	190,327,236
Շղամենք	<u>219,509,705</u>	<u>190,327,236</u>
Անհատներին տրված վարկեր		
Սպառողական վարկեր	6,281,103	14,059,902
Էքսպրես վարկեր	11,380,013	5,506,676
Ոսկու գրավով վարկեր	5,975,507	4,799,332
Հիպոթեքային վարկեր	3,698,067	3,225,789
Գույքստույնուսական վարկեր	279,317	319,846
Անվտանգ վարկեր	70,814	121,242
Շղամենք	<u>27,684,821</u>	<u>28,032,787</u>
Շղամենք վարկեր	<u>247,194,526</u>	<u>218,360,023</u>
Արժեզրկման գծով պահուստ	(979,232)	(1,261,500)
Շղամենք գուտ վարկեր	<u>246,215,294</u>	<u>217,098,523</u>
Շղամենք հաճախորդներին տրված վարկեր և այլ փոխառվածություններ	<u>246,215,294</u>	<u>217,098,523</u>

Հաճախորդներին տրված վարկերի որակական ցուցանիշները

Ատորն բերվող աղյուսակում ներկայացված է սեղեկատվություն հաճախորդներին տրված վարկերի որակական ցուցանիշների վերաբերյալ 2017 թվականի հունիսի 30-ի դրությամբ:

	Համախառն վարկեր հազ. դրամ	Արժեզրկում հազ. դրամ	Ցուտ վարկեր հազ. դրամ	Համախառն վարկերի արժեզրկում %
Վարկեր ա/ձ-ին և ընկերություններին				
Վարկեր, որոնց գծով արժեզրկման առանձին հայտանիշ չի հայտնաբերվել <i>Ժամկետանց կամ արժեզրկված վարկեր</i>	215,552,282	84,088	215,468,194	0.0%
- Ոչ ժամկետանց	430,925	2,158	428,767	0.5%
- Մինչև 30 օր ժամկետանց	352,504	1,763	350,741	0.5%
- 31-90 օր ժամկետանց	420,818	2,104	418,714	0.5%
- 91-180 օր ժամկետանց	380,984	49,913	331,071	13.1%
- 181-360 օր ժամկետանց	2,117,548	269,858	1,847,690	12.7%
- 361 օր և ավել ժամկետանց	254,644	96,038	158,606	37.7%
Ընդամենը արժեզրկված վարկեր	3,957,423	421,834	3,535,589	10.66%
Ընդամենը վարկեր ընկերություններին	219,509,705	505,922	219,003,783	0.23%

	Համախառն վարկեր հազ. դրամ	Արժեզրկում հազ. դրամ	Ցուտ վարկեր հազ. դրամ	Համախառն վարկերի արժեզրկում %
Սպառողական վարկեր				
- Ոչ ժամկետանց	5,228,023	47,572	5,180,451	0.9%
- Մինչև 30 օր ժամկետանց	188,137	1,621	186,516	0.9%
- 31-90 օր ժամկետանց	142,567	1,749	140,818	1.2%
- 91-180 օր ժամկետանց	199,732	15,071	184,661	7.5%
- 181-360 օր ժամկետանց	392,901	65,317	327,584	16.6%
- 361 օր և ավել ժամկետանց	129,743	33,193	96,550	25.6%
Ընդամենը սպառողական վարկեր	6,281,103	164,523	6,116,580	2.6%
Էքսպրես վարկեր				
- Ոչ ժամկետանց	10,512,978	146,961	10,366,017	1.4%
- Մինչև 30 օր ժամկետանց	255,342	4,706	250,636	1.8%

- 31-90 օր ժամկետանց	279,217	4,056	275,161	1.5%
- 91-180 օր ժամկետանց	174,538	1,106	173,432	0.6%
- 181-360 օր ժամկետանց	126,877	830	126,047	0.7%
- 361 օր և ավել ժամկետանց	31,061	155	30,906	0.5%
Ընդամենը էքսպրես վարկեր	11,380,013	157,814	11,222,199	1.4%
Ոսկու գրավով վարկեր				
- Ոչ ժամկետանց	5,782,163	28,911	5,753,252	0.5%
- Մինչև 30 օր ժամկետանց	73,736	369	73,367	0.5%
- 31-90 օր ժամկետանց	42,141	211	41,930	0.5%
- 91-180 օր ժամկետանց	24,708	124	24,584	0.5%
- 181-360 օր ժամկետանց	52,759	264	52,495	0.5%
Ընդամենը Ոսկու գրավով վարկեր	5,975,507	29,879	5,945,628	0.5%
Հիփոթեքային վարկեր				
- Ոչ ժամկետանց	3,028,666	16,514	3,012,152	0.5%
- Մինչև 30 օր ժամկետանց	23,305	206	23,099	0.9%
- 31-90 օր ժամկետանց	94,396	472	93,924	0.5%
- 91-180 օր ժամկետանց	335,903	99,601	236,302	29.7%
- 181-360 օր ժամկետանց	215,797	1,969	213,828	0.9%
Ընդամենը հիփոթեքային վարկեր	3,698,067	118,762	3,579,305	3.2%
Գյուղատնտեսական վարկեր				
- Ոչ ժամկետանց	256,523	1,389	255,134	0.5%
- Մինչև 30 օր ժամկետանց	8,111	41	8,070	0.5%
- 91-180 օր ժամկետանց	12,068	62	12,006	0.5%
- 181-360 օր ժամկետանց	2,615	23	2,592	0.9%
Ընդամենը գյուղատնտեսական վարկեր	279,317	1,515	277,802	0.5%
Ավտուվարկեր				
- Ոչ ժամկետանց	63,084	727	62,357	1.2%
- Մինչև 30 օր ժամկետանց	4,038	47	3,991	1.2%

31-90 օր ժամկետանց	2,406	28	2,378	1.2%
91-180 օր ժամկետանց	1,286	15	1,271	1.2%
Շրջաններ ավտովարկեր	70,814	817	69,997	1.2%
Շրջաններ անհատներին տրված վարկեր	27,684,821	473,310	27,211,511	1.7%

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն հաճախորդներին տրված վարկերի որակական ցուցանիշների վերաբերյալ 2016 թվականի դետեմբերի 31-ի դրությամբ:

	Համախառն վարկեր	Արժեզրկման պահուստ	Ջուտ վարկեր	Համախառն վարկերի արժեզրկման պահուստ
	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ	%
Իրավաբանական անձանց տրված վարկեր				
Արժեզրկման առանձին հայտանիշ չունեցող վարկեր- ժամկետանց կամ արժեզրկված վարկեր	183,822,811	60,895	183,761,916	0.0%
- Արտվյանի մասնաճյուղ, ք. Արտվյան, Օգոստոսի 23 փ. 4շ, Հեռ.՝ (0222) 2-02-88
- «Դայազատ» մասնաճյուղ, ք. Գավառ, Աղոյանիկի 30ա, Հեռ.՝ (0264) 2-37-75
- «Արարկիր» մասնաճյուղ, ք. Երևան, Կոմիտաս 56/162, Հեռ.՝ (37410) 59-33-33, (37460) 27-33-33
- «Նոր Նորք» մասնաճյուղ, ք. Երևան, Գալի պողոտա 17/1 շենք, Հեռ.՝ (37410) 59-33-33, (37460) 27-33-33
- Էջմիածնի մասնաճյուղ, ք. Էջմիածին, Մաշտոցի 48, Հեռ.՝ (0231) 4-96-93
- Վանաձորի մասնաճյուղ, ք. Վանաձոր, Խորենացի 4, Հեռ.՝ (0322) 2-18-65
- Դավթաշենի մասնաճյուղ, ք. Երևան, Դավթաշեն 4-րդ թաղ, 11/91, Հեռ.՝ (37410) 59-33-33, (37460) 27-33-33
- Սևանի մասնաճյուղ, ք. Սևան, Մայաթ-Նովա 12/1, Հեռ.՝ (0261) 2-40-66
- «Բաղրամյան» մասնաճյուղ, ք. Երևան, Բաղրամյան 75, Հեռ.՝ (37410) 59-33-33, (37460) 27-33-33
- «Մալաթիա» մասնաճյուղ, ք. Երևան, Ըաֆիա 39/61, Հեռ.՝ (37410) 59-33-33, (37460) 27-33-33
- «Տիգրան Մեծ» մասնաճյուղ, ք. Երևան, Տիգրան Մեծի 4, Հեռ.՝ (37410) 59-33-33, (37460) 27-33-33
- «Էրեբունի» մասնաճյուղ, ք. Երևան, Էրեբունի 7/60, Հեռ.՝ (37410) 59-33-33, (37460) 27-33-33

Բանկի աշխատողների միջին թվաքանակը 2017 թ.-ի նրբորդ եռամսյակում կառնել է 403 մարդ:

Կորպորատիվ կառավարում

Կորպորատիվ կառավարման սկզբունքներից էլնելով և ղեկավարվելով «Բանկերի և Բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի դրույթներով, Բանկի արդյունավետ ղեկավարման համար գործում է Բանկի Վարչությունը: Բանկի Վարչությունն իրականացնում է Բանկի գործունեության ընթացիկ ղեկավարումը, կազմակերպում է Բաժնետերերի Ընդհանուր ժողովի, Բանկի Խորհրդի և իր կողմից ընդունված որոշումների կատարումը, ապահովում է բանկի խորհրդի կողմից հաստատված ռազմավարական ծրագրի և ներքին ակտերի կատարումը:

Բանկի Խորհուրդը, Վարչության աշխատանքների գնահատման համար, հիմք է ընդունում Վարչության նախագահի, Գլխավոր հաշվապահի, Ներքին վերահսկողության վարչության կողմից Խորհրդին ներկայացվող պարբերական հաշվետվությունները և տեղեկատվությունը, ՀՀ կենտրոնական բանկի ստուգման ակտերը, ինչպես նաև արտաքին աուդիտի եզրակացությունը: Վարչության աշխատանքները գնահատվում են էլնելով Վարչության կողմից իրականացվող

- ✓ Բանկի ռազմավարական ծրագրի իրականացման ընթացքից,
- ✓ Խորհրդի կողմից ընդունված որոշումների կատարումից,
- ✓ Ռիսկերի զապմանն ուղղված գործառույթներից,
- ✓ Բանկի ընթացիկ գործունեության արդյունավետ կառավարումից,
- ✓ Տեխնոադրույթների քաղաքականությունից,
- ✓ Եկամուտների և ծախսերի արդյունավետ քաղաքականությունից,
- ✓ Կադրային քաղաքականությունից

Բանկի խորհրդի կազմը

Վարդան Դիլանյան	Խորհրդի նախագահ
Կարեն Մարգարյան	Խորհրդի անդամ
Մարտին Մորոզով	Խորհրդի անդամ
Հազոբ Գասարճեան	Խորհրդի անդամ
Սազեն Ենիսյեք Ակրամ	Խորհրդի անդամ

Բանկի վարչության կազմը

Ռուբեն Մելիքյան	Վարչության նախագահի ժ/պ, Ֆինանսական տնօրեն, Վարչության անդամ
Սերգեյ Վիրաբյան	Կորպորատիվ բիզնեսի գծով տնօրեն, Վարչության անդամ
Հայկ Ակրուտյան	Բիզնեսի զարգացման գծով տնօրեն, Վարչության անդամ
Վարդան Գեորգյան	Մանրաձախ բիզնեսի գծով տնօրեն, Վարչության անդամ
Արման Ասատրյան	Գործառնական տնօրեն, Վարչության անդամ
Ռաֆիկ Մուվարյան	Ռիսկերի կառավարման գծով տնօրեն, Վարչության անդամ
Անուշիկ Խաչատրյան	Գլխավոր հաշվապահ-Հաշվապահական հաշվառման և հաշվետվությունների վարչության պետ, Վարչության անդամ

Բանկի բաժնետերեր

Բաժնետեր	Մասնակության չափը (հազար դրամ)	%
ՖԻՍԹՈՔՈՒ ԷՂ ԹԻ ԴԻ	20,275,550	59.68%
CreditBank S.A.L	13,696,300	40.32%
Ընդամենը	33,971,850	100%

Գործարար միջավայր

Բանկն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանում: Չետնարար, Բանկի գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկան, որոնց բնորոշ են զարգացող շուկայի հասկանիչներ: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ, սակայն կարող են ունենալ տարբեր մեկնաբանություններ և ենթակա են հաճախակի փոփոխությունների, ինչը, այլ իրավական ու ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանում գործող կազմակերպությունների համար: Ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Բանկի գործունեության և ֆինանսական վիճակի վրա գործարար միջավայրի ազդեցության դեկավարության գնահատականը: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել դեկավարության գնահատականից:

1. Հաշվետվությունների պատրաստման հիմունքները

Համապատասխանությունը

Այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) պահանջների համաձայն:

Չափման հիմունքները

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով, բացառությամբ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների և վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների, որոնք ներկայացված են իրական արժեքով ու վերագնահատված արժեքով հաշվառվող շնքերի:

Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Բանկի ֆունկցիոնալ արժույթն է հանդիսանում ՀՀ դրամը («գրամ»), որը, լինելով Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը, արտացոլում է Բանկի գործունեության հիմքում ընկած իրադարձությունների և հանգամանքների տնտեսական էությունը:

Դրամը հանդիսանում է նաև այս ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը:

Ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ:

2. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Ստորև ներկայացվող հաշվապահական հաշվառման քաղաքականությունը հետևողականորեն կիրառվում է այս ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար:

Արտարժույթով գործարքներ

Արտարժույթով իրականացված գործարքները փոխարկվում են դրամի գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով:

Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները վերափոխարկվում են դրամի այդ օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Դրամային հոդվածների գծով արտարժույթով իրականացված գործառնություններից առաջացած օգուտը կամ վնասն իրենից ներկայացնում է տարբերություն ժամանակաշրջանի սկզբում ֆունկցիոնալ արժույթով արտահայտված, արդյունավետ տոկոսադրույքի ու ժամանակաշրջանի վճարումների ճշգրտումով ամորտիզացված արժեքի և հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործող փոխարժեքով փոխարկված ֆունկցիոնալ արժույթով արտահայտված ամորտիզացված արժեքի միջև:

Արտարժույթով արտահայտված ոչ դրամային ակտիվները և պարտավորությունները, որոնք չափվում են իրական արժեքով, վերափոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի իրական արժեքի որոշման ամսաթվի դրությամբ սահմանված փոխարժեքով: Սկզբնական արժեքով չափվող, արտարժույթով արտահայտված ոչ դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով:

Վերափոխարկման արդյունքում առաջացող արտարժույթային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում, բացառությամբ վաճառքի համար մատչելի բաժնային գործիքների վերափոխարկման արդյունքում առաջացող տարբերությունների, բացի այն դեպքերից, երբ տարբերությունն առաջանում է արժեզրկման պատճառով, որի դեպքում այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված արտարժույթային տարբերությունները վերադասակարգվում են որպես շահույթ կամ վնաս:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ են համարվում կանխիկ թղթադրամները և մետաղադրամները, ՀՀ ԿԲ-ում և այլ բանկերում պահվող սահմանափակումներ չունեցող մնացորդները (նուստրո հաշիվներ) և բարձր իրացվելության ֆինանսական ակտիվները, որոնց սկզբնական մարման ժամկետը կազմում է մինչև երեք ամիս, որոնք ենթարկվում են իրական արժեքի փոփոխման ոչ էական ռիսկի ու օգտագործվում են Բանկի կողմից կարճաժամկետ պարտավորվածությունների կառավարման համար: ՀՀ ԿԲ-ում պահվող նվազագույն պահուստային ավանդը չի համարվում դրամական միջոցների համարժեք, քանի որ դրանից միջոցների էլքազրույթը սահմանափակված է: Դրամական միջոցները և դրանց համարժեքները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

Ֆինանսական գործիքներ

Դասակարգում

Հահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքները իրենցից ներկայացնում են ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ, որոնք

- հիմնականում ձեռք են բերվել կամ առաջացել են մոտ ապագայում վաճառելու կամ հետ գնելու նպատակով,
- կազմում են միասին կառավարվող որոշված ֆինանսական գործիքների պորտֆելի մաս, որի համար առկա է վկայություն կարճ ժամկետում շահույթ ստանալու արդիական փաստացի ուղիների վերաբերյալ,
- հանդիսանում են անանցյալ ֆինանսական գործիք (բացառությամբ ֆինանսական երաշխավորության պայմանագիր հանդիսացող անանցյալ գործիքի կամ այն անանցյալ գործիքի, որը նախատեսված է և հանդիսանում է արդյունավետ հեջավորման գործիք), կամ
- սկզբնական ճանաչման պահին Բանկի կողմից նախատեսվում են որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ:

Բանկը ֆինանսական ակտիվները և պարտավորությունները նախատեսում է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ստորև ներկայացված պայմաններից մեկի բավարարման դեպքում.

- ակտիվները կամ պարտավորությունները կառավարվում, գնահատվում և ներկայացվում են իրական արժեքի հիմունքով,
- նախատեսումը վերացնում կամ էականորեն նվազեցնում է հաշվապահական անհամապատասխանությունները, որոնք կառաջանային այլ հանգամանքներում, կամ
- ակտիվը կամ պարտավորությունը ներառում է պարունակվող անանցյալ գործիք, որը էականորեն ձևափոխում է դրամական միջոցների հոսքերը, որոնք այդպես կաշահանջվեին պայմանագրի համաձայն:

Ձուտ ստացվելիք դիրքում գտնվող (դրական իրական արժեք) անտրական նպատակներով պահվող բոլոր անանցյալ գործիքները, ինչպես նաև ձեռք բերված օպցիոնները, ներկայացվում են որպես ակտիվ: Ձուտ վճարվելիք դիրքում գտնվող (բացասական իրական արժեք) անտրական նպատակներով պահվող բոլոր անանցյալ գործիքները, ինչպես նաև տրամադրված օպցիոնները, ներկայացվում են որպես պարտավորություն:

Ֆինանսական գործիքների համապատասխան դասակարգումը դեկլարությունը որոշում է սկզբնական ճանաչման պահին: Անանցյալ ֆինանսական գործիքները և որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ նախատեսված գործիքները սկզբնական ճանաչման պահին չեն վերդասակարգվում շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների դասից: Ֆինանսական ակտիվը, որը համապատասխանում է վարկերի և դեբիտորական պարտքերի սահմանմանը, կարող է վերադասակարգվել շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների կամ վաճառքի համար մատչելի ֆինանսական գործիքների դասից, եթե Բանկը մտադիր է և ի վիճակի է պահել այդ գործիքները մոտ ապագայում կամ մինչև մարման ժամկետը: Այլ ֆինանսական գործիքները կարող են վերադասակարգվել շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների դասից միայն հազվադեպ հանգամանքներում: Հազվադեպ հանգամանքներն ի հայտ են գալիս եզակի արտասովոր դեպքի արդյունքում, երբ գրեթե անհավանական է, որ այն կրկին տեղի կունենա մոտ ապագայում:

Տրամադրված վարկերը և դեբիտորական պարտքերը ֆիրմված կամ որոշելի վճարումներով ոչ անանցյալ ֆինանսական ակտիվներն են, որոնք գնանջված չեն գործող շուկայում, բացառությամբ այն գործիքների

- որոնց Բանկը մտադիր է անմիջապես կամ կարճ ժամկետում վաճառել,

- որոնց Բանկը սկզբնական ճանաչման պահին նախատեսում է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող,
- որոնց Բանկը սկզբնական ճանաչման պահին նախատեսում է որպես վաճառքի համար մատչելի, կամ
- որոնց գծով Բանկը չի փոխհատուցի իր բոլոր սկզբնական ներդրումները՝ վճարունակության անկարողությունից տարբեր այլ պատճառներով:

Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները ֆիքսված կամ որոշելի վճարումներով և ֆիքսված մարման ժամկետով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներն են, որոնք Բանկը մտադրված է և հնարավորություն ունի պահել մինչև մարման ժամկետի լրանալը, բացառությամբ այն ներդրումների

- որոնց սկզբնական ճանաչման պահին Բանկը նախատեսում է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող,
- որոնց Բանկը նախատեսում է որպես վաճառքի համար մատչելի, կամ
- որոնք համապատասխանում են վարկերի ու դեբիտորական պարտքերի սահմանմանը:

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներն իրենցից ներկայացնում են այնպիսի ֆինանսական ակտիվներ, որոնք նախատեսված են որպես վաճառքի համար մատչելի կամ դասակարգված չեն որպես վարկեր ու դեբիտորական պարտքեր, մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ կամ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ:

Ճանաչում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները ճանաչվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ Բանկը դառնում է գործիքի պայմանագրային կողմ: Ֆինանսական ակտիվների կանոնավոր կերպով գնումները հաշվառվում են առք ու վաճառքի անսարժի դրությամբ:

Չափում

Ֆինանսական ակտիվի կամ պարտավորության սկզբնական չափումը տեղի է ունենում իրական արժեքով: Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների խմբում չդասակարգված ֆինանսական ակտիվների կամ պարտավորությունների դեպքում իրական արժեքին գումարվում են գործարքի հետ կապված ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ պարտավորության ձևափոխմանը կամ թողարկմանը:

Սկզբնական ճանաչումից հետո ֆինանսական ակտիվները, ներառյալ ակտիվ համարվող ածանցյալ գործիքները, չափվում են իրական արժեքով՝ առանց նվազեցնելու գործարքի հետ կապված ծախսումները, որոնք կարող են առաջանալ վաճառքի կամ այլ օտարման հետ կապված, բացառությամբ

- վարկերի ու դեբիտորական պարտքերի, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույթի մեթոդը,
- մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույթի մեթոդը, և
- բաժնային գործիքներում ներդրումների, որոնք գործող շուկայում չունեն զեանշվող շուկայական գին, որոնց իրական արժեքները հնարավոր չէ արժանահավասարեն չափել և որոնք չափվում են սկզբնական արժեքով:

Բոլոր ֆինանսական պարտավորությունները չափվում են ամորտիզացված արժեքով, բացառությամբ այն ֆինանսական պարտավորությունների, որոնք նախատեսված են որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող և այն ֆինանսական պարտավորությունների, որոնք առաջանում են, երբ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվի փոխանցումը չի բավարարում ապաճանաչման պահանջները:

Ամորտիզացված արժեք

Ֆինանսական ակտիվի կամ պարտավորության ամորտիզացված արժեքն իրենից ներկայացնում է այն գումարը, որով ֆինանսական ակտիվը կամ պարտավորությունը չափվում է սկզբնական ճանաչման պահին՝ հանած մայր գումարի վճարումները, գումարած կամ հանած սկզբնապես ճանաչված գումարի և մարման պահին գումարի տարբերության կուտակված ամորտիզացիան, որը հաշվարկվել է կիրառելով արդյունավետ տոկոսադրույթի մեթոդը՝ հանած արժեզրկումից կորուստը: Հավելավճարները և գեղչերը, ներառյալ գործարքի հետ կապված սկզբնական ծախսումները, ընդգրկված են համապատասխան գործիքի հաշվեկշռային արժեքում և ամորտիզացվում են՝ կիրառելով գործիքի արդյունավետ տոկոսադրույթի մեթոդը:

Իրական արժեքի չափման սկզբունքներ

Իրական արժեքն այն գինն է, որը շուկայի մասնակիցների միջև տվորական գործարքում կստացվեր ակտիվի վաճառքից կամ կվճարվեր պարտավորության փոխանցման դիմաց չափման ամսաթվի դրությամբ հիմնական շուկայում կամ, վերջինիսի բացակայության դեպքում, ամենաբարեկապատ շուկայում, որին մուտքի ենարավորություն ունի Բանկը նշված ամսաթվի դրությամբ: Պարտավորության իրական արժեքն արտացոլում է վերջինիս չկատարման ռիսկը:

Հնարավորության դեպքում, Բանկը չափում է գործիքի իրական արժեքը՝ կիրառելով այդ գործիքի համար ակտիվ շուկայում գնանշվող գները: Շուկան համարվում է ակտիվ, եթե ակտիվի կամ պարտավորության գծով գործարքները տեղի են ունենում բավարար հաճախականությամբ և բավարար ծավալով՝ շարունակական հիմունքով գնային տեղեկատվություն տրամադրելու համար: Ակտիվ շուկայում գնանշվող գնի բացակայության դեպքում, Բանկը կիրառում է գնահատման մեթոդներ՝ դիտարկելի տվյալների օգտագործումն առավելագույնի և ոչ դիտարկելի տվյալների օգտագործումը նվազագույնի հասցնելու նպատակով: Ընտրված գնահատման մեթոդը ներառում է բոլոր այն գործոնները, որոնք շուկայի մասնակիցները հաշվի կառնեն նման հանգամանքներում:

Սկզբնական ճանաչման պահին ֆինանսական գործիքի իրական արժեքի լավագույն ապացույցը տվորաբար գործարքի գինն է, այսինքն՝ տրված կամ ստացված հատուցման իրական արժեքը: Եթե Բանկը որոշում է, որ սկզբնական ճանաչման պահին իրական արժեքը տարբերվում է գործարքի գնից, և իրական արժեքը չի հիմնավորվում է ակտիվ շուկայում նմանատիպ ակտիվի կամ պարտավորության համար գնանշվող գնով կամ հիմնված չէ գնահատման այնպիսի մեթոդի վրա, որն օգտագործում է միայն դիտարկելի տվյալները, ապա ֆինանսական գործիքի սկզբնական չափումն իրականացվում է իրական արժեքով՝ ճշգրտված սկզբնական ճանաչման պահին իրական արժեքի և գործարքի գնի միջև տարբերության հետաձգումով: Հետագայում, տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում համապատասխան հիմունքով՝ գործիքի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում, սակայն ոչ ուշ այն պահից, երբ գնահատումն ամբողջովին հիմնավորվում է շուկայի դիտարկելի տվյալներով կամ գործարքն ավարտվում է:

Եթե իրական արժեքով չափվող ակտիվը կամ պարտավորությունն ունի պահանջարկի և առաջարկի գին, ապա Բանկը չափում է ակտիվները և երկար դիրքերը պահանջարկի գնով, իսկ պարտավորությունները և կարճ դիրքերը՝ առաջարկի գնով:

Բանկը ճանաչում է իրական արժեքի հիերարխիայի մակարդակների միջև տեղի ունեցող փոխանցումներն այն հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ, որի ընթացքում կատարվել են այդ փոփոխությունները:

Հետագա չափման հետևանքով առաջացած շահույթ և վնաս

Ֆինանսական ակտիվների կամ պարտավորությունների իրական արժեքի փոփոխությունից առաջացած շահույթը կամ վնասը ճանաչվում է հետևյալ կերպ.

- շահույթում կամ վնասում ճանաչվում է այն ֆինանսական գործիքի գծով շահույթը կամ վնասը, որը դասակարգված է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող,
- վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների գծով շահույթը կամ վնասը ճանաչվում է սեփական կապիտալում՝ որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունք (բացառությամբ արժեզրկումից կորուստների և վաճառքի համար մատչելի պարտքային ֆինանսական գործիքների գծով փոխարժեքային տարբերություններից առաջացած շահույթի և վնասի), մինչև որ եզված ակտիվն ապաճանաչվում է և այդ պահին կուտակված շահույթը կամ վնասը, որը նախկինում ճանաչվել էր սեփական կապիտալում, ճանաչվում է շահույթում կամ վնասում: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվի գծով տոկոսները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գծով շահույթը կամ վնասը ճանաչվում է շահույթում կամ վնասում, երբ ֆինանսական ակտիվը կամ պարտավորությունն ապաճանաչվում է կամ արժեզրկվում է, ինչպես նաև՝ ամորտիզացիայի հաշվարկի ընթացքում:

Ապաճանաչում

Բանկն ապաճանաչում է ֆինանսական ակտիվն այն դեպքում, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ երբ փոխանցում է ֆինանսական ակտիվն այնպիսի գործարքում, որում փոխանցվում են ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու հատույցները, կամ որում Բանկը ոչ պահպանում, ոչ էլ փոխանցում է սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու հատույցները և չի պահպանում ֆինանսական ակտիվի նկատմամբ վերահսկողությունը: Ապաճանաչման պայմանները բավարարող փոխանցված ֆինանսական ակտիվի գծով տոկոսները, որոնք առաջացել կամ պահպանվել են Բանկի կողմից, ճանաչվում են որպես առանձին ակտիվ կամ պարտավորություն ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում: Բանկն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ պայմանագրային պարտականությունները կատարվում են, կամ չեղյալ են համարվում, կամ ուժը կորցնում են:

Բանկը կատարում է գործարքներ, որոնցով փոխանցում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված ակտիվները, սակայն պահպանում է փոխանցված ակտիվների սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու հատույցները կամ դրանց մի մասը: Եթե ակտիվի սեփականության հետ կապված բոլոր կամ ըստ էության բոլոր ռիսկերն ու հատույցները պահպանվում են, ապա փոխանցված ակտիվները չեն ապաճանաչվում:

Գործարքներում, որոնցում Բանկը ոչ փոխանցում է, ոչ էլ պահպանում է ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, այն ապաճանաչում է ակտիվը, եթե կորցնում է դրա նկատմամբ վերահսկողությունը:

Փոխանցումների այն գործարքներում, որոնցում Բանկը պահպանում է ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, Բանկը շարունակում է ճանաչել ֆինանսական ակտիվը այնքանով, որքանով շարունակվում է իր ներգրավվածությունը ֆինանսական ակտիվի մեջ, որն այն չափն է, որով նա ենթարկված է փոխանցված ակտիվի արժեքի փոփոխությունների ազդեցությանը:

Եթե Բանկը ձեռք է բերում իր սեփական պարտքը, ապա այն դուրս է բերվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունից, և պարտավորության հաշվեկշռային արժեքի ու վճարված հասուցման տարբերությունը ներառվում է պարտքի ժամկետից շուտ մարման արդյունքում առաջացած շահույթում կամ վնասում: Բանկը դուրս է գրում անհավարձազրելի համարվող ակտիվները:

Հետզնման և հակադարձ հետզնման պայմանագրեր

Վաճառքի և հետզնման պայմանագրերով ("ոեպո") վաճառված արժեթղթերը հաշվառվում են որպես գրավով ապահովված ֆինանսավորման գործարքներ, որի դեպքում արժեթղթերն արտացոլվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, իսկ պայմանագրային կողմի պարտավորությունը ներառվում է հետզնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարների կազմում: Վաճառքի և հետզնման գների տարբերությունը դիտվում է որպես տոկոսային ծախս և ճանաչվում է շահույթում կամ վնասում ոեպո պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Վերավաճառքի նպատակով հակադարձ հետզնման պայմանագրերով ("հակադարձ ոեպո") ստացվելիք գումարները գրանցվում են որպես հակադարձ հետզնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ: Չեղբերման և վերավաճառքի գների տարբերությունը դիտվում է որպես տոկոսային եկամուտ և ճանաչվում է շահույթում կամ վնասում հակադարձ հետզնման պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Եթե հետադարձ վաճառք նախատեսող պայմանագրի շրջանակներում գնված ակտիվները վաճառվում են երրորդ անձանց, ապա արժեթղթերը վերադարձնելու պարտավորությունն արտացոլվում է որպես անտրական նպատակներով պահվող պարտավորություն և չափվում է իրական արժեքով:

Ածանցյալ ֆինանսական գործիքներ

Ածանցյալ ֆինանսական գործիքները ներառում են սվոպերը, ֆորվարդները, ֆյուչերսները, տոկոսագրույքների, արտարժույթների փոխարժեքների, թանկարժեք մետաղների, բորսաներում շրջանառվող օպցիոնները, ինչպես նաև այս գործիքների ցանկացած համակցությունը:

Ածանցյալ գործիքների սկզբնական ճանաչումն իրականացվում է ածանցյալ գործիքի պայմանագրի կերման օրը գործող իրական արժեքով: Հետագայում ածանցյալ գործիքները վերաչափվում են իրական արժեքով: Բոլոր ածանցյալ գործիքները հաշվառվում են որպես ակտիվ՝ դրական իրական արժեքի դեպքում և որպես պարտավորություն՝ բացասական իրական արժեքի դեպքում:

Ածանցյալ գործիքների իրական արժեքի փոփոխությունները ճանաչվում են անմիջապես շահույթում կամ վնասում:

Թեև Բանկն ածանցյալ գործիքների առքն ու վաճառքն իրականացնում է ռիսկի հեջավորման նպատակով, այս գործիքները չեն համապատասխանում հեջի հաշվառման պահանջներին:

Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացվելով զուտ գումարով, միայն այն դեպքում, երբ Բանկն ունի ճանաչված գումարները հաշվանցելու ներկայումս իրագործելի իրավաբանորեն ամրագրված իրավունք, ինչպես նաև հաշվարկը զուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն:

Հիմնական միջոցներ

Մեխանական ակտիվներ

Հիմնական միջոցների միավորները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները, բացառությամբ շենքերի, որոնք հաշվառվում են վերագնահատված արժեքով, ինչպես ներկայացված է ստորև:

Երբ հիմնական միջոցի միավորը բաղկացած է օգտակար ծառայության տարբեր ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, այդ բաղկացուցիչները հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ:

Վերագնահատում

Շենքերը ենթակա են վերագնահատման կանոնավոր հիմունքով: Վերագնահատման հաճախականությունը կախված է վերագնահատման ենթակշիռների իրական արժեքների շարժից: Երբ շենքի հաշվեկշռային արժեքը վերագնահատման հետևանքով աճում է, աճը ճանաչվում է որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունք: Սակայն եթե այդ աճը վերականգնում է նույն ակտիվի շահույթում կամ վնասում ճանաչված նախկին վերագնահատումների արդյունքում առաջացած նվազումը, ապա այն ճանաչվում է շահույթում կամ վնասում: Երբ շենքի հաշվեկշռային արժեքը վերագնահատման հետևանքով նվազում է, նվազումը ճանաչվում է շահույթում կամ վնասում: Սակայն եթե այդ նվազումը վերականգնում է նույն ակտիվի սեփական կապիտալում որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունք ճանաչված նախկին վերագնահատումների արդյունքում առաջացած աճը, ապա այն ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում:

Մաշվածություն

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը առանձին ակտիվների օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է հիմնական միջոցի ձեռք բերման պահից, իսկ սեփական ուժերով կառուցված ակտիվների դեպքում՝ վերջիններս կառուցումն ավարտելու և շահագործման հանձնելու պահից: Հողի գծով մաշվածություն չի հաշվարկվում:

Օգտակար ծառայության գնահատված ժամկետները հետևյալն են.

շենքեր	50 տարի
վարձակալված գույքի քարեխտվում	20 տարի
հումակարգիչներ և կապի սարքավորումներ	4-10 տարի
փոխադրամիջոցներ	10 տարի
տնտեսական գույք	10 տարի

Ոչ կյուրթական ակտիվներ

Ձեռք բերված ոչ կյուրթական ակտիվները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Համակարգչային ծրագրերի լիցենզիաների ձեռքբերման ծախսերը կապիտալացվում են որպես առանձին ծրագրի ձեռքբերման և ներդրման ծախսեր:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կան վնասում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ կյուրթական ակտիվների օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Ոչ կյուրթական ակտիվների օգտակար ծառայության գնահատված ժամկետը կազմում է 10 տարի:

Արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Բանկը գնահատում է, թե արդյոք առկա է անկողմնակալ վկայություն ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական ակտիվների խմբի արժեզրկված լինելու մասին: Լճան վկայության առկաության դեպքում, Բանկը որոշում է արժեզրկումից կորստի գումարը:

Ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական ակտիվների խումբն արժեզրկվում է, և արժեզրկումից կորուստներ ճանաչվում են այն և միայն այն դեպքում, երբ առկա է անկողմնակալ վկայություն ֆինանսական ակտիվի սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ ավելի դեպքերի արդյունք հանդիսացող արժեզրկման մասին (կորստի դեպք), և այդ դեպքը (կամ դեպքերը) ազդեցություն է ունեցել ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական ակտիվների խմբի գծով դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերի վրա, որոնք հնարավոր է արժանահավաստորեն գնահատել:

Ֆինանսական ակտիվների արժեզրկման անկողմնակալ վկայությունը կարող է ներառել պարտավորությունների չկատարումը կամ վճարումների հետաձգումը վարկառուի կողմից, վարկային պայմանագրի պայմանների խախտումները վարկառուի կողմից, ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական ակտիվների խմբի պայմանների այնպիսի վերանայումը, որը Բանկն այլ հանգամանքներում չէր դիտարկի, վարկառուի կամ թողարկողի սնանկացման հայտանիշները, արժեթղթի համար գործող շուկայի վերացումը, գրավի արժեքի նվազումը կամ ակտիվների խմբին վերաբերող այլ դիտարկելի տվյալները, ինչպիսիք են խմբի կազմի մեջ մտնող վարկառուների վճարունակության վատթարացումը, կամ տվյալ խմբի կազմի մեջ մտնող վարկառուների կողմից պարտականությունների չկատարման հետ փոխկապակցված տնտեսական պայմանների փոփոխությունը:

Բացի այդ, վաճառքի համար մատչելի բաժնային արժեթղթերում ներդրման իրական արժեքի՝ իր սկզբնական արժեքից նշանակալի կամ տեղական նվազումը նույնպես հանդիսանում է արժեզրկման անկողմնակալ վկայություն:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները հիմնականում ներառում են վարկերը և այլ դերիատորական պարտքերը («վարկեր և դերիատորական պարտքեր»): Բանկը վերանայում է իր վարկերը և դերիատորական պարտքերը արժեզրկումը կանոնավոր հիմունքով գնահատելու նպատակով:

Բանկը նախ գնահատում է, թե արդյոք գոյություն ունի արժեզրկման անկողմնակալ վկայություն այն առանձին վարկերի ու դեբիտորական պարտքերի գծով, որոնք առանձին վերցված նշանակալի են, և ապա առանձին կամ հավաքական հիմունքով՝ այն վարկերի ու դեբիտորական պարտքերի գծով, որոնք առանձին վերցված նշանակալի չեն: Եթե Բանկը որոշում է, որ առանձին գնահատված վարկի կամ դեբիտորական պարտքի գծով՝ լինի այն նշանակալի կամ ոչ նշանակալի, արժեզրկման անկողմնակալ վկայություն չկա, ապա այն ներառում է այդ վարկը կամ դեբիտորական պարտքը վարկային ռիսկի համանման բնութագրերով վարկերի և դեբիտորական պարտքերի խմբում և դրանք հավաքական հիմունքով գնահատում արժեզրկման տեսանկյունից: Այն վարկերը և դեբիտորական պարտքերը, որոնք առանձին են գնահատվում արժեզրկման տեսանկյունից, և որոնց գծով արժեզրկումից կորուստը ճանաչվում կամ շարունակվում է ճանաչվել, չեն ներառվում արժեզրկման հավաքական հիմունքով գնահատման մեջ:

Եթե սակա է վարկի կամ դեբիտորական պարտքի գծով արժեզրկումից կորստի անկողմնակալ վկայություն, ապա կորստի գումարը չափվում է որպես վարկի կամ դեբիտորական պարտքի հաշվեկշռային արժեքի և այդ վարկի կամ դեբիտորական պարտքի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով գեղջված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի, ներառյալ երաշխիքների գծով ստացվելիք գումարների և գրավի ներկա արժեքի միջև տարբերությունը: Պայմանագրով նախատեսված դրամական միջոցների հոսքերը և նախկին փորձի վրա հիմնված վնասները, որոնց գծով ներկա տնտեսական պայմաններն արտացոլող դիտարկելի տվյալների հիման վրա կասարգվել են ճշգրտումներ, հանդիսանում են դրամական միջոցների ակնկալվող հոսքերի գնահատման հիմք: Որոշ դեպքերում դիտարկելի տվյալները, որոնք պահանջվում են վարկի կամ դեբիտորական պարտքի գծով արժեզրկումից կորստի չափը գնահատելու համար, կարող են լինել սահմանափակ կամ այլևս ոչ ամբողջությամբ ասեղնող տվյալ հանգամանքներին: Դա կարող է տեղի ունենալ, երբ վարկատուն ֆինանսական դժվարությունների մեջ է, և համանման վարկատուների վերաբերյալ թիչ պատմական տվյալներ կան: Այդպիսի դեպքերում, ցանկացած արժեզրկումից կորստի չափը գնահատելու համար Բանկն օգտագործում է իր փորձը և դատողությունները:

Վարկերի և դեբիտորական պարտքերի գծով արժեզրկումից կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում և հակադարձվում են այնքանով, որքանով փոխհատուցվող գումարի հետագա աճը կարելի է անկողմնակալորեն կապել արժեզրկումից կորստի ճանաչումից հետո տեղի ունեցած իրադարձությանը:

Այն դեպքերում, երբ վարկի հավաքագրումը հնարավոր չէ, վարկը դուրս է գրվում ի հաշիվ արժեզրկման գծով ձևավորված համապատասխան պահուստի: Բանկը վարկի մնացորդը (և արժեզրկման գծով ձևավորված ցանկացած պահուստը) դուրս է գրում, երբ ղեկավարությունը որոշում է, որ վարկը ենթակա չէ հավաքագրման և ձեռնարկվել են վարկի վերադարձի հետ կապված բոլոր անհրաժեշտ քայլերը:

Սկզբնական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ

Սկզբնական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները ներառում են վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներում ընդգրկված չգնանշվող բաժնային գործիքները, որոնք չեն հաշվառվում իրական արժեքով, քանի որ այն հնարավոր չէ արժանահավատորեն գնահատել: Եթե սակա է այդ ներդրումների գծով արժեզրկումից կորստի անկողմնակալ վկայություն, ապա կորստի գումարը չափվում է որպես ներդրման հաշվեկշռային արժեքի և նմանատիպ ֆինանսական ակտիվների ներկա շուկայական հասույցադրույքով գեղջված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի ներկա արժեքի միջև տարբերությունը:

Այս ներդրումների գծով արժեզրկումից կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում և ենթակա չեն հակադարձման:

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների գծով արժեզրկումից կորուստները ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված կուտակված վնասը փոխանցելով շահույթի կամ վնասի կազմ՝ որպես վերադասակարգման ճշգրտում: Կուտակված վնասը, որը այլ համապարփակ ֆինանսական արդյունքից վերադասակարգվում է շահույթի կամ վնասի կազմ, հանդիսանում է ձեռքբերման արժեքի՝ հանած մայր գումարի մարումները ու մաշվածությունը, և ընթացիկ իրական արժեքի՝ հանած նախկինում շահույթում կամ վնասում ճանաչված արժեզրկումից կորուստները, միջև տարբերությունը: Ժամանակի արժեքին վերագրելի արժեզրկման գծով պահուստի փոփոխություններն արտացոլվում են որպես տոկոսային եկամտի բաղադրիչ:

Եթե հետագա ժամանակաշրջանում արժեզրկված վաճառքի համար մատչելի պարտքային արժեթղթի իրական արժեքն աճում է, և այդ աճը հնարավոր է անկողմնակալորեն կապել շահույթում կամ վնասում արժեզրկումից կորստի ճանաչումից հետո տեղի ունեցած իրադարձությանը, այդ արժեզրկումից կորուստը հակադարձվում է, իսկ հակադարձված գումարը ճանաչվում է շահույթում կամ վնասում: Այնուամենայնիվ, արժեզրկված վաճառքի համար մատչելի բաժնային արժեթղթի իրական արժեքի ցանկացած հետագա վերականգնումը ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում:

Ոչ ֆինանսական ակտիվներ

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ այլ ոչ ֆինանսական ակտիվները, բացառությամբ հետաձգված հարկերի, գնահատվում են արժեզրկման հայտանիշ բացահայտելու նպատակով: Գուդվիլի փոխհատուցվող գումարը գնահատվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ: Ոչ ֆինանսական ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է որպես նրանց իրական արժեքից (հանած վաճառքի ծախսերը) և օգտագործման արժեքից առավելագույնը:

Օգտագործման արժեքը գնահատելիս դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերը գնդվում են իրենց ներկա արժեքով՝ օգտագործելով մինչև հարկումը գեղչման այն դրույքը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի շուկայի ներկա գնահատականը և ակտիվին բնորոշ ռիսկերը: Այլ ակտիվներից առաջացող դրամական միջոցների ներհոսքից մեծապես անկախ և դրամական միջոցների ներհոսք չառաջացնող ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է այն դրամաստեղծ միավորի համար, որին պատկանում է տվյալ ակտիվը: Արժեզրկումից կորուստը ճանաչվում է, երբ ակտիվի կամ նրա դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է նրա փոխհատուցվող գումարը:

Ոչ ֆինանսական ակտիվների գծով արժեզրկումից կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում և հակադարձվում է միայն այն դեպքում, եթե փոխվել են փոխհատուցվող գումարը որոշելու համար օգտագործվող գնահատումները: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է միայն այն չափով, որ ակտիվի հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ՝ առանց համապատասխան մաշվածության և անորտիզացիայի, եթե արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ: Գուդվիլի գծով արժեզրկումից կորուստը չի հակադարձվում:

Պահուստներ

Պահուստը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում է, երբ Բանկը որպես անցյալ դեպքերի արդյունք ունի իրավական կամ կառուցողական պարտականություն, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե ազդեցությունն էական է, պահուստները որոշվում են գեղչելով ակնկալվող դրամական հոսքերը՝ օգտագործելով գեղչման միջև հարկումը գործող այն դրույքը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի շուկայի ներկա գնահատականը և, անհրաժեշտության դեպքում՝ պարտավորությանը բնորոշ ռիսկերը:

Վարկային պարտավորվածություններ

Բնականոն գործունեության ընթացքում Բանկը հանձն է առնում վարկային պարտավորվածություններ, որոնք ներառում են չօգտագործված վարկային պարտավորվածությունները, ակրեդիտիվները և երաշխիքները, ինչպես նաև տրամադրում է վարկային ապահովագրման այլ տեսակներ:

Ֆինանսական երաշխավորություններն իրենցից ներկայացնում են պայմանագրեր, որոնք պարտավորեցնում են Բանկին կատարել որոշակի վճարումներ, որոնք կփոխհատուցեն երաշխավորության սեփականատիրոջ այն վնասները, որոնք նա կկրեր, եթե առանձին պարտապանն ի վիճակի չլիներ կատարել վճարումները պարտքային գործիքի պայմաններով նախատեսված ժամկետներում:

Ֆինանսական երաշխավորության գծով պարտավորությունը սկզբնապես ճանաչվում է իրական արժեքով, հաշվի չառնելով գործարքի հետ կապված ծախսումները, և հետագայում չափվում է երկու մեծություններից առավելագույնով սկզբնապես ճանաչված գումարը՝ հանած կուտակված անորոշագիտան կամ երաշխիքի գծով կորուստների պահուստը: Ֆինանսական երաշխավորությունների գծով կորուստների պահուստը և վարկավորման այլ պարտավորվածությունները ճանաչվում են, երբ գոյություն ունի վնաս կրելու հավանականություն և այդ վնասը հնարավոր է արժանահավատորեն չափել:

Ֆինանսական երաշխավորության գծով պարտավորությունները և վարկային այլ պարտավորվածությունների գծով պահուստները ներառվում են այլ պարտավորությունների կազմում:

Վարկային պարտավորվածությունները չեն ճանաչվում, բացառությամբ հետևյալ պարտավորվածությունների.

- վարկային պարտավորվածություններ, որոնք Բանկը նախատեսում է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ,
- եթե Բանկն ունի իր վարկային պարտավորվածություններից առաջացող ակտիվների՝ դրանց առաջացումից կարճ ժամանակ անց վաճառելու նախնին պրակտիկա, ապա նույն դասում գտնվող բոլոր վարկային պարտավորվածությունները դիտվում են որպես անանցյալ գործիքներ,
- վարկային պարտավորվածություններ, որոնք կարող են մարվել գուտ հիմունքով՝ դրամական միջոցներով կամ մեկ այլ ֆինանսական գործիք մատակարարելով կամ թողարկելով,
- շուկայականից ջանք առկոսադրույքով վարկ տրամադրելու պարտավորվածություններ:

Բաժնետիրական կապիտալ

Սովորական բաժնետոմսեր

Սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես սեփական կապիտալ: Սովորական բաժնետոմսերի և բաժնետոմսերի օպցիոնների թողարկմանն ուղղակիորեն վերագրելի լրացուցիչ ծախսերը ճանաչվում են որպես սեփական կապիտալի նվազեցում՝ առանց հարկային հետևանքների:

Էմիսիոն եկամուտ

Թողարկված բաժնետոմսերի անվանական արժեքից ավել վճարվող գումարը ճանաչվում է որպես էմիսիոն եկամուտ:

Շահաբաժիններ

Շահաբաժիններ հայտարարելու և վճարելու Բանկի կարողությունը կարգավորվում է Չայաստանի
Շահաբաժնության օրենսդրությամբ սահմանված կանոնակարգերով:

Սովորական բաժնետոմսերի շահաբաժիններն արտացոլվում են որպես չբաշխված շահույթի բաշխում այն ժամանակահատվածում, երբ հայտարարվում են:

Հարկում

Շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն մասի, որը վերաբերում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքի եռզվածներին կամ ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված բաժնետերերի հետ իրականացված գործառնություններին, որի դեպքում շահութահարկը ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում կամ ուղղակիորեն սեփական կապիտալում:

Ընթացիկ հարկ

Ընթացիկ հարկը տարվա հարկվող եկամտի գծով ակնկալվող վճարման ենթակա հարկի գումարն է, որը հաշվարկվում է կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ, և նախորդ տարիների վճարման ենթակա հարկերի գծով կատարված ճշգրտումները:

Հետաձգված հարկ

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները ճանաչվում են ֆինանսական հաշվետվությունների նպատակների համար օգտագործվող ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակների համար օգտագործվող գումարների ժամանակավոր տարբերությունների գծով: Հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ չեն ճանաչվում

ակտիվների կամ պարտավորությունների սկզբնական ճանաչման համար ձեռնարկատիրական գործունեության միավորում չհանդիսացող գործարքում, որն ազդեցություն չունի հաշվապահական կամ հարկվող շահույթի վրա:

Հետաձգված հարկային ակտիվների և պարտավորությունների չափումն արտացոլում է այն հարկային հետևանքները, որոնք կարող են առաջանալ, եթե Բանկը կիրառի այն մոտեցումը, որով ակնկալում է վերականգնել կամ մարել իր ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքը հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չափում են կիրառելով հարկերի այն դրույթները, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ժամանակավոր տարբերությունների նկատմամբ վերջիններս հակադարձելիս՝ հիմք ընդունելով այն օրենքների դրույթները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ:

Հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են միայն այն չափով, որքանով հավանական է, որ առկա կլինի ապագա հարկվող շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել ժամանակավոր տարբերությունները, չօգտագործված հարկային վնասները և արտոնությունները: Հետաձգված հարկային ակտիվները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և նվազեցվում են այնքանով, որքանով հավանական չէ, որ հարկի գծով համապատասխան օգուտը կարող է իրացվել:

Եկամտի և ծախսի ճանաչում

Տոկոսային եկամուտը և ծախսը ճանաչվում են շահույթում կամ վնասում կիրառելով արդյունավետ տոկոսադրույթի մեթոդը:

Վարկերի տրամադրման, սպասարկման և այլ վճարները, որոնք գործարքի հետ կապված ծախսերի հետ միասին դիտարկվում են որպես վարկի ընդհանուր շահութաբերության անբաժան մաս, հետաձգվում են և ամորտիզացվում են տոկոսային եկամտի կազմում ֆինանսական գործիքի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույթի մեթոդը:

Այլ վճարները, կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտը և ծախսը ճանաչվում են շահույթում կամ վնասում համապատասխան ծառայությունը տրամադրելիս:

Գործառնական վարձակալության գծով վճարները ճանաչվում են շահույթում կամ վնասում գծային մեթոդով վարձակալության գործողության ժամկետի ընթացքում:

Համադրելի տեղեկատվություն

Համադրելի տեղեկատվությունը վերադասակարգվել է հաշվետու տարվա ներկայացման հետ համապատասխանություն ապահովելու նպատակով:

3. Տոկոսային և նմանատիպ եկամուտներ և ծախսեր

Տեսք 22-ը շտաբ

Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	<u>01/07/2017թ. 30/09/2017թ.</u>	<u>01/01/2017թ. 30/09/2017թ.</u>	<u>01/07/2016թ. 30/09/2016թ.</u>	<u>01/01/2016թ. 30/09/2016թ.</u>
Տոկոսային եկամուտներ բանկերում և այլ ֆինանսական կազմակերպություններում տեղաբաշխված միջոցներից	102,243	184,710	3,734	20,657
Տոկոսային եկամուտ հաճախորդներին տրված վարկերից և փոխառվածություններից	5,319,174	16,216,197	2,355,326	7,078,655
Տոկոսային եկամուտ արժեթղթերից	801,919	2,181,659	367,692	788,313
Տոկոսային եկամուտ «Ռեպո» պայմանագրերից	53,709	159,084	-	7,225
Այլ տոկոսային եկամուտ	3,636	4,778	-	-
Ընդամենը	6,280,681	18,746,428	2,726,752	7,894,850



Տեսք 22-ը շտաբ


Տոկոսային և նմանատիպ ծախսեր	<u>01/07/2017թ. 30/09/2017թ.</u>	<u>01/01/2017թ. 30/09/2017թ.</u>	<u>01/07/2016թ. 30/09/2016թ.</u>	<u>01/01/2016թ. 30/09/2016թ.</u>
Տոկոսային ծախսեր բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններից ներգրավված միջոցների դիմաց	654,977	2,625,300	422,085	1,193,212
Տոկոսային ծախսեր հաճախորդների ժամկետային ավանդների և ընթացիկ հաշիվների դիմաց	2,949,626	8,794,047	1,289,188	3,799,418
Տոկոսային ծախսեր բանկի կողմից թողարկված արժեթղթերի դիմաց	130,301	273,889	-	-

Տոկոսային ծախսեր «Ռեպո» պայմանագրերի դիմաց

141,122 216,685 47,743 87,725

Այլ տոկոսային ծախսեր
Շղթայներ

8,700 43,410 6,522 72,579
3,884,726 11,953,331 1,765,538 5,152,934




Ցուտ տոկոսային և նմանատիպ եկամուտ	<u>2,395,955</u>	<u>6,793,097</u>	<u>961,214</u>	<u>2,741,916</u>
-----------------------------------	------------------	------------------	----------------	------------------

4. Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ և ծախսեր

Հազար ՀՀ դրամ

Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	01/07/2017թ. 30/09/2017թ.	01/01/2017թ. 30/09/2017թ.	01/07/2016թ. 30/09/2016թ.	01/01/2016թ. 30/09/2016թ.
Գրամարկղային գործառնություններից Հաշվարկային ծառայություններից և սպասարկումից	14,775	32,827	2,139	22,062
Վճարային քարտերի սպասարկումից	70,386	338,958	84,165	125,441
Վճարային քարտերի սպասարկումից	119,836	213,324	47,447	180,532
Այլ կոմիսիոն վճարներ	437	437	-	5,703
Շղթայներ	205,434	585,546	133,751	333,738



Տեսաթիվ 22 հղում

Կումիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր


Թրոնակցային և այլ հաշիվների դիմաց կումիսիոն վճարներ

Վճարային բարտերով գործառնությունների գծով վճարներ

Արտարժույթով և արժեթղթերով գործառնություններից

Այլ կումիսիոն վճարներ
Ընդամենը

	01/07/2017թ. 30/09/2017թ.	01/01/2017թ. 30/09/2017թ.	01/07/2016թ. 30/09/2016թ.	01/01/2016թ. 30/09/2016թ.
Թրոնակցային և այլ հաշիվների դիմաց կումիսիոն վճարներ	20,482	42,535	7,439	19,589
Վճարային բարտերով գործառնությունների գծով վճարներ	9,329	26,223	5,842	28,326
Արտարժույթով և արժեթղթերով գործառնություններից	5,377	11,713	911	2,745
Այլ կումիսիոն վճարներ	539	1,108	249	739
Ընդամենը	35,727	81,579	14,441	51,399



5. Զուտ եկամուտ առևտրային գործունեությունից

Աղյուսակ 27 (ընդ.)


Հաճույք/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքներից

Զուտ շահույթ արտարժույթային պայմանագրերից

Զուտ շահույթ ֆինանսական ակտիվների առք ու վաճառքից

Շղթամներ

	01/07/2017թ. 30/09/2017թ.	01/01/2017թ. 30/09/2017թ.	01/07/2016թ. 30/09/2016թ.	01/01/2016թ. 30/09/2016թ.
Զուտ շահույթ արտարժույթային պայմանագրերից	(128,951)	73,285	-	17,801
Զուտ շահույթ ֆինանսական ակտիվների առք ու վաճառքից	(26,464)	(99,261)	-	-
Շղթամներ	(155,415.0)	(25,976)	-	17,801



Աղյուսակ 28 (ընդ.)

Վաճառքի համար մատչելի ակտիվներից

Զուտ շահույթ վաճառքի համար մատչելի ակտիվներից

Շղթամներ

	01/07/2017թ. 30/09/2017թ.	01/01/2017թ. 30/09/2017թ.	01/07/2016թ. 30/09/2016թ.	01/01/2016թ. 30/09/2016թ.
Զուտ շահույթ վաճառքի համար մատչելի ակտիվներից	-	321,542	-	-
Շղթամներ	-	321,542	-	-


Արտարժույթային գործառնություններից

Արտարժույթի առք ու վաճառքից ստացված զուտ եկամուտ

Արտարժույթի վերադասակարգումից ստացված զուտ եկամուտ

Շղթամներ

	01/07/2017թ. 30/09/2017թ.	01/01/2017թ. 30/09/2017թ.	01/07/2016թ. 30/09/2016թ.	01/01/2016թ. 30/09/2016թ.
Արտարժույթի առք ու վաճառքից ստացված զուտ եկամուտ	86,660	204,474	50,388	159,700
Արտարժույթի վերադասակարգումից ստացված զուտ եկամուտ	135,036	(45,103)	(111,337)	(41,212)
Շղթամներ	221,696	159,371	(60,949)	118,488




Տեսաթիվ 26-րդ

Այլ Գործառնություններից

Արտարժուրային գործառնություններից ստացված զուտ նկամուտ
 Արտարժուրային գործառնություններից ստացված զուտ նկամուտ
Շղթաներ

	01/07/2017թ. 30/09/2017թ.	01/01/2017թ. 30/09/2017թ.	01/07/2016թ. 30/09/2016թ.	01/01/2016թ. 30/09/2016թ.
Արտարժուրային գործառնություններից ստացված զուտ նկամուտ	(1,165)	(1,312)	-	-
Արտարժուրային գործառնություններից ստացված զուտ նկամուտ	1,287	1,329	-	-
Շղթաներ	122	17	-	-



Զուտ նկամուտ արտարժուրային գործառնություններից

	66,403	454,954	(60,949)
			136,289

6. Այլ գործառնական եկամուտ

Տարածք - ՀՀ դրամ


Այլ գործառնական եկամուտներ	01/07/2017թ. 30/09/2017թ.	01/01/2017թ. 30/09/2017թ.	01/07/2016թ. 30/09/2016թ.	01/01/2016թ. 30/09/2016թ.
Եկամուտներ ստացված առլվերից և սուպերներից	233,114	739,292	131,354	503,770
Օգուտներ հիմնական միջոցների և այլ գույքի օտարումից	125	1,364	1,578	5,732
	5,794	75,537	45,784	65,539
Այլ եկամուտներ Ընդամենը	239,033	816,193	178,716	575,041



7. Արժեզրկման ծախս

Տարածք - ՀՀ դրամ


Արժեզրկումից կորուստներ	01/07/2017թ. 30/09/2017թ.	01/01/2017թ. 30/09/2017թ.	01/07/2016թ. 30/09/2016թ.	01/01/2016թ. 30/09/2016թ.
Հաճախորդներին տրված վարկեր, փոխառավորություններ	(480,674)	(647,858)	(554,961)	(2,463,250)
	30,540	(24,637)	(10,475)	(50,197)
Այլ արկտիվներ Ընդամենը	(450,134)	(672,495)	(565,436)	(2,513,447)



8. Ընդհանուր վարչական ծախսեր

Տեսաթիվ 22-դրամ

Ընդհանուր վարչական ծախսեր	01/07/2017թ. 30/09/2017թ.	01/01/2017թ. 30/09/2017թ.	01/07/2016թ. 30/09/2016թ.	01/01/2016թ. 30/09/2016թ.
Անձնակազմի գծով ծախսեր	672,608	1,851,984	491,626	1,531,087
Հ. մ. և ոչ կյուր ակտի ամորտ ծախսեր	93,465	274,580	70,177	232,239
Գույազդային և ներկայացուց ծախսեր	18,240	56,379	15,250	44,007
Գործառ վարձակալ գծով ծախսեր	49,182	133,693	43,065	143,907
Կապի և հաղորդի միջոցների գծով ծախսեր	15,084	44,157	13,471	41,694
Ծախսեր հարկերի և այլ պարտ վճ գծով	70,795	184,349	56,939	225,454
Վերանորոգման և պահպ ծախսեր	60,292	162,424	46,732	153,457
Գործուղման ծախսեր	8,384	27,197	2,646	19,890
Անվտանգության գծով ծախսեր	27,248	95,065	31,915	116,154
Գրասենյակային ծախսեր	6,474	21,187	4,943	17,419
Աուդիտ և խորհ ծառ գծով ծախսեր	12,824	36,419	10,781	27,735
Այլ վարչական ծախսեր	28,287	94,772	27,409	88,709
Ընդամենը	1,062,883	2,982,206	814,954	2,641,752




Բանկի աշխատակիցների միջին քանակը հաշվետու եռամսյակում կազմել է 403 (2016թ. 3-րդ եռամսյակում՝ 377):

9. Այլ գործառնական ծախսեր

ձեռքար 22 հրամ.


Այլ գործառնական ծախսեր	01/07/2017թ. 30/09/2017թ.	01/01/2017թ. 30/09/2017թ.	01/07/2016թ. 30/09/2016թ.	01/01/2016թ. 30/09/2016թ.
Վճարված տույժեր և տուգանքներ	4,514	9,805	-	2,831
Բնկառացիայի համար կատարված վճարումներ	14,164	19,936	8,817	21,501
Կորուստներ հիմնական միջոցների և այլ գույքի օտարումից	495	1,241	354	14,904
Այլ ծախսեր	209,000	445,075	157,776	308,348
<i>այդ թվում՝ վճարային գործառնությունների գծով</i>	<i>51,641</i>	<i>137,666</i>	<i>39,557</i>	<i>110,440</i>
Ընդամենը	228,173	476,057	166,947	347,584



10. Շահութահարկի գծով ծախսեր

ճաշար 22 դրամ

Շահութահարկի գծով ծախս	<u>01/07/2017թ. 30/09/2017թ.</u>	<u>01/01/2017թ. 30/09/2017թ.</u>	<u>01/07/2016թ. 30/09/2016թ.</u>	<u>01/01/2016թ. 30/09/2016թ.</u>
Ընթացիկ հարկի գծով ծախս	455,746	456,405	3,080	3,080
Հետաձգված հարկի գծով ծախս/(հատուցում)	(228,586)	691,402	(39,399)	(267,775)
Ընդամենը	227,160	1,147,807	(36,319)	(264,695)



Հայաստանի Հանրապետությունում շահութահարկի դրույքաչափը կազմում է 20% (2016թ. 20%): 22 հարկային օրենսդրության և ՖՀՄՄ-ի միջև եղած տարբերությունը մի շարք ակտիվների և պարտավորությունների գծով առաջացնում է ժամանակավոր տարբերություններ ֆինանսական հաշվետվությունների կազմման նպատակներով դրանց հաշվեկշռային արժեքների և հարկման բազայի միջև: Հետաձգված շահութահարկի գումարը հաշվարկվում է 20% հիմնական դրույքաչափը կիրառելով:

11. Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ

ճաշար 22 դրամ

Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ	<u>01/07/2017թ. 30/09/2017թ.</u>	<u>01/01/2017թ. 30/09/2017թ.</u>	<u>01/07/2016թ. 30/09/2016թ.</u>	<u>01/01/2016թ. 30/09/2016թ.</u>
Ժամանակաշրջանի գուտ շահույթ	902,743	3,290,730	(312,583)	(1,502,063)
Բաժնետոմսերի քանակը	679,437	679,437	273,926	273,926
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթ	1.3	4.8	(1.3)	(5.5)

12. ՀՀ կենտրոնական բանկում տեղաբաշխված միջոցներ

Չափաբ. ՀՀ դրամ

ՀՀ կենտրոնական բանկում տեղաբաշխված միջոցներ

	30/09/17թ.	31/12/16թ.
Թղթակցային հաշիվներ ՀՀ ԿԲ-ում	6,463,127	24,366,895
Պեղումացված միջոցներ ՀՀ ԿԲ-ում	120,000	320,000
Ավանդներ ՀՀ ԿԲ-ում	-	3,000,779
ՀՀ կենտրոնական բանկում տեղաբաշխված միջոցներ	6,583,127	27,687,674



2017թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ թղթակցային հաշիվները ՀՀ ԿԲ-ում ներառում են նաև ՀՀ բանկային օրենսդրության համաձայն ՀՀ ԿԲ-ում տեղաբաշխված պարտադիր պահուստները, որոնք հաշվարկվում են Բանկի կողմից ներդրված դրամային որոշ միջոցների 2%-ի և արտարժույթով որոշ միջոցների 18%-ի չափով:

13. Պահանջներ բանկերի նկատմամբ

Չափաբ. ՀՀ դրամ

	30/09/17թ.	31/12/16թ.
Թղթակցային / կուսորո / հաշիվներ		
Ընդամենը	234,474	481,916
Միջբանկային վարկեր և տվանդներ		
Ընդամենը	5,024,363	-
Այլ պահանջներ բանկերի նկատմամբ		
Ընդամենը	281,598	-
Ընդամենը պահանջներ բանկերի նկատմամբ	5,540,435	481,916



14. Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ

	30/09/17թ. հազ. դրամ	31/12/16թ. հազ. դրամ
ԱԿՏԻՎՆԵՐ		
Ամանցյալ ֆինանսական գործիքներ		
Արտարժույթի առք ու վաճառքի պայմանագրեր	51,653	77,106
	51,653	77,106
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		
Ամանցյալ ֆինանսական գործիքներ		
Արտարժույթի առք ու վաճառքի պայմանագրեր	779	61,386
	779	61,386

- 1.1. «ԱՆԵԼԻՔ ԲԱՆԿ» Փակ Բաժնետիրական Ընկերությունը (այսուհետ՝ Բանկ), ստեղծվել է «Անելիք բանկ» ՍՊԸ վերակազմավորման արդյունքում համաձայն Բանկի բաժնետերերի 2007թ.-ի ապրիլի 7-ի ժողովի որոշման (արձանագրություն թիվ 1) և հանդիսանում է «Անելիք բանկ» ՍՊԸ-ի իրավահաջորդը, որը ստեղծվել է Բանկի հիմնադիրների 1990թ. հուլիսի 9-ին կայացած ընդհանուր ժողովի որոշմամբ (արձանագրություն թիվ 1), համաձայն 1990թ. օգոստոսի 1-ին կնքված հիմնադիր պայմանագրի:
- 1.2. Բանկի հիմնադիր փաստաթուղթը սույն կանոնադրությունն է, որի պահանջները պարտադիր են Բանկի բաժնետերերի և կառավարման մարմինների համար:
- 1.3. Բանկի իրավունակությունը ծագում է նրա ստեղծման (գրանցման) և դադարում վերակազմակերպման (միացման, վերակազմավորման) և լուծարման պահից:
- 1.4. Բանկն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է «Քաղաքացիական օրենսգրքով, «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով, ՀՀ այլ օրենքներով, ՀՀ Կենտրոնական բանկի և այլ իրավական ակտերով, սույն կանոնադրությամբ և Բանկի ներքին իրավական այլ ակտերով:
- 1.5. Բանկի լրիվ ֆիրմային անվանումն է՝

I. General provisions

- 1.1 Anelik Bank Closed Joint Stock Company (the "Bank") was established as a result of reorganisation of Anelik Bank LLC pursuant to the resolution of the participants of the Bank dated 7 April, 2007 (minutes N 1) and is the legal successor of Anelik Bank LLC which was established pursuant to the resolution of the general meeting of founders of the Bank, dated 9 July, 1990 (minutes N 1) in accordance with founding agreement signed on 1 August 1990.
- 1.3. The founding document of the Bank is this charter, provisions of which are binding for the shareholders and management bodies of the Bank.
- 1.4. The legal capacity of the Bank arises from the moment of its establishment (registration) and terminates upon its reorganization (merger, restructuring) or liquidation.
- 1.4. During its activity the Bank is guided by Civil Code of the RA, the Law of the RA On Banks and Banking, other laws of the RA, legal acts of the Central Bank of the RA and other legal acts, this charter and the bylaws of the Bank.
- 1.5. The full name of the Bank is:

հայերեն՝ «ԱՆԵԼԻՔ ԲԱՆԿ» Փակ
Բաժնետիրական Ընկերություն
անգլերեն՝ "ANELIK BANK" Closed Joint Stock
Company
ռուսերեն՝ Закрытое Акционерное Общество «БАНК
АНЕЛИК»

1.6. Բանկի կրճատ անվանումն է՝
հայերեն՝ «ԱՆԵԼԻՔ ԲԱՆԿ» ՓԲԸ
անգլերեն՝ "ANELIK BANK" CJSC
ռուսերեն՝ ЗАО «БАНК АНЕЛИК»

1.7. Բանկի իրավաբանական, գտնվելու և փոստային
հասցեն է՝
Հայաստանի Հանրապետություն, 0010, ք.Երևան,
Վարդանանց փող. 13:

2. Բանկի իրավական կարգավիճակը

2.1. Բանկը շահույթ հետապնդող առևտրային
կազմակերպություն է:

2.2. Բանկը համարվում է ստեղծված և ձեռք է բերում
իրավաբանական անձի կարգավիճակ Հայաստանի
Հանրապետության Կենտրոնական բանկում
գրանցվելու պահից և իրավունք ունի իրականացնել
բանկային գործունեություն և զբնեցով սահմանված
ֆինանսական գործառնություններ՝ ՀՀ Կենտրոնական
բանկի կողմից բանկային գործունեության լիցենզիա
ստանալու պահից:

2.3. Բանկն ունի բաժնետերերի զույգից առանձնացված
և սեփականության իրավունքով իրեն պատկանող
զույգ, ինքնուրույն հաշվեկշիռ, իր անվամբ և
խորհրդանիշով կտր կնիք, անկյունային դրոշմակնիք,
ձևաթղթեր, համարային կնիքներ Բանկի տարածքային
ստորաբաժանումների համար:

2.4. Բանկն իրավունք ունի իր անունից կնքել
պայմանագրեր, ձեռք բերել զույգային և անձնական ոչ
զույգային իրավունքներ, կրել պարտականություններ,
դատարաններում հանդես գալ որպես հայցվոր և
պատասխանող:

2.5. Բանկն իր պարտավորությունների համար
պատասխանատվություն է կրում սեփականության
իրավունքով իրեն պատկանող ամբողջ զույգով:

in Armenian: «ԱՆԵԼԻՔ ԲԱՆԿ» Փակ
Բաժնետիրական Ընկերություն
in English: ANELIK BANK Closed Joint Stock
Company
in Russian: Закрытое Акционерное общество
«БАНК АНЕЛИК»

1.6. The short name of the Bank is:
in Armenian: «ԱՆԵԼԻՔ ԲԱՆԿ» ՓԲԸ
in Russian: ЗАО «БАНК АНЕЛИК»
in English: ANELIK BANK CJSC

1.7. Legal address of the Bank is:

13, Vardanants str, 0010, Yerevan, Republic of
Armenia.

2. Legal Status of the Bank

2.1. The Bank is a commercial organization.

2.2. The Bank is considered established and acquires a
status of legal entity upon its registration with the Central
Bank of the Republic of Armenia, and has the right to
carry out banking activities and financial transactions
provided by law since the moment of acquisition of
license for carrying out banking activities from the
Central Bank of the Republic of Armenia.

2.3. The Bank has property, which is separate from the
property of its shareholders, independent balance, round
seal bearing its name and emblem, stamp, blanks and
numeric seals for the territorial subdivisions of the Bank.

2.4. The Bank may sign agreements on its behalf, acquire
proprietary and personal non-proprietary rights, bear
obligations, act in courts as applicant and respondent.

2.5. The Bank is liable for its obligations with all of its
property.

2.6. Բանկը պատասխանատու չէ իր բաժնետերերի պարտավորությունների համար:

Բանկի բաժնետերերը պատասխանատու չեն Բանկի պարտավորությունների համար և իրենց պատկանող բաժնետոմսերի արժեքի սահմաններում կրում են Բանկի գործունեության հետ կապված վնասների ռիսկը:

Բանկի բաժնետերերը, ղեկավարները և այլ անձինք օրենքով նախատեսված դեպքերում Բանկի առջև կարող են կրել պատասխանատվություն իրենց գործողությունների կամ անգործության համար:

2.7. Հայաստանի Հանրապետությունը և համայնքները պատասխանատու չեն Բանկի

պարտավորությունների, իսկ Բանկն էլ՝ առաջինների պարտավորությունների համար:

ՀՀ Կենտրոնական բանկը և Բանկը միմյանց պարտավորությունների համար պատասխանատվություն չեն կրում:

2.8. Բանկը կրում է օրենսդրությամբ Բանկին վերապահված իրավունքներ ու պարտականություններ, անկախ դրանք սույն կանոնադրությամբ նախատեսված լինելու փաստից:

2.9. Բանկը ինքնուրույն է իրականացնում իր հիմնական միջոցների տիրապետումը, օգտագործումը և տնօրինումը, այդ թվում՝ գույքի վերագնահատումը:

2.10. Բանկը երաշխավորում է իր հաճախորդների բանկային գաղտնիք հանդիսացող տեղեկությունների պահպանումը «Բանկային գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

2.11. Հաճախորդների՝ Բանկում գտնվող դրամական միջոցների (ներառյալ՝ քաղաքացիների ավանդների) և այլ գույքի վրա կարող է կախեց իրավիճակ և բռնագանձում տարածվել միայն Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ սահմանված կարգով:

Բանկը պատասխանատվություն չի կրում պետական իրավասու մարմինների կողմից օրենսդրությամբ սահմանված կարգով հաճախորդի հաշիվների կամ գույքի արգելադրման, ազդրավման, բռնագրավման կամ բռնագանձում տարածելու հետևանքով հաճախորդի կրած վնասների համար:

2.6. The Bank is not liable for obligations of its shareholders. Shareholders of the Bank are not liable for the obligations of the Bank and bear the risk of losses in connection with the operation of the Bank to the extent of the value of their shares in the Bank. The shareholders, managers of the Bank and other persons may be held liable vis-a-vis the Bank for their actions or omission in cases stipulated by law.

2.7. The Republic of Armenia and the communities are not liable for the obligations of the Bank and the Bank is not liable for the obligations of the Republic of Armenia and the communities. The Central Bank of RA and the Bank are not liable for each other's obligations.

2.8. The Bank has rights and bears obligations provided by laws, regardless of provision of such rights and obligations under this Charter.

2.9. The Bank independently possesses, uses, and disposes, as well as reevaluates its assets.

2.10. The Bank guarantees the confidentiality of information of its clients, classified as banking secret, in the manner prescribed under the law of the RA On Banking Secrecy.

2.11. Money and other property (including deposits of individuals) of the clients of the Bank under the possession of the Bank may be seized or foreclosed solely in accordance with and in the manner prescribed under the existing legislation of the RA. The Bank is not liable for damages incurred by its clients due to seizure, arrest, foreclosure or confiscation of property or accounts of its clients by authorised bodies in the manner prescribed under laws.

2.12. Արգելվում է որևէ կերպ ներգործել Բանկի ղեկավարների վրա՝ նրանց պաշտոնական պարտավորությունների կատարման ընթացքում կամ միջամտել Բանկի գործունեությանը՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Բանկի ղեկավարի վրա ապօրինաբար ներգործելու կամ Բանկի ընթացիկ գործունեությանն ապօրինաբար միջամտելու հետևանքով Բանկին պատճառված վնասը ենթակա է հատուցման՝ օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով:

3. Բանկի կողմից իրականացվող ֆինանսական գործառնությունները և այլ գործարքները

3.1. Բանկը բանկային գործունեություն իրականացնելու լիցենզիայի հիման վրա՝ ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների հետ կարող է իրականացնել օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված կարգով հետևյալ ֆինանսական գործառնությունները.

- ա) ընդունել ցուպահանջ և ժամկետային ավանդներ,
- բ) տրամադրել առևտրային և սպառողական վարկեր, այդ թվում՝ հիփոթեքային վարկեր, իրականացնել պարտքի կամ առևտրային գործարքների ֆինանսավորում, ֆակտորինգ,
- գ) տրամադրել բանկային երաշխիքներ և ակրեդիտիվներ (վարկային նամակներ),
- դ) բացել և վարել հաշիվներ, այդ թվում՝ այլ բանկերի թղթակցային հաշիվներ,
- ե) մատուցել այլ վճարահաշվարկային ծառայություններ և (կամ) այլ կերպ սպասարկել հաճախորդների հաշիվները,
- զ) թողարկել, գնել (զեղչել), վաճառել և սպասարկել արժեթղթեր, կառարել նման այլ գործառնություններ,
- է) իրականացնել (ինվեստիցիոն) ներդրումային և բաժանորդագրական գործունեություն,
- ը) մատուցել ֆինանսական գործակալի (ներկայացուցչի) ծառայություններ, կառավարել այլ անմանց արժեթղթերն ու ներդրումները (հավատարմագրային, լիազորագրային կառավարում),
- թ) գնել, վաճառել և կառավարել թանկարժեք մետաղների բանկային (ստանդարտացված) ձուլակտորներ և հուշադրամ,
- ժ) գնել և վաճառել (փոխանակել) արտարժույթ, այդ թվում՝ կնքել դրամի և արտարժույթի ֆյուչերսներ, օպցիոններ և նման այլ գործարքներ,
- ժա) իրականացնել ֆինանսական վարձակալություն (լիզինգ):

2.12. It is forbidden to influence managers of the Bank during performance of their obligations or interfere with the activities of the Bank, save for cases provided by law.

Damages incurred by the Bank as a result of illegal influence on the managers or interference with the day-to-day activities of the Bank shall be indemnified in the manner prescribed under laws and other legal acts.

3. Financial and other operations of the Bank

3.1. On the basis of licence for performance of banking activities the Bank may execute in the manner prescribed by laws and other legal acts the following financial transactions with residents and non-residents of the RA:

- a) receive demand and term deposits;
- b) provide commercial and consumer loans, including mortgage loans, perform debt and trade financing, factoring;
- c) issue bank guarantees and letters of credit;
- d) open and operate accounts, including correspondent accounts of other banks;
- e) perform other payment-settlement services and/or otherwise service accounts of the clients;
- բ) issue, purchase (discount), sell, and serve securities, perform similar operations;
- գ) perform investment and subscriber operations;
- դ) perform financial agent (representative) services, manage (trust, authorized management) securities and investments of customers;
- ե) purchase, sell and manage coins and banking (standard) bars of precious metals;
- զ) purchase and sell (exchange) foreign currency, execute futures, options and other operations in AMD and foreign currency;
- է) perform financial leasing;
- ը) accept for storage precious stones, metals, jewellery, securities, documents and other values;

ժր) ի պահ ընդունել թանկարժեք մետաղներ, քարեր, ոսկերչական իրեր, արժեթղթեր, փաստաթղթեր և այլ արժեքներ,

ժգ) մատուցել ֆինանսական և ինվեստիցիոն խորհրդատվություն,

ժդ) ստեղծել և սպասարկել հաճախորդների վարկարժանության տեղեկատվական համակարգ, իրականացնել պարտքերի ետ ստացման գործունեություն:

m) perform financial and investment advising;

n) establish and operate clients' creditworthiness information system, carry out debt collection activity.

3.2. Կենտրոնական բանկը կարող է թույլատրել Բանկին իրականացնելու «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով ուղղակիորեն չնախատեսված այլ գործունեություն կամ գործառնություններ, եթե դրանք բխում են կամ սերտորեն կապված են բանկային գործունեության կամ վերը նշված օրենքի 4-րդ գլխով նախատեսված գործառնությունների հետ, և եթե դրանք թույլատրելը չի հակասում «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նպատակներին և էականորեն չի վտանգում Բանկի ավանդատուների և վարկառուների շահերը:

3.2. The Central Bank may allow the Bank to perform activity or operations which are not directly provided under the Law of the RA On Banks and Banking and this charter, if they arise from or are related to banking activity or operations provided under chapter 4 of the Law of the RA On Banks and Banking and if allowing the Bank to perform such activities does not contradict the purposes of the Law of the RA On Banks and Banking and does not endanger interests of the depositors and borrowers of the Bank.

3.3. Բանկը «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, այլ օրենքներով և ՀՀ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով նախատեսված դեպքերում և կարգով իրավունք ունի իրականացնել արժեթղթերի շուկայի մասնագիտացված գործունեություն (բրոքերային, դիլերային, հավատարմագրային կառավարման, պահառուական և այլն): Բանկն իրականացնում է մասնագիտացված գործունեություն պետական արժեթղթերի շուկայում՝ մասնակցելով պետական պարտատոմսերի տեղաբաշխման գործընթացում (դիլերային, գործակալական, պահառուական գործունեություն):

3.3. The Bank has the right to perform, in cases and in the manner prescribed under the Law of the RA On Banks and Banking, other laws and legal normative acts of the Central Bank professional activity in securities market (brokering, dealership services, trust management, custody services and other). The Bank performs professional activity in state securities market by participating in allocation of state bonds (dealership, agency, custody activities).

3.4. Բանկը կարող է կնքել քաղաքացիաիրավական ցանկացած գործարք, որն անհրաժեշտ կամ նպատակահարմար է իրեն օրենքով թույլատրված գործունեությունն իրականացնելու համար: Բանկը չի կարող իրականացնել արտադրական, առևտրային և ապահովագրական գործունեություն, եթե օրենքով այլ բան սահմանված չէ:

3.4. The Bank shall sign any civil law transaction which is necessary or expedient to perform any legal activity authorized by law. The Bank shall not perform production, commercial and insurance activities unless otherwise stipulated by law.

3.5. Բանկը սույն կանոնադրությամբ նշված ֆինանսական գործառնությունները կատարում է ինչպես Հայաստանի Հանրապետության դրամով, այնպես էլ արտարժույթով, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

3.6. Բանկն ինքն է որոշում ներգրավվող ավանդների, տրամադրվող վարկերի, իր կողմից թողարկված արժեթղթերի տոկոսադրույքները և իր կողմից մատուցվող այլ ծառայությունների դիմաց գանձվող միջնորդավճարների չափը:

3.7. Բանկի և հաճախորդի միջև հարաբերությունները կրում են պայմանագրային բնույթ: Բանկն իր գործունեության այնպիսի կանոններ է սահմանում, որպեսզի բացառվի շահերի բախումը, մասնավորապես՝

ա) մեկ հաճախորդի նկատմամբ Բանկի ստանձնած պարտավորությունները չհակասեն մեկ այլ հաճախորդի նկատմամբ նրա ստանձնած պարտավորություններին:

բ) Բանկի ղեկավարների և աշխատակիցների շահերը չհակասեն Բանկի հաճախորդի նկատմամբ Բանկի ստանձնած պարտավորություններին:

3.8. Առանց ՀՀ Կենտրոնական բանկի նախնական համաձայնության Բանկին արգելվում է այնպիսի գործարքներ կամ գործառնություններ իրականացնելը, որոնց արդյունքում Բանկի մասնակցությունը՝

ա) մեկ այլ անձի կանոնադրական հիմնադրամում 4.99 % և ավելի մասնակցություն է,

բ) մեկ անձի կանոնադրական հիմնադրամում գերազանցում է Բանկի ընդհանուր կապիտալի 15%-ը,

գ) բոլոր անձանց կանոնադրական հիմնադրամներում գերազանցում է Բանկի ընդհանուր կապիտալի 35%-ը:

Բանկը սույն կետով սահմանված կարգով այլ անձանց կանոնադրական հիմնադրամում մասնակցություն ձեռք բերելիս սվյալ անձանց հաշվեկշիռները միավորում է իր հաշվեկշիռում (համախմբված հաշվեկշիռ) ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգով:

Սույն կետով սահմանված կարգով ՀՀ Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը պահանջվում է յուրաքանչյուր նոր գործարքի կամ գործարքների իրականացման դեպքում, որոնց արդյունքում Բանկի մասնակցությունը մեկ այլ կամ միևնույն անձի կանոնադրական հիմնադրամում գերազանցում է 9 %-

3.5. The Bank may perform financial transactions provided under this charter both in AMD and foreign currency, safe for cases provided under law.

3.6. The Bank shall independently determine interest rates for attracted deposits, disbursed loans and issued securities, as well as amount of commissions against rendered services.

3.7. The relations between the Bank and its clients shall be deemed as contractual. The Bank establishes rules of its activity aimed at avoiding conflict of interests, particularly:

a) obligations undertaken by the Bank vis-à-vis one of its clients shall not contradict obligations undertaken by the Bank vis-à-vis another client;

b) interests of the managers and employees of the Bank shall not contradict the obligations of the Bank vis-à-vis its clients.

3.8. The Bank may not without prior consent of the Central Bank of the RA perform such activity or execute such transactions as a result of which the participation of the Bank:

a) in another entity's charter capital shall equal to or exceed 4.99%;

b) in another entity's charter capital shall exceed 15% of the total capital of the Bank;

c) in all entities' charter capital shall exceed 35% of the total capital of the Bank.

In the event of acquiring participation in other entities' charter capital in the manner specified in this paragraph, the Bank shall consolidate its balance sheet with the balance sheets of such entities (consolidated balance sheet) according to the procedures established by the Central Bank of the RA. Prior consent of the Central Bank provided under this paragraph is required for each new transaction(s), as a result of which the participation of the Bank in charter capital of the same or other entity shall

ը, 15%-ը, 25%-ը, 35%-ը, 50%-ը, 70%-ը կամ կազմում է 100 %.

3.9. Սույն կանոնադրության 3.8 կետով նախատեսված նախնական համաձայնությունը չի պահանջվում, եթե.

ա) մեկ այլ անձի կանոնադրական հիմնադրամում մասնակցությունը Բանկին է անցել Բանկի նկատմամբ ստանձնած և չկատարած պարտավորությունների դիմաց: Նման կարգով ձեռք բերված մասնակցությունը Բանկը պետք է օտարի հնարավոր կարճ ժամանակամիջոցում, բայց վեց ամսից ոչ ուշ: ՀՀ Կենտրոնական բանկը, հաշվի առնելով արժեթղթերի շուկայում տիրող իրավիճակը, ինչպես նաև Բանկի ֆինանսական վիճակը, կարող է հիշյալ բաժնետոմսերը առավել բարենպաստ պայմաններով օտարելու նպատակով վերը նշված ժամկետը երկարացնել ևս վեց ամսով.

բ) Բանկը մեկ այլ անձի կանոնադրական հիմնադրամում մասնակցությունը ձեռք է բերել իր հաճախորդի անունից և հաշվին կամ կոմիսիոն հիմունքներով բաժանորդագրական գործունեություն իրականացնելու ընթացքում, եթե ըստ պայմանագրի Բանկը պարտավոր է թողարկողին հատուցել միայն իրացված (տեղաբաշխված) արժեթղթերի արժեքը:

3.10. Բանկն իրավունք ունի թղթակցային հաշիվներ բացել այլ բանկերում:

3.11. Բանկն օրենսդրությամբ սահմանված դեպքերում կարող է իրականացնել պետական բյուջեի դրամարկղային սպասարկման գործառնությունները:

4. Բանկի մասնաճյուղերը, ներկայացուցչությունները և հիմնարկները

4.1. Բանկը Հայաստանի Հանրապետության տարածքում և նրա տարածքից դուրս կարող է հիմնել իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող մասնաճյուղեր և ներկայացուցչություններ՝ «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

4.2. Բանկի խորհուրդը ստեղծում է Բանկի տարածքային ստորաբաժանումներն ու հաստատում դրանց կանոնադրությունները՝ Բանկի կանոնադրության սահմաններում դրանց տալով փազորություններ:

4.3. Բանկի մասնաճյուղը Բանկի իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող և Բանկի գտնվելու վայրից դուրս գտնվող առանձնացված

exceed 9%, 15%, 25%, 35%, 50%, 70% or amount to 100%.

3.9. The prior consent provided under clause 3.8 of this charter is not required in the event:

a) participation in the charter capital of another entity has been transferred to the Bank against default of liabilities undertaken vis-à-vis the Bank. The Bank shall alienate such participation in the shortest possible terms, which shall not be later than 6 months. The Central Bank of the RA may extend the abovementioned term up to another 6 months taking into account the situation in securities market and financial state of the Bank.

b) the Bank has acquired participation in another entity's charter capital on behalf and on the account of its client or on commission basis during performance of subscription activities, provided that pursuant to the agreement the Bank shall reimburse the issuer solely the value of the allocated (placed) securities.

3.10. The Bank has the right to open correspondent accounts in other banks.

3.11. The Bank may perform state budget cash servicing operations in cases provided by legislation.

4. Branches, representative offices and institutions of the Bank

4.1. The Bank may establish branches and representative offices within the territory of the Republic of Armenia and abroad in the manner prescribed under the Law of the RA On Banks and Banking.

4.2. The council of the Bank establishes territorial subdivisions and approves their charters vesting them with the powers provided under this charter.

4.3. A branch of the Bank is its separate subdivision located out of the territory of the Bank and not having

ստորաբաժանում է, որը գործում է Բանկի կողմից սրված լիազորությունների սահմաններում և նրա անունից բանկային գործունեություն և (կամ) «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով նախատեսված ֆինանսական գործառնություններ է իրականացնում ինչպես ՀՀ դրամով, այնպես էլ արտարժույթով:

4.4. Բանկի ներկայացուցչությունը Բանկի իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող և Բանկի գտնվելու վայրից դուրս գտնվող առանձնացված ստորաբաժանում է, որը ներկայացնում է Բանկը, ուսումնասիրում է շուկան, Բանկի անունից կնքում է սպայմանագրեր, իրականացնում է համանման այլ գործառնություններ:

Ներկայացուցչությունը բանկային գործունեություն և «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված ֆինանսական գործառնություններ իրականացնելու իրավունք չունի:

4.5. Բանկը ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգով կարող է ժամանակավորապես մինչև մեկ տարի ժամկետով, դադարեցնել ստորաբաժանումների գործունեությունը:

4.6. Մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գույքը հաշվառվում է ինչպես Բանկի հաշվեկշիռում, այնպես էլ վերջիններիս առանձին հաշվեկշիռներում:

4.7. Բանկը կարող է հիմնել նաև հիմնարկներ, որոնց կառավարչական, սոցիալ-մշակութային, կրթական կամ ոչ առևտրային բնույթի այլ գործունեություն իրականացնելու համար Բանկի ստեղծած իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող կազմակերպությունն է: Բանկի հիմնարկ ստեղծելու մասին որոշումն ընդունում է Բանկի խորհուրդը:

4.8. Բանկի մասնաճյուղերի և ներկայացուցչությունների ստեղծումը, գրանցումը և լուծարումը իրականացվում է օրենսդրությամբ սահմանված կարգով:

5. Բանկի բաժնետոմսերը

5.1. Բանկի բաժնետոմսերը բաժնետերերի միջև տեղաբաշխվում են փակ բաժանորդագրության ձևով:

status of a legal entity, which operates within powers it is vested with by the Bank and performs on behalf of the latter banking activity or other financial operations provided under the law of the RA On Banks and Banking both in Armenian Drams and foreign currency.

4.4. A representative office of the Bank is its separate subdivision located out of the territory of the Bank and not having status of a legal entity, which represents interests of the Bank, carries out market research, signs contracts on behalf of the Bank and performs other similar operations. A representative office shall not have the right to carry out banking activities and perform financial operations in accordance with the Law of the RA On Banks and Banking.

4.5. The Bank may, in the manner prescribed by the Central Bank of the RA, temporarily (for a period of up to one year) terminate operations of its subdivisions.

4.6. Property of branches and representative offices shall be accounted both in the balance sheet of the Bank and separate balance sheets of the branches and representative offices.

4.7. The Bank may establish institutions, which are organizations not having a status of legal entity, engaged in governmental, social-cultural, educational and other non-commercial activities. Decision on establishment of an institution of the Bank shall be adopted by the council of the Bank.

4.8. Establishment, registration and liquidation of the branches and representative offices of the Bank shall be effected in the manner prescribed by laws.

5. Shares of the Bank

5.1. The shares of the Bank are privately allocated among its shareholders.

5.2. Թողարկված բաժնետոմսերի տեղաբաշխման գինը դրանց անվանական արժեքն է կամ Բանկի խորհրդի կողմից որոշվող շուկայական արժեքը: Շուկայական արժեքը որոշվում է օրենքով սահմանված կարգով: Բանկի բաժնետոմսերը ոչ փաստաթղթային են:

5.3. Բաժնետոմսերի ձեռքբերման դիմաց, որպես վճարման միջոց, օգտագործվում է միայն Հայաստանի Հանրապետության դրամը:

5.4. Բանկի մեկ սովորական բաժնետոմսը սովյալ բաժնետիրոջը տալիս է ընդհանուր ժողովում մեկ ծայնի իրավունք:

5.5. Բանկը կարող է օրենքով սահմանված կարգով թողարկել և տեղաբաշխել հասարակ (սովորական), ինչպես նաև մեկ կամ մի քանի տեսակի արտոնյալ բաժնետոմսեր: Արտոնյալ բաժնետոմսերի ընդհանուր անվանական արժեքը կանոնադրական հիմնադրամում չի կարող լինել 25 տոկոսից ավելի: Արտոնյալ բաժնետոմսեր թողարկելու դեպքում սույն կանոնադրությամբ պետք է սահմանվեն դրանց տեսակների և դասերի վերաբերյալ տեղեկություններ, ինչպես նաև դրանց սեփականատերերի իրավունքներն ու պարտականությունները սահմանող կանոններ:

5.6. Բանկի բաժնետոմսերի սեփականատերերի ռեեստրի վարումը իրականացվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ մասնագիտացված կազմակերպության կողմից:

5.7. Բանկի կանոնադրական հիմնադրամում մեկ բաժնետիրոջը պատկանող հասարակ (սովորական) բաժնետոմսերի քանակը չի սահմանափակվում:

5.8. Ընկերության աշխատակցի բաժնետոմսերի մասը չպետք է գերազանցի կանոնադրական հիմնադրամի 25 տոկոսը:

6. Բանկի պարտատոմսերը և այլ արժեթղթերը

6.1. Բանկը կարող է օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով թողարկել պարտատոմսեր և այլ արժեթղթեր:

6.2. Պարտատոմսերի և այլ արժեթղթերի թողարկումը և տեղաբաշխումն իրականացվում է «Արժեթղթերի կարգավորման մասին» ՀՀ օրենքով:

6.3. Բանկի պարտատոմսերի և այլ արժեթղթերի թողարկումը կատարվում է խորհրդի որոշմամբ: Պարտատոմսերի թողարկման մասին որոշմամբ պետք

5.2. The shares of the Bank are allocated at their nominal value or market value determined by the council of the Bank. The market value is determined in the manner provided by law. The shares of the Bank are non-documentary.

5.3. Shares shall be paid solely with Armenian Dratts.

5.4. Each ordinary share of the Bank entitles its holder with one vote in the general meeting of shareholders.

5.4. The Bank may, in the manner prescribed by law, issue and allocate ordinary shares, as well as one and more types of preferred shares. The total nominal value of preferred shares shall not exceed 25% of the charter capital. In the event of issuance of preferred shares, this charter shall include information on types and classes of such shares, as well as rules determining rights and obligations of such shareholders.

5.6. Registry of owners of the shares of the Bank shall be maintained by a specialized organization in the manner prescribed under the laws of the RA.

5.7. The number of ordinary shares owned by one shareholder in the charter capital of the Bank shall not be limited.

5.8. Shares of the employees of the Bank shall not exceed 25% of its charter capital.

6. Bonds and other securities of the Bank

6.1. The Bank may issue bonds and other securities in the manner prescribed by laws and other legal acts.

6.2. Issuance and allocation of bonds and other securities shall be performed in the manner prescribed under the law of the RA Law On Securities Market.

6.3. Bonds and other securities of the Bank are issued upon resolution of the council of the Bank. The resolution on issuance of bonds shall include the terms, conditions

է սահմանվեն դրանց մարման ձևը, ժամկետները և պայմանները: Պարտատոմսերը պետք է ունենան անվանական արժեք: Բանկի թողարկած բոլոր ապահովված պարտատոմսերի անվանական արժեքների գումարը չպետք է գերազանցի կանոնադրական հիմնադրամը կամ այն ապահովման գումարը, որը տրամադրված է Բանկի պարտատոմսեր թողարկելու նպատակով:

«Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերում պարտատոմսերի և այլ արժեթղթերի ձեռքբերումը կարող է հանդիսանալ անուղղակի նշանակալից մասնակցություն՝ իր համապատասխան իրավական հետևանքներով:

6.4 Պարտատոմսեր կարող է թողարկել միայն Բանկի կանոնադրական հիմնադրամի լրիվ զճարմից հետո: Բանկը կարող է թողարկել փոխարկվող պարտատոմսեր և այլ արժեթղթեր, որոնք տալիս են Բանկի պարտատոմսերը և այլ արժեթղթերը բաժնետոմսերի փոխարկման կամ բաժնետոմսերի արտույալ ձեռքբերման իրավունք: Ընդ որում, Բանկն իրավունք չունի տեղաբաշխել փոխարկվող պարտատոմսեր և այլ արժեթղթեր, եթե ըստ տեսակների և դասերի հայտարարված բաժնետոմսերի քանակը պակաս է նշված տեսակների և դասերի բաժնետոմսերի այն քանակից, որոնք անհրաժեշտ են փոխարկվող պարտատոմսերը և այլ արժեթղթերը Բանկի բաժնետոմսերի փոխարկելու հնարավորությունն ապահովելու համար:

Բանկի պարտատոմսերի և այլ արժեթղթերի փոխարկումն իրականացվում է՝ հաշվի առնելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված կանոնադրական հիմնադրամում մասնակցությունն ձեռք բերելու սահմանափակումները:

6.5. Բանկը կարող է թողարկել միաժամանակյա, ինչպես նաև տարաժամկետ (Բանկի կողմից սահմանված ժամկետային հաջորդականությամբ) մարման ժամկետով պարտատոմսեր: Պարտատոմսերի և այլ արժեթղթերի թողարկման որոշմամբ սահմանվում են տվյալ պարտատոմսերի կամ այլ արժեթղթերի տեսակները և դասերը, դրանց սեփականատերերի իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև օրենքով պահանջվող այլ տեղեկություններ:

and methods of their repayment. Bonds shall have nominal value. The total nominal value of all issued and secured bonds shall not exceed the charter capital or the security amount, provided for issuance of the bonds of the Bank. In cases provided under the Law of the RA On Banks and Banking, acquisition of bonds and other securities may be considered as indirect significant participation with relevant legal consequences.

6.4. Bonds may be issued solely upon full payment of the charter capital of the Bank. The Bank may issue convertible bonds and other securities, which give right to their holders to convert such bonds and other securities to shares of the Bank or acquire on a privileged basis shares of the Bank. At that, the Bank shall not allocate convertible shares or other securities, in the event the number of the authorized shares per each class and type is less than the number of shares per each such class or type, which is necessary to ensure the conversion of convertible bonds and other securities to shares of the Bank. Bonds and other securities of the Bank are converted in compliance with limitations in connection with acquisition of participation in the charter capital, provided under the Law of the RA On Banks and Banking and this charter.

6.5. The Bank may issue term, as well as serial bonds. The resolution on issuance of bonds and other securities shall determine types and classes of such bonds, as well as rights and obligations of their owners and other information required by Law.

6.6. Բանկը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրավունք ունի թողարկել փողի շուկայի կամ արժեթղթերի շուկայի գործիք հանդիսացող այլ արժեթղթեր:

6.6. The Bank has the right to issue, in the manner prescribed by the legislation of the RA, other securities that shall be deemed instruments of money or securities market.

6.7. Բանկի անվանական պարտատոմսերի և այլ արժեթղթերի սեփականատերերի ռեեստրը վարում է Կենտրոնական դեպոզիտարիան՝ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով:

6.7. The registry of the owners of nominal bonds and other securities of the Bank is maintained by the Central Depository in accordance with laws and other legal acts.

7. Բանկի բաժնետերերը

7. Shareholders of the Bank

7.1. Բանկի բաժնետերեր կարող են լինել Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական և իրավաբանական անձինք՝ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով:

7.1. Shareholders of the Bank may be individuals and legal entities, both resident and non-resident of the Republic of Armenia, in the manner prescribed by laws and other legal acts.

7.2. Հայաստանի Հանրապետության պետական և տեղական ինքնակառավարման մարմինները Բանկի բաժնետեր կարող են լինել օրենքներով սահմանված դեպքերում և կարգով: Բանկի բաժնետեր չեն կարող լինել կուսակցությունները և արհեստակցական միությունները:

7.2. State and local self-governmental bodies of the RA may be shareholders of the Bank in cases and in the manner prescribed under laws. Parties and trade unions may not be shareholders of the Bank.

7.3. Բանկի յուրաքանչյուր սովորական բաժնետոմս տալիս է իր սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջը միևնույն իրավունքներ:

7.3. Each ordinary share of the Bank gives equal rights to its owners.

7.4. Բանկի տեղաբաշխված բաժնետոմսերի դիմաց վճարումը ոչ լրիվ կատարած բաժնետերը Բանկի պարտավորությունների համար կրում է համապարտ պատասխանատվություն նաև իր կողմից չվճարված ներդրման սահմաններում:

7.4. The shareholder having failed to fully pay the allocated shares of the Bank bears joint and several liability, including within the scope of the non-paid part of her investment.

7.5. Բանկին պարտադիր ցուցում տալու իրավունք կամ Բանկի գործունեությունը օրենքով չարգելված այլ կերպ կանխորոշելու հնարավորություն ունեցող բաժնետերը Բանկի անվճարունակության դեպքում Բանկի պարտավորությունների դիմաց կրում է լրացուցիչ (սուբսիդիար) պատասխանատվություն, եթե նշված իրավունքը կամ հնարավորություն ունեցող բաժնետերը դրանք իրագործելիս նախօրոք իմացել է, որ դրա հետևանքով Բանկը կհայտնվի օրենքով սահմանված անվճարունակության վիճակում, այդ թվում կսպառի հիմնական կապիտալի զգալի մասը:

7.5. The shareholder vested with the right or power to give mandatory instructions to the Bank or otherwise legitimately foresee the activities of the Bank bears subsidiary liability in connection with obligations of the Bank in the event of its insolvency, if prior to exercising such right or power such shareholder knew that as a result of such activity the Bank will be in the state, defined by the law as insolvency, including will consume significant part of its fixed assets.

7.6. Ընդհանուր ժողովում ձայնի իրավունքից օգտվում են միայն լրիվ վճարված սովորական բաժնետոմսի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը:

7.6. Solely shareholders, which have fully paid ordinary shares, shall have a voting right in the general meeting of shareholders.

7.7. Բանկի սովորական բաժնետոմսերի սեփականատեր բաժնետերը իրավունք ունի՝

7.7.1. անձամբ կամ ներկայացուցչի միջոցով մասնակցել ընդհանուր ժողովին՝ վերջինիս իրավասությանը պատկանող բոլոր հարցերի նկատմամբ ձայնի իրավունքով, ըստ իր բաժնետոմսերի քանակի,

7.7.2. անձամբ կամ ներկայացուցչի միջոցով մասնակցել Բանկի կառավարմանը,

7.7.3. ստանալ շահութաբաժիններ Բանկի գործունեությունից առաջացած շահույթից,

7.7.4. օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերում և կարգով ստանալ Բանկի գործունեության վերաբերյալ տեղեկատվություն,

7.7.5. իր գրավոր դիմումի համաձայն յուրաքանչյուր ամսվան հաջորդ 7-րդ օրը ծանոթանալ Բանկի ֆինանսական և այլ հաշվետվություններին և օրենքով սահմանված այլ տեղեկատվությանը,

7.7.6. ընդհանուր ժողովում հանդես գալ առաջարկություններով, ընդհանուր ժողովի օրակարգի վերաբերյալ ներկայացնել առաջարկություններ օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով,

7.7.7. ընդհանուր ժողովին քվեարկել իրեն պատկանող բաժնետոմսերի ձայների չափով,

7.7.8. դիմել դատարան ընդհանուր ժողովի կողմից ընդունված և գործող օրենքներին և այլ իրավական ակտերին հակասող որոշումների քողոքարկման նպատակով,

7.7.9. Բանկի լուծարման դեպքում ստանալ Բանկի գույքի իր հասանելիք մասը,

7.7.10. առաջնահերթ կարգով ձեռք բերել Բանկի կողմից թողարկվող և տեղաբաշխվող բաժնետոմսերը և այլ արժեթղթերը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:

7.7.11. անվճար ստանալ Բանկի վերջին տարեկան հաշվետվության և արտաքին արտիտի եզրակացության պատճենները,

7.7.12. ունենալ օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ իրավունքներ: Ընդ որում, Բանկի

7.7. Shareholders, holding ordinary shares of the Bank have the right to:

7.7.1. participate in person or through representative in the general meeting of shareholders with voting rights in connection with all matters related to powers conferred to the general meeting, such voting right being determined in accordance with the number of the shares owned by each shareholder;

7.7.2. participate in person or through representative in the management of the Bank;

7.7.3. receive dividends from the profit, gained as a result of the activity of the Bank;

7.7.4. receive information on the activity of the Bank in cases and in the manner prescribed under laws and this charter;

7.7.5. get acquainted with the financial and other reports of the Bank and information provided by law upon their written request on the 7th day following the end of each month;

7.7.6. make suggestions in the general meeting, including those in connection with agenda of general meeting in the manner prescribed by law and this charter;

7.7.7. vote in the general meeting in the number of votes of the shares held by them;

7.7.8. challenge in judicial order the resolutions of the general meeting, contradicting to laws and other legal acts in force;

7.7.9. receive relevant part in the property of the Bank upon liquidation of the latter;

7.7.10. unless otherwise provided by law, acquire in priority right shares and other securities issued and allocated by the Bank;

7.7.11. receive, without any charge, copies of the most recent annual report of the Bank and conclusion of its external auditor;

7.7.12. have other rights provided by law and this charter.

բաժնետոմսերի 2%-ին և ավելին տիրապետող յուրաքանչյուր բաժնետիրոջ (բաժնետերերի) պահանջով Բանկը նրան պետք է անվճար տրամադրի հետևյալ տեղեկությունները (թեկուզև դրանք կազմեն բանկային, առևտրային կամ այլ գաղտնիք)։

ա) Բանկի խորհրդի, Վարչության նախագահի և Գլխավոր հաշվապահի վերաբերյալ «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 5-րդ մասում նշված տեղեկությունները,

բ) Բանկի խորհրդի անդամների, Վարչության նախագահի և գլխավոր հաշվապահի՝ նախորդ տարվա ընթացքում Բանկից ստացված ամբողջ վարձատրության (ներառյալ՝ պարգևատրումների, Բանկի համար որոշակի աշխատանք կատարելու դիմաց վճարների, աշխատավարձին հավասարեցված այլ եկամուտների) չափը, նրանց և նրանց հետ փոխկապակցված անձանց կողմից Բանկից ստացված վարկերի և այլ փոխառությունների (այդ թվում՝ նաև մարված) վերաբերյալ տվյալներ, այդ թվում՝ չափը, տոկոսադրույքը և ժամկետը, Բանկում նշանակալից մասնակցություն ունեցող բաժնետիրոջ մասին տեղեկատվություն՝ նրանց անունը (անվանումը), Բանկում նրանց ունեցած մասնակցության չափը (բացառությամբ այն անուղղակի նշանակալից մասնակցություն ունեցող անձանց, որոնք չունեն Բանկի կանոնադրական հիմնադրամում մասնակցություն (բաժնետոմս)), նախորդ տարվա ընթացքում նրանց և նրանց հետ փոխկապակցված անձանց կողմից Բանկից ստացված վարկերի և այլ փոխառությունների (այդ թվում՝ նաև մարված) վերաբերյալ տվյալներ, այդ թվում՝ չափը, տոկոսադրույքը և ժամկետը,

գ) Բանկի և նրա հետ կապված անձանց միջև կնքված խոշոր գործարքների, ինչպես նաև այն գործարքների մասին, որոնք կնքվել են այդ տեղեկությունները ստանալու վերաբերյալ պահանջը ներկայացնելուն նախորդող երկու տարվա ընթացքում և կապված են Բանկի կողմից «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի առաջին մասի «ա-գ», «բ», «ժ» և «ժա» կետերով սահմանված գործառնություններից որևէ մեկի իրականացման հետ,

դ) Բանկի կողմից Բանկի հետ կապված անձի նկատմամբ ստանձնած պարտավորությունների մասին,

ե) Բանկի՝ միանման քաղաքականություն իրականացնող մասնակիցների խմբերի ստեղծմանն ուղղված պայմանագրերի առկայության մասին, ինչպես նաև Բանկի՝ այդ պայմանագրերի կողմ հանդիսացող մասնակիցների անունները (անվանումները),

The Bank shall, upon request of any shareholder(s), holding 2% or more of the shares of the Bank provide the following information free of charge (even if such information constitutes banking, commercial or other confidential information):

a) information provided under part 5, article 43 of the law of the RA On Banks and Banking concerning the Council, Chairman of Management Board and chief accountant of the Bank;

b) information on the amount of remuneration (including bonuses, payments against performance of certain works for the Bank, other income equalled to salary) received by members of the council, Chairman of Management Board, chief accountant from the Bank during the preceding year, information on loans and borrowings (including repaid) received from the Bank by them and their affiliates, including amount, interest rate and terms of such loans and borrowings, information on major participants of the bank, including their names, size of their participation in the Bank (except for indirect major participants who have no participation (shares) in charter capital of the Bank) information on loans and borrowings (including repaid) received by them and their affiliates from the Bank during the preceding year, including amount, interest rate and terms of such loans and borrowing;

c) information on major transactions entered into by and between the Bank and its affiliates, as well as transactions concluded within 2 years preceding such date at which the request on provision of information has been submitted, which are related to performance by the Bank of one of the operations provided under clauses a, b, c, i, j or k of part 1 of article 34 of the Law of the RA On Banks and Banking;

d) information on obligations of the Bank vis-à-vis its affiliates;

e) information on agreements aimed at establishing unions of participants of the Bank performing similar policy, as well as names of participants, which are parties to such agreements;

f) copies of documents certifying proprietary rights of Bank over the property reflected in the balance sheet of the Bank, internal acts approved by the general meeting

զ) Բանկի հաշվեկշիռում արտացոլված գույքի նկատմամբ Բանկի գույքային իրավունքները հավաստող փաստաթղթերի, ընդհանուր ժողովի և կառավարման այլ մարմինների հաստատած՝ Բանկի ներքին ակտերի, Բանկի առանձնացված ստորաբաժանումների կանոնադրությունների, Բանկի կողմից պետական կառավարման մարմիններին ներկայացվող ֆինանսական ու վիճակագրական հաշվետվությունների, ընդհանուր ժողովի, խորհրդի/արձանագրությունների, ՀՀ Կենտրոնական բանկի կողմից իրականացված վերստուգումների եզրակացությունների պատճենները, ՀՀ Կենտրոնական բանկի կողմից Բանկի և (կամ) Բանկի ղեկավարի նկատմամբ կիրառված պատժամիջոցների վերաբերյալ ՀՀ Կենտրոնական բանկի որոշումների պատճենները, ներքին աուդիտի ղեկավարի կողմից խորհրդին և Վարչության նախագահին (Վարչությանը) ներկայացված հաշվետվությունների պատճենները, է) այն իրավաբանական անձանց ցանկը, որոնց կանոնադրական կապիտալում Բանկի ղեկավարները կամ նրանց հետ փոխկապակցված անձինք ունեն 20% և ավելի մասնակցություն կամ հնարավորություն՝ ներազդելու նրանց որոշումների վրա: Ընդ որում, նշված տեղեկությունները տրամադրվում են Բանկի բաժնետերերին երկու բանկային օրվա ընթացքում վերջիններիս գրավոր դիմումի հիման վրա:

7.8. Բանկի բաժնետերերը պարտավոր են՝

7.8.1. Պահպանել սույն կանոնադրության պահանջները և Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշումները:

7.8.2. Բաժնետոմսերի թողարկման որոշմամբ սահմանված ժամկետներում լրիվ վճարել իրենց բաժնետոմսերի արժեքը:

7.8.3. Չիրապարակել Բանկի գործունեության վերաբերյալ գաղտնիք ներկայացնող տեղեկություններ:

7.8.4. Սույն կանոնադրության 7.7. կետի համաձայն ստացված տեղեկությունները չփոխանցել այլ անձանց, դրանք չօգտագործել Բանկի գործարար համբավը արատավորելու, Բանկի բաժնետերերի կամ հաճախորդների իրավունքներն ու օրինական շահերը խախտելու կամ նմանատիպ այլ նպատակներով: Հակառակ դեպքում Բանկի բաժնետերերը կկրեն պատասխանատվություն ՀՀ օրենքներով և նորմատիվ իրավական այլ ակտերով սահմանված կարգով:

of shareholders and other management bodies of the Bank, charters of the separated subdivisions of the Bank, financial and statistic reports submitted by the Bank to state management bodies, minutes of the general meetings of shareholders, council, management board of the Bank, inspection acts of the Central Bank of the RA, copies of decisions of Central Bank of the RA on application of sanctions vis-à-vis the Bank and/or its managers, copies of reports submitted by the head of internal audit to the council and the Chairman of the Management Board (Management Board);

g) the list of legal entities in the charter capital of which the managers of the Bank or their affiliates have 20% or more participation or the power to affect their decisions.

At that, the abovementioned information shall be provided to the shareholders of the Bank within 2 banking days upon their written application.

7.8. The shareholders of the Bank shall:

7.8.1. comply with the requirements of this charter and the resolutions of the general meeting of the shareholders of the Bank;

7.8.2. pay in full the value of their shares within the terms determined by the resolution on issuance of shares;

7.8.3. abstain from publishing confidential information on the activities of the Bank;

7.8.4. abstain from transferring to third parties information acquired pursuant to clause 7.7. of this charter, using such information for damaging the business reputation of the Bank, violating rights and legitimate interests of the clients and shareholders of the Bank.

In the event of failure by shareholders of the Bank to comply with clause 7.8.4 of this charter, they shall be held

liable in the manner prescribed by laws and other normative legal acts of the RA.

7.8.5. Բանկի բաժնետերերը կարող են կրել նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ պարտավորություններ:

7.8.5. The shareholders of the Bank shall bear other obligations provided under this charter and the legislation of the RA legislation.

8. Բանկի կանոնադրական հիմնադրամը

8. Charter capital of the Bank

8.1. Բանկի փաստացի համալրված կանոնադրական հիմնադրամը կազմվում է Բանկի բաժնետերերի կողմից ձեռք բերած բաժնետոմսերի անվանական արժեքից: Բանկի կանոնադրական հիմնադրամը պարտատերերի շահերը երաշխավորող Բանկի գույքի նվազագույն չափն է, որը համալրվում է Հայաստանի Հանրապետության դրամով:

8.1. The paid-up charter capital of the Bank constitutes of the nominal value of shares obtained by the shareholders of the Bank. The charter capital of the Bank is the minimum amount of property, guaranteeing the interests of the creditors of the Bank and shall be paid in Armenian Drams.

8.2. Բանկի կանոնադրական հիմնադրամը կազմում է 33,971,850,000 (երեսուներեք միլիարդ ինը հարյուր յոթանասունմեկ միլիոն ութ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ, բաղկացած է 50,000 (հիսուն հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով 679,437 (վեց հարյուր յոթանասունինը հազար չորս հարյուր երեսույթթիստ սովորական բաժնետոմսից):

8.2. The charter capital of the Bank amounts to AMD 33,971,850,000 (thirty-three billion nine hundred seventy-one million eight hundred fifty thousand Armenian Drams), which includes 679,437 (six hundred seventy nine thousand four hundred thirty-seven) ordinary shares, with a nominal value of AMD 50,000 (fifty thousand) each.

8.3. Բանկը կարող է ավելացնել իր կանոնադրական հիմնադրամի չափը՝ ընդհանուր ժողովի կողմից սահմանված քանակով, յուրաքանչյուրը՝ 50 000 (հիսուն հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով լրացուցիչ սովորական բաժնետոմսեր թողարկելով:

8.3. The Bank may increase its charter capital by issuing additional ordinary shares in the amount determined by general meeting and with a nominal value of AMD 50,000 (fifty thousand Armenian Drams) each.

9. Կանոնադրական հիմնադրամի նվազեցումը

9. Reduction of the charter capital

9.1. Բանկի փաստացի համալրված կանոնադրական հիմնադրամի նվազեցումն գործունեության ընթացքում՝ դրա հաշվին շահութաբաժիններ բաշխելու կամ այլ ձևերով արգելվում է, բացառությամբ «Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքով և սույն կանոնադրության 9.2 կետով նախատեսված դեպքերի:
9.2. Բանկի ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատերերը իրավունք ունեն Բանկից

9.1. Reduction of the paid-up charter capital of the Bank during its activity by distribution of dividends or otherwise is prohibited, safe for cases provided under the law of the RA On Banks and Banking and clause 9.2 of this charter.

9.2. The shareholders, holding voting shares of the Bank, have the right to require from the Bank

պահանջելու մասնակցության հետզնման գնի որոշում և իրենց պատկանող բաժնետոմսերի կամ դրանց մի մասի հետզնում, եթե՝

ա) որոշում է ընդունվել Բանկի վերակազմակերպման, նախապատվության իրավունքի կասեցման կամ խոշոր գործարք կնքելու մասին (այն դեպքերում, երբ գործարքը կնքելու մասին որոշումն ընդունվում է Ընդհանուր ժողովի կողմից), և տվյալ բաժնետերերը քվեարկել են Բանկի վերակազմակերպման, նախապատվության իրավունքի կասեցման կամ խոշոր գործարք կնքելու դեմ կամ այդ հարցերով քվեարկությանը չեն մասնակցել,

բ) կանոնադրության մեջ լրացումներ կամ փոփոխություններ են կատարվել, կամ հաստատվել է կանոնադրությունը նոր խմբագրությամբ, որի հետևանքով սահմանափակվել են նշված բաժնետերերի իրավունքները, և նրանք դեմ են քվեարկել կամ քվեարկությանը չեն մասնակցել:

9.3. Բանկից իրենց մասնակցության հետզնման պահանջի իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմվում է Բանկի բաժնետերերի ռեեստրի տվյալների հիման վրա, այն ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ, որի օրակարգը պարունակում է հարցեր, որոնց ընդունումը հանգեցրել է բաժնետերերի իրավունքների՝ սույն կանոնադրության 9.2 կետի ա) ենթակետով նշված սահմանափակմանը:

9.4. Բանկի կողմից մասնակցության հետզնումը կատարվում է դրա շուկայական արժեքով, որը որոշվում է առանց մասնակցության գնահատման և հետզնման պահանջի իրավունք տվող Բանկի գործողությունների հետևանքով առաջացող փոփոխությունները հաշվի առնելու:

9.5. Բանկի կանոնադրական հիմնադրամի նվազեցում թույլատրվում է նաև «Բանկերի և վարկային կազմակերպությունների սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված դեպքում:

9.6. Մասնակցության հետզնման համար անհրաժեշտ է ՀՀ Կենտրոնական բանկի խորհրդի համաձայնությունը: ՀՀ Կենտրոնական բանկը կարող է մերժել այդ համաձայնություն տալը, եթե՝

ա) մասնակցության հետզնման դեպքում Բանկն ի վիճակի չի լինի լրիվ բավարարելու իր պարտատերերի պահանջները,

բ) կյանախտի հիմնական տնտեսական նորմատիվները,

determination of buy-back price and buy-back of their shares or part of them if:

a) a decision was made on reorganization, disapplication of pre-emption rights or execution of major transaction (in cases where the decision on execution of the transaction is made by the general meeting) and such shareholders voted against such reorganization, disapplication of pre-emption rights or execution of major transaction, or did not participate in the voting;

b) the charter has been amended or supplemented, or new edition of the charter has been approved resulting in limitation of rights of such shareholders, which voted against the decision on such amendment, supplement or approval of new edition of the charter or did not participate in the voting.

9.3. The list of shareholders of the Bank entitled to require buy-back of their shares in the Bank, shall be made on the basis of the data included in the registry of the shareholders of the Bank, as of the date of compilation of the list of shareholders entitled to participate in such general meeting, the agenda of which includes issues in connection with decisions, adoption of which has resulted in limitation of shareholders' rights provided under paragraph a) of clause 9.2.

9.4. Buy-back of shares by the Bank shall be executed at its market price. The market price shall be determined without taking into account the changes arisen due to operations of the Bank entitling the shareholder to demand evaluation and buy-back of her shares.

9.5. Reduction of the charter capital of the Bank is also allowed in cases provided under the Law of the RA On Bankruptcy of Banks and Financial Organizations.

9.6. Consent of the Board of the Central Bank of the RA is required for buy-back of shares. The Central bank may refuse providing such consent, if:

a) in the event of such buy-back the Bank will not be able to satisfy demands of its creditors;

b) such buy-back will result in breach of main economic normatives;

գ) մասնակցության հետզնումը կհանգեցնի ՀՀ բանկային համակարգի ապակայունացմանը:

c) such buy-back will result in unstableness of the banking system of the RA.

9.7. Բանկը պարտավոր է տեղեկացնել բաժնետերերին նրանց պատկանող բաժնետոմսերի հետզնման պահանջի իրավունքի և իրականացման կարգի մասին:

9.7. The Bank shall inform its shareholders on their right of buy-back and the procedure of exercising such right.

Ընդհանուր ժողովի մասին ծանուցումը, որի օրակարգում ընդգրկված են հարցեր, որոնց վերաբերյալ քվեարկությունը կարող է օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով հանգեցնել բաժնետոմսերի հետզնման պահանջի իրավունքի առաջացմանը (9.2 կետ), պետք է պարունակի սույն կետում նշված տեղեկությունները: Ծանուցումը պետք է պարունակի նաև տեղեկություններ բաժնետոմսերի հետզնման գնի մասին:

Notification on general meeting, agenda of which includes issues in connection with decisions, adoption of which may result in the manner prescribed by law and this charter in arising of the right of buy-back (9.2 clause) shall include information provided under this clause. The notification shall also include information on the buy-back price.

Նշված ընդհանուր ժողովի որոշումների ընդունման պահից 7-օրյա ժամկետում, Բանկը պարտավոր է ծանուցել բաժնետոմսերի հետզնման իրավունք ունեցող բաժնետերերին նրանց մոտ Բանկից բաժնետոմսերի հետզնման պահանջի իրավունքի առաջացման և հետզնման կարգի մասին:

The Bank shall notify shareholders, entitled to demand buy-back on arising of their right of buy-back and the buy-back procedure within 7 days following such date at which such decisions of general meeting have been made.

Բաժնետիրոջ իրեն պատկանող բաժնետոմսերը հետ գնելու մասին գրավոր պահանջը, որը պարունակում է տեղեկություններ հետզնման ներկայացված բաժնետոմսերի քանակի և բաժնետիրոջ բնակության (գտնվելու) վայրի մասին, ներկայացվում է Բանկ՝ ընդհանուր ժողովի կողմից համապատասխան որոշումների ընդունման պահից ոչ ուշ, քան 45 օրվա ընթացքում:

The written request of the shareholder of the Bank on buy-back of her share, which includes information on the amount of shares, subject to buy-back and residence address of the shareholder, shall be submitted to the Bank not later than within 45 days following the date of adoption by the general meeting of shareholders of the relevant decision.

Սույն կետում սահմանված ժամկետի ավարտից հետո Բանկը պարտավոր է 30 օրվա ընթացքում հետ գնել բաժնետոմսերը հետզնման գրավոր պահանջ ներկայացրած բաժնետերերից:

The Bank shall buy back the relevant shares from the shareholders, having submitted written request on buy back, within 30 days upon expiration of the term provided under this clause.

Բաժնետոմսերի հետզնումն իրականացվում է սույն կետում նշված ծանուցման մեջ սահմանված գնով:

Buy back shall be executed at the price determined in the notification provided under this clause.

Բաժնետոմսերի հետզնմանն ուղղվող միջոցների գումարը չի կարող գերազանցել Բանկի զուտ ակտիվների արժեքի տասը տոկոսը: Ձուտ ակտիվների արժեքը սահմանվում է սույն կանոնադրության 9.2 կետի (ա) և (բ) ենթակետերում նշված որոշումների ընդունման պահի դրությամբ:

The amount of proceeds (property) directed at buy-back of shares of the Bank shall not exceed 10% of the value of its net assets. The value of net assets shall be determined as of the date of making decisions provided under sub-clauses "a" and "b" of clause 9.2.

Եթե բաժնետերերի պահանջով հետզնման ենթակա բաժնետոմսերի գումարային արժեքը գերազանցում է այն գումարը, որը Բանկը կարող է տրամադրել բաժնետոմսերի հետզնման համար, ապա բաժնետոմսերը հետ են գնվում բաժնետերերի ներկայացված պահանջներին համամասնորեն:

If the total value of the shares submitted by the shareholder for buy-back exceeds the amount, which the Bank may allocate for buy-back of shares, then the shares are bought back pro rata to the requests of the shareholders.

In the event the shareholder disagrees with the buy-back

Եթե բաժնետերը համաձայն չէ հետզհետեւ գնի հետ, ապա նա իրավունք ունի բաժնետոմսերի վերագնահատման պահանջով դիմել դատարան՝ Բանկի կողմից բաժնետերերին վճարումը կատարելու սահմանված օրից 3 ամսվա ընթացքում:

Սույն կանոնադրության 9.2 կետով սահմանված հիմքերով հետ գնված բաժնետոմսերն անցնում են Բանկի տնօրինմանը:

Նշված բաժնետոմսերը չեն տալիս ձայնի իրավունք, հաշվի չեն առնվում ձայների հաշվարկման ժամանակ, և դրանցով շահութաբաժիններ չեն հաշվարկվում: Դրանք ենթակա են տեղաբաշխման մեկ տարվա ընթացքում: Հակառակ դեպքում ընդհանուր ժողովը պարտավոր է որոշում ընդունել նշված բաժնետոմսերի մարման միջոցով կանոնադրական հիմնադրամի չափի նվազեցման մասին:

9.8. Բանկի կողմից իր բաժնետոմսերը հետ գնելու դեպքում կանոնադրական հիմնադրամի նվազեցման կամ տվյալ բաժնետոմսերի իրացման մասին որոշումն ընդունվում է ընդհանուր ժողովի կողմից, դրան մասնակցող ըվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4 -ով, սակայն ոչ պակաս ըվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 2/3-ից:

10. Բանկի կանոնադրական հիմնադրամի ավելացումը

10.1. Բանկը կարող է ավելացնել իր կանոնադրական հիմնադրամը Բանկի բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման միջոցով:

10.2. Բանկն իրավունք չունի անցկացնել իր թողարկած բաժնետոմսերի բաց բաժանորդագրություն կամ անսահմանափակ թվով անձանց այլ կերպ առաջարկել ձեռք բերել դրանք:

10.3. Եթե նախկինում տեղաբաշխված բաժնետոմսերի արժեքի գումարը լրիվ վճարված չէ, ապա Բանկը կանոնադրական հիմնադրամը չի կարող մեծացնել ֆինանսական միջոցների ներգրավման հաշվին:

10.4. Լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման մասին որոշմամբ պետք է սահմանվի՝
ա) լրացուցիչ տեղաբաշխվող հասարակ (սովորական) բաժնետոմսերի քանակը,

price, she has the right to apply to court for revaluation of her shares within 3 months following such date at which payment to the shareholders by the bank shall be made.

Shares bought back in accordance with clause 9.2 of this charter are transferred to the possession of the Bank. Such shares do not entitle voting rights, are not accounted during calculation of votes or distribution of dividends. They are subject to allocation within one year. Otherwise, the general meeting shall make a decision on reduction of the charter capital through redemption of such shares.

9.8. In the event of buy-back by the Bank of its shares, decision on reduction of charter capital or sale of such shares shall be made by general meeting by 3/4 of votes of shareholders, participating in the meeting, but not less than 2/3 of votes of all shareholders, holding voting shares.

10. Increase of charter capital of the Bank

10.1. The Bank may increase its charter capital through increase of nominal value of its shares or allocation of additional shares.

10.2. The bank shall not organize open subscription of or otherwise offer its issued shares to unlimited number of persons.

10.3. If previously distributed shares are not fully paid, the charter capital of the Bank shall not be increased through attraction of financing.

10.4. The resolution on distribution of additional shares shall establish:

a) the number of additional ordinary shares available for allocation;

բ) լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման ժամկետները և պայմանները, այդ թվում՝ տեղաբաշխվող բաժնետոմսերի արժեքը,
գ) օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ տվյալներ:

10.5. Բանկն իր գործունեության ֆինանսական արդյունքներն ամփոփելուց հետո կարող է տեղաբաշխված բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման միջոցով ավելացնել կանոնադրական հիմնադրամը՝

ա) շահույթի մի մասը փոխանցելով կանոնադրական հիմնադրամ,

բ) Բանկի զուտ ակտիվների (սեփական կապիտալի) արժեքից կանոնադրական հիմնադրամի, գլխավոր պահուստի և արտոնյալ բաժնետոմսերի (դրանց առկայության դեպքում) լուծարային ու անվանական արժեքների տարբերության ընդհանուր գումարը գերազանցող մասը լրիվ կամ մասնակի փոխանցելով կանոնադրական հիմնադրամ:

10.6. Բաժնետոմսերի անվանական արժեքը մեծացնելու միջոցով Բանկը չի կարող ավելացնել կանոնադրական հիմնադրամն ավելի, քան ընդհանուր ժողովի հաստատած վերջին հաշվեկշիռում կամ վերջին աուդիտի արդյունքներով սահմանված զուտ ակտիվների արժեքն է:

10.7. Մեկ տարուց ոչ պակաս ժամկետում բաժնետոմսերի հավաստագիրը փոխանակելու նպատակով կամ համապատասխան գրառում կատարելու համար չլիմելու դեպքում հավաստագրերը համարվում են անվավեր:

10.8. Բանկը չի կարող բաժնետոմսեր թողարկել նաև իր տնտեսական գործունեությամբ առաջացած վնասները ծածկելու համար:

11. Բանկի պահուստային հիմնադրամը (գլխավոր պահուստը) և այլ հիմնադրամները

11.1. Բանկում ստեղծվում է պահուստային հիմնադրամ՝ ոչ պակաս կանոնադրական հիմնադրամի 15 տոկոսից:

Եթե պահուստային հիմնադրամը կազմում է կանոնադրությամբ սահմանված չափից ավելի փոքր մեծություն, ապա հատկացումներն այդ հիմնադրամին կատարվում են շահույթից առնվազն 5 տոկոսի չափով:

b) terms and conditions, including allocation price of additionally issued shares;

c) other data provided under laws and this charter.

10.5. After summarizing its financial results the Bank may increase its charter capital through increase of nominal value of its allocated shares:

a) by transferring a part of its profit to the charter capital;

b) by fully or partly transferring from the net asset value (equity) of the Bank the amount, exceeding the difference of liquidation and nominal values of the charter capital, general reserve and preferred shares (if any) to the charter capital of the Bank.

10.6. The Bank shall not increase its charter capital through increase of nominal value of its shares, as a result of which it shall exceed the value of its net assets established by the most recent audit results or the most recent balance sheet approved by general meeting of shareholders.

10.7. Share certificates shall be deemed invalid in case when no application for their exchange or making of relevant entry has been submitted within a term of one year minimum.

10.8. The Bank shall not issue shares to cover losses incurred as a result of its economic activity.

11. The reserve fund (general reserve) and other funds of the Bank

11.1. The Bank shall establish a reserve fund, which shall be not less than 15% of its charter capital. If the reserve fund is less than the amount provided under this charter, then allocations to reserve fund shall be made in an amount of not less than 5% of the profit of the Bank.

11.2. Պահուստային հիմնադրամը օգտագործվում է Բանկի կորուստները ծածկելու, ինչպես նաև Բանկի կողմից թողարկված պարտատոմսերը մարելու և բաժնետոմսերը հետ գնելու համար, եթե Բանկի շահույթը և այլ միջոցները դրա համար չեն բավարարում: Պահուստային հիմնադրամն օգտագործվում է Բանկի խորհրդի որոշմամբ:

11.3. Պահուստային հիմնադրամը ձևավորվում է օրենքով սահմանված կարգով Բանկի շահույթից տարեկան մասհանումների միջոցով՝ մինչև սահմանված չափերին հասնելը:

11.4. Բանկն օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով կարող է ստեղծել նաև այլ հիմնադրամներ:

11.5. Հիմնադրամների ձևավորումը, դրանց հատկացումների կարգը և չափերը որոշվում են Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից, իսկ դրանց օգտագործումը կատարվում է Բանկի խորհրդի որոշմամբ:

12. Բանկի կանոնադրական հիմնադրամում մասնակցություն ձեռք բերելը և դրա սահմանափակումները

12.1. Բանկի բաժնետերերը օրենքներով և սույն կետով սահմանված կարգով ցանկացած ժամանակ կարող են օտարել իրենց պատկանող բաժնետոմսերը:

Բաժնետիրոջ կողմից բաժնետոմսերի օտարումն իրականացվում է՝ հաշվի առնելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված Բանկի կանոնադրական հիմնադրամում այլ մասնակցություն ձեռք բերելու սահմանափակումները:

Բանկի բաժնետերն ունի այլ բաժնետերերի կողմից վաճառվող բաժնետոմսերը ձեռք բերելու նախապատվության իրավունք իրեն պատկանող բաժնետոմսերին համամասնորեն:

Բաժնետերը օտարելու իր մտադրության մասին գրավոր ձևով հայտնում է Բանկի վարչության նախագահին: Վարչության նախագահը պարտավոր է գրությունը Բանկ մուտքագրվելու պահից 5-օրյա ժամկետում տեղեկացնել Բանկի մյուս բաժնետերերին սույն կանոնադրությամբ ընդհանուր ժողովի գումարման համար սահմանված ծանուցման կարգով: Բաժնետերերի կողմից առաջարկվող բաժնետոմսերը գնելու նախապատվության իրավունքի ժամկետը սահմանվում է 30 օր:

11.2. Reserve fund shall be used for covering losses of the Bank, as well as repayment of bonds issued by the Bank and buy-back of shares of the Bank in case when profit and other proceeds of the Bank are insufficient for such purposes. The reserve fund shall be used upon decision of the council of the Bank.

11.3. The reserve fund of the Bank constitutes, in the manner prescribed by law, of annual allocations made from the profit of the Bank until replenishment of the necessary amount.

11.4. The Bank may establish other funds in the manner prescribed by law and other legal acts.

11.5. Establishment of funds, the procedure and amount of allocations to such funds are determined by the general meeting of shareholders. Such funds are used upon decision of the council of the Bank.

12. Participation and restrictions of participation in the charter capital of the Bank

12.1. The shareholders of the Bank may at any time alienate their shares in the manner prescribed by laws and this clause

Restrictions on acquisition of other participation in the charter capital of the Bank provided under the Law of the RA On Banks and Banking shall be taken into account when alienating shares by the shareholder of the Bank.

A shareholder of the Bank has a pre-emption right to acquire, pro rata to her shares in the Bank, shares sold by other shareholders.

A shareholder shall inform the Chairman of the Management Board of the Bank on her intention to alienate her shares. The Chairman of the Management Board shall inform on such intention other shareholders of the Bank within 5 days upon receipt of such notification in the manner prescribed under this charter for notification on convocation of general meeting.

Եթե սույն կետով սահմանված ժամկետում բաժնետերերից ոչ մեկը չի օգտվում նախապատվության իր իրավունքից, ապա բաժնետոմսերը կարող են օտարվել երրորդ անձանց: Բանկի բաժնետոմսի օտարումը երրորդ անձանց կարող է կատարվել միայն օրենսդրությամբ սահմանված կարգով:

Բանկի կողմից փակ բաժանորդագրության կարգով տեղաբաշխվող բաժնետոմսեր կարող են ձեռք բերել նաև Բանկի մասնակից չհանդիսացող անձինք:

Բանկի բաժնետերերը (հասարակ բաժնետոմսերի սեփականատերերը) Բանկի կողմից տեղաբաշխվող բաժնետոմսերի և բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի ձեռքբերման նախապատվության իրավունք ունեն, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Եշված նախապատվության իրավունքը բաժնետերերն իրականացնում են համապատասխան տեղաբաշխման մասին իրենց ձևուցելու պահից 10 օրվա ընթացքում:

Բանկի ջվեարկող բաժնետոմսերի սեփականատերեր հանդիսացող բաժնետերերը պետք է ընդհանուր ժողովի գումարման մասին սահմանված կարգով Բանկի դրամական վճարման ենթակա ջվեարկող բաժնետոմսերի և ջվեարկող բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի տեղաբաշխումն սկսվելու օրվանից առնվազն 30 օր առաջ ձևուցվեն նախապատվության իրավունքի՝ իրենց կողմից իրականացման հնարավորության մասին:

Չանուցումը պետք է տեղեկություններ պարունակի՝

ա) տեղաբաշխվող ջվեարկող բաժնետոմսերի և ջվեարկող բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի քանակի մասին,

բ) տեղաբաշխվող ջվեարկող բաժնետոմսերի և ջվեարկող բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի տեղաբաշխման գնի (այդ թվում՝ տեղաբաշխվող ջվեարկող բաժնետոմսերի և ջվեարկող բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի ձեռքբերման նախապատվության իրավունք ունեցող Բանկի բաժնետերերի համար տեղաբաշխման գնի) մասին,

գ) ընկերության բաժնետերերի կողմից նախապատվության իրավունքով ձեռք բերվող բաժնետոմսերի և ջվեարկող բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի քանակի որոշման կարգի, ինչպես նաև այդ իրավունքի իրականացման կարգի և ժամկետների մասին:

դ) ձեռք բերվող բաժնետոմսերի տեսակներն ու դասերը:

The term for application of pre-emption rights for purchase of shares offered by other shareholders is 30 days. In the event none of the shareholders uses her pre-emption right within the term provided under this clause, the shares may be alienated to third parties. Shares may be alienated to third parties solely in the manner prescribed by laws.

Shares allocated by the Bank through private subscription may be acquired by non-shareholders.

Shareholders of the Bank (owners of ordinary shares) have pre-emption right to acquire shares and securities convertible to shares, allocated by the Bank, except for cases provided by law.

Such pre-emption right shall be exercised by shareholder of the Bank within 10 days following receipt of notification on relevant allocation.

The shareholders, holding voting shares of the Bank, shall be notified on the possibility of exercising their pre-emption rights in the manner prescribed for convocation of a general meeting and at least 30 days prior to such date at which allocation of voting shares, subject to payment in cash and securities convertible to voting shares of the Bank shall start.

The notification shall include information on:

a) the number of voting shares and securities convertible to voting shares subject to allocation;

b) allocation price of voting shares and securities convertible to voting shares (including allocation price of voting shares and securities convertible to voting shares for the shareholders of the Bank, having a pre-emption right of their acquisition);

c) procedure of determining the amount of shares and securities convertible to voting shares to be acquired by the shareholders of the Bank with pre-emption right, as well as on terms and information for exercising such rights;

d) types and classes of the shares to be acquired.

Բաժնետերն իրավունք ունի իրականացնել իր նախապատվության իրավունքը լրիվ ծավալով կամ մասնակիորեն՝ քվեարկող բաժնետոմսերի կամ քվեարկող բաժնետոմսերի փոխարկող արժեթղթերի ձեռքբերման մասին Բանկին գրավոր ծանուցում ուղարկելու միջոցով, որը պետք է րովանդակի՝ ա) բաժնետիրոջ լրիվ ֆիրմային անվանումը (ֆիզիկական անձի համար՝ անունը), պետական գրանցման տվյալները (անձնագրային տվյալները), գտնվելու (բնակության) վայրը, բ) ձեռք բերվող բաժնետոմսերի և (կամ) արժեթղթերի քանակը, գ) բաժնետոմսերի և (կամ) արժեթղթերի դիմաց վճարման մասին փաստաթուղթը:

Ծանուցումը պետք է ներկայացվի Բանկի քվեարկող բաժնետոմսերի և քվեարկող բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի տեղաբաշխման սկսելու օրվանից ոչ ուշ, քան մեկ օր առաջ:

12.2. Բանկի կանոնադրական հիմնադրամի բաժնետոմսերը անցնում են Բանկի բաժնետեր իրավաբանական անձանց իրավահաջորդներին և բաժնետեր քաղաքացիների ժառանգներին:

12.3. Անձը կամ փոխկապակցված անձինք մեկ կամ մի քանի գործարքների հետևանքով Բանկի կանոնադրական հիմնադրամում կարող են «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված նշանակալից մասնակցություն ձեռք բերել միայն ՀՀ Կենտրոնական բանկի նախնական համաձայնությամբ:

Բանկի կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու նախնական համաձայնությունն ստանալու համար Բանկի միջնորդությամբ անձը ՀՀ Կենտրոնական բանկ է ներկայացնում հայտարարություն այն մասին, որ իր մասնակցության միջոցով որևէ այլ անձ Բանկում անուղղակի նշանակալից մասնակցություն ունեցող անձի կարգավիճակ ձեռք չի բերում, հակառակ դեպքում այդ անձը պարտավոր է ներկայացնել նաև անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձանց վերաբերյալ ՀՀ Կենտրոնական բանկի սահմանած փաստաթղթերը:

Անուղղակի նշանակալից մասնակցի կարգավիճակ ձեռք բերելու համար սույն կետով սահմանված կարգով պահանջվում է ՀՀ Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը:

Բանկի կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու նախնական

A shareholder has the right to fully or partially exercise her pre-emption right by sending a written notice to the Bank on acquisition of voting shares or securities convertible to voting shares. Such notice shall include:

a) full firm name of the shareholder (name in case of individual), state registration data (passport data), registered (residence) address;

b) the number of shares and/or securities to be acquired;

c) document on payment of shares and/or securities.

Notification shall be submitted not later than one day prior to the beginning of allocation of the voting shares and securities convertible to voting shares of the Bank.

12.3. The shares in the charter capital of the Bank shall be transferred to the heirs of individual and legal successors of legal entity shareholders of the Bank.

12.3 A person or its affiliate may acquire, through one or more transactions, a significant participation in the charter capital of the Bank provided under the Law of the RA On Banks and Banking solely upon prior consent of the Central Bank of the RA.

To seek the prior consent for acquisition of significant participation in charter capital of the Bank a person shall submit to the Central Bank of the RA through petition of the Bank a declaration, whereby she shall confirm that as a result of its participation no other person shall acquire an indirect significant participation in the charter capital of the Bank. Otherwise, such person shall submit documents determined by the Central Bank of the RA on persons acquiring indirect major participation in the charter capital of the Bank.

Prior consent of the Central Bank of the RA is required for acquisition of indirect major holding in the charter capital of the Bank.

To receive prior consent for acquisition of significant participation in the charter capital of the Bank a person or her affiliate shall submit to the Central Bank of the RA through petition of the Bank complete and satisfactory

համաձայնությունը ստանալու համար Բանկի միջնորդությամբ անձը կամ փոխկապակցված անձը ՀՀ Կենտրոնական բանկ պետք է ներկայացնի նաև ներդրվող միջոցների ծագման օրինականության վերաբերյալ բավարար և ամբողջական հիմնավորումներ (փաստաթղթեր, տեղեկություններ և այլն), ինչպես նաև ՀՀ Կենտրոնական բանկի սահմանած ձևով այն իրավաբանական անձանց վերաբերյալ տվյալները (այդ թվում՝ անվանումը, գտնվելու վայրը, ֆինանսական հաշվետվությունները, տեղեկություններ ղեկավարների մասին, տեղեկություններ նշանակալից մասնակցություն ունեցող անձանց մասին), որոնցում Բանկի կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձը հանդիսանում է նշանակալից մասնակցություն ունեցող անձ:

Բանկի կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու նախնական համաձայնությունն ստանալու համար Բանկի միջնորդությամբ անձի կամ փոխկապակցված անձանց կողմից ՀՀ Կենտրոնական բանկ ներկայացվող՝ օրենքով սահմանված փաստաթղթերի և այլ փաստաթղթերի, տեղեկությունների ցանկը, ձևը, դրանց ներկայացման կարգը և պայմանները սահմանում է ՀՀ Կենտրոնական բանկը:

ՀՀ Կենտրոնական բանկը սույն կետով սահմանված կարգով պահանջվող բոլոր փաստաթղթերն ստանալուց հետո մեկամսյա ժամկետում քննում է դրանք:

ՀՀ Կենտրոնական բանկի կողմից պահանջվող որոշակի փաստեր պարզաբանելու նպատակով մեկամսյա ժամկետը կարող է ՀՀ Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ կասեցվել:

ՀՀ Կենտրոնական բանկի կողմից մեկամսյա ժամկետում դիմումը չմերժելու կամ մեկամսյա ժամկետը կասեցնելու մասին անձին չտեղեկացնելու դեպքում համաձայնությունը համարվում է տրված:

12.4. ՀՀ Կենտրոնական բանկը մերժում է դիմումը «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերում:

12.5. Առանց ՀՀ Կենտրոնական բանկի նախնական համաձայնության, Բանկի կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն ձեռքբերման պայմանագիրն առոչինչ է:

evidence (documents, information, etc.) on legality of the origin of the invested proceeds, as well as data (including name, address, financial reports, information on managers and significant participants) in the manner prescribed by the Central Bank of the RA on legal entities where the person, acquiring significant participation in the charter capital of the Bank, has a significant participation.

The list, format, procedure and terms of submission of the documents, provided by laws, and other documents and information to be submitted by the person or its affiliate to the Central Bank of the RA for seeking of prior consent for acquisition of significant participation in the charter capital of the Bank are determined by the Central Bank of the RA.

Central Bank of the RA examines all documents required under this clause within one month upon their receipt.

The one-month term may be suspended upon decision of the Board of the Central Bank of the RA for clarification of certain facts by the Central Bank of the RA.

In the event within one month the Central Bank of the RA fails to reject the application or inform the person on suspension of the one-month term, the consent shall be deemed as provided.

12.5. The Central Bank of the RA shall reject the application in cases provided under the Law of the RA On Banks and Banking.

12.6. An agreement on acquisition of significant participation in the charter capital of the Bank is null without the prior consent of the Central Bank of the RA.

12.6. Սույն կանոնադրության 12.3 կետով սահմանված սահմանափակումները չեն տարածվում «Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն հաշվետու թողարկող հանդիսացող Բանկի կանոնադրական հիմնադրամում մասնակցության ձեռքբերման վրա, եթե դա կատարվել է ֆոնդային բորսայում և չի գերազանցում Բանկի կանոնադրական հիմնադրամի քսան տոկոսը, իսկ գերազանցելու դեպքում ՀՀ Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը ձեռք է բերվում «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

12.7. Անձը կամ փոխկապակցված անձինք չեն կարող ձեռք բերել նշանակալից մասնակցություն, եթե՝

- ա) անձը դիտավորությամբ կատարված հանցագործություն կատարելու համար դատվածություն ունի,
- բ) անձը օրինական ուժի մեջ մտած վճռով կամ դատավճռով զրկվել է ֆինանսական, բանկային, հարկային, մաքսային, պոլստրային, տնտեսական, իրավական ոլորտներում պաշտոններ վարելու իրավունքից,
- գ) անձը սնանկ է ճանաչվել և չմարված (չներված) պարտավորություններ ունի,
- դ) անձի գործողությունները նախկինում հանգեցրել են Բանկի կամ այլ անձի սնանկացմանը,
- ե) տվյալ անձը կամ փոխկապակցված անձինք անցյալում կատարել են այնպիսի արարք, որը ՀՀ Կենտրոնական բանկի հաստատած ուղեցույցով հիմնավորված՝ ՀՀ Կենտրոնական բանկի կարծիքով հիմք է տալիս կասկածելու, որ տվյալ անձի՝ որպես Բանկի բարձրագույն կառավարման մարմնի որոշումների կայացման ժամանակ ծայնի իրավունք ունեցող անդամի, գործողությունները կարող են հանգեցնել Բանկի սնանկացման կամ ֆինանսական վիճակի վատթարացման, կամ հեղինակության և գործարար համբավի վարկաբեկման,
- զ) տվյալ գործարքն ուղղված է կամ հանգեցնում է կամ կարող է հանգեցնել ազատ տնտեսական մրցակցության սահմանափակմանը,
- է) տվյալ գործարքի հետևանքով Բանկի կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձը և նրա հետ փոխկապակցված անձինք Հայաստանի Հանրապետության բանկային շուկայում տվյալ գործարքի հետևանքով ձեռք են բերում գերիշխող

12.7. Restrictions provided under clause 12.3 of this charter do not apply to acquisition of participation in the charter capital of the Bank, if the latter is at the moment of such acquisition a reporting issuer in accordance with the Law of the RA On Securities Market, if the transaction was executed in the exchange market and as a result of such transaction the share of the acquiring participant does not exceed 20% of the charter capital of the Bank. If the shares of the acquiring participants exceeds 20% of the charter capital of the Bank, prior consent of the Central Bank of the RA is sought in the manner prescribed under the Law of the RA On Banks and Banking.

12.8. A person or her affiliates may not acquire significant participation if:

- a) the person has been convicted for committing a deliberate crime;
- b) the person has been deprived, pursuant to a court decision in force, from the right of holding positions in the financial, banking, tax, customs, commercial, economic and legal sectors;
- c) the person has been declared as bankrupt and has overdue liabilities;
- d) the previous actions of the person have resulted in the bankruptcy of the Bank or other person;
- e) the person or her affiliates have previously committed an action, which, in the reasonable opinion of the Central Bank of the RA, justified by the guideline approved by the Board of the Central Bank of the RA, gives grounds to suspect that the actions of a member having a voting right during the decision making of the highest body of the management of the Bank may lead to the bankruptcy of the Bank or deterioration of its financial state, or discrediting of its prestige and business reputation;
- f) the transaction is aimed at or will or may result in the restriction of free economic competition;
- g) as a result of this transaction the person, acquiring a significant participation in the charter capital of the Bank, or her affiliates shall acquire a dominant position in the banking market of the Republic of Armenia, which will

դիրք, որն իրենց հնարավորություն է տալիս կանխորոշել «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածով սահմանված գործառնությունների կամ դրանցից թեկուզ մեկի շուկայական սակագները կամ պայմանները,

ը) փաստաթղթերը ներկայացվել են ՀՀ Կենտրոնական բանկի սահմանած ձևի և կարգի խախտումներով, կամ ներկայացված փաստաթղթերում կամ տեղեկություններում արտացոլվել են կեղծ կամ անարժանահավատ տեղեկություններ:

թ) տվյալ գործարքի հետևանքով Բանկի կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն ձեռք բերող բաժնետերեր կամ նրա հետ փոխկապակցված անձը ՀՀ Կենտրոնական բանկի հիմնավոր կարծիքով գտնվում է ֆինանսական վատ վիճակում կամ նշանակալից բաժնետիրոջ կամ նրա հետ փոխկապակցված անձանց ֆինանսական վիճակի վատթարացումը կարող է պատճառ հանդիսանալ Բանկի ֆինանսական վիճակի վատթարացման, կամ Բանկի կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձանց և (կամ) նրանց հետ փոխկապակցված անձանց գործունեությունը կամ Բանկի հետ նրանց փոխհարաբերությունների ընդլայնումը ՀՀ Կենտրոնական բանկի հիմնավոր կարծիքով կարող է խոչընդոտել ՀՀ Կենտրոնական բանկի կողմից արդյունավետ վերահսկողության իրականացմանը կամ թույլ չի տալիս բացահայտելու կամ արդյունավետ կառավարելու Բանկի ռիսկերը,

ժ) անձը չի ներկայացնում իր կողմից ներդրվող միջոցների ծագման օրինականության վերաբերյալ բավարար և ամբողջական հիմնավորումներ (փաստաթղթեր, տեղեկություններ և այլն):

12.9. Օֆշորային տարածքներում մշտական բնակության վայր ունեցող կամ գործունեություն ծավալող ֆիզիկական անձինք, ինչպես նաև այդ տարածքներում ստեղծված կամ գրանցված իրավաբանական, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող անձինք կամ սույն կետով սահմանված անձանց հետ փոխկապակցված անձինք մեկ կամ մի քանի գործարքների հետևանքով Բանկի կանոնադրական հիմնադրամում մասնակցություն (անկախ մասնակցության չափից) կարող են ձեռք բերել բացառապես սույն կանոնադրության և օրենքով սահմանված կարգով՝ ՀՀ Կենտրոնական բանկի նախնական համաձայնությամբ:

Օֆշորային տարածքների ցանկը սահմանում է ՀՀ Կենտրոնական բանկի խորհուրդը:

enable them to predetermine the tariffs or terms of at least one of the operations provided under article 34 of the Law of the RA on Banks and Banking;

h) documents have been submitted with violation of the format and procedure established by the Central Bank of the RA or have reflected fraudulent or unreliable information;

i) in the reasonable opinion of the Central Bank of the RA the person, acquiring significant participation in the charter capital of the Bank or her affiliate is in a poor financial state or the worsening of the financial state of the significant shareholder or her affiliate may result in the worsening of the financial state of the Bank, or the activity carried out by the person acquiring significant participation in the charter capital of the Bank and/or her affiliates or the nature of their relationship with the Bank may, in the reasonable opinion of the Central Bank of the RA prevent performing of an efficient control by the Central Bank of the RA over the Bank or revealing and efficiently managing its risks;

j) the person fails to submit complete and satisfactory evidence (documents, information, etc.) on the legality of the origin of the proceeds to be invested by her.

12.10. Individuals permanently residing or conducting business, and legal entities, or disregarded entities, incorporated and registered in offshore territories or their affiliates may acquire, as a result of one or more transactions, participation (regardless of its size) in the charter capital of the Bank solely in the manner prescribed by law and this charter and upon prior consent of the Central Bank of the RA.

The list of offshore territories is established by the Board of the Central Bank of the RA.

The legal entities, in which the persons provided under this clause or their affiliates participate, may acquire participation (regardless of its size) in the charter capital

Սույն կետով սահմանված անձանց կամ նրանց հետ փոխկապակցված անձանց մասնակցությամբ ստեղծված իրավաբանական անձինք Քանկի կանոնադրական հիմնադրամում մասնակցություն (անկախ դրա չափից) կարող են ձեռք բերել բացառապես «Քանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածով սահմանված կարգով՝ ՀՀ Կենտրոնական բանկի նախնական համաձայնությամբ:

12.10. «Քանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածով սահմանված կարգով ՀՀ Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը պահանջվում է յուրաքանչյուր նոր գործարքի կամ գործարքների իրականացման դեպքում, որոնց արդյունքում անձի և (կամ) փոխկապակցված անձանց մասնակցությունը Քանկի կանոնադրական հիմնադրամում կգերազանցի համապատասխանաբար 10, 20, 50 և 75 տոկոսը:

12.11. Անձը կամ փոխկապակցված անձինք մեկ կամ մի քանի գործարքների հետևանքով Քանկի կանոնադրական հիմնադրամում կարող են այլ մասնակցություն (ոչ նշանակալից) ձեռք բերել միայն ՀՀ Կենտրոնական բանկի նախնական համաձայնությամբ: Քանկի կանոնադրական հիմնադրամում այլ (ոչ նշանակալից) մասնակցություն է հանդիսանում այն մասնակցությունը, որն անձը կամ փոխկապակցված անձինք ձեռք են բերում Քանկի նշանակալից մասնակցից, որի արդյունքում Քանկի նշանակալից մասնակցի մասնակցությունը Քանկում նվազում է:

ՀՀ Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը պահանջվում է յուրաքանչյուր գործարքի կամ գործարքների իրականացման դեպքում, որոնց արդյունքում Քանկում նշանակալից մասնակցություն ունեցող անձի մասնակցության չափը Քանկի կանոնադրական հիմնադրամում կնվազի համապատասխանաբար 75, 50, 25 կամ 10 տոկոսից:

Անձը կամ փոխկապակցված անձինք չեն կարող ձեռք բերել այլ (ոչ նշանակալից) մասնակցություն, եթե առկա է սույն կանոնադրության 12.7 կետով նախատեսված կամ հետևյալ հիմքերից մեկը՝

ա) կխախտվեն Քանկի հիմնական տնտեսական նորմատիվները,
բ) ՀՀ Կենտրոնական բանկի խորհրդի հաստատած ուղեցույցով հիմնավորված՝ ՀՀ Կենտրոնական բանկի խորհրդի կարծիքով հիմքեր կան կասկածելու, որ գործարքի հետևանքով կարող են առաջ գալ Քանկի ֆինանսական վիճակի վատթարացման,

of the Bank solely in the manner prescribed under article 18 of the Law of the RA On Banks and Banking and upon prior consent of the Central Bank of the RA.

12.11. According to article 18 of Law of the RA On Banks and Banking, the prior consent of the Central Bank of the RA is required for any transaction(s), as a result of which the participation of the person or her affiliates in the charter capital of the Bank shall exceed 10%, 20%, 50% and 75% correspondingly.

12.12. A person or her affiliates may acquire, as a result of one or more transactions, other (non-significant) participation in the charter capital of the Bank solely upon prior consent of the Central Bank of the RA. Other (non-significant) participation is the participation that the person or her affiliates acquire from the significant participants of the Bank, as a result of which the participation of the significant shareholder of the Bank decreases.

Prior consent of the Central Bank of the RA is required for any transaction(s), as a result of which the participation of a significant participant in the charter capital of the Bank shall be less than 75%, 50%, 25% and 10% correspondingly.

A person or her affiliates may not acquire other (non-significant) participation, in the event any of the grounds provided under clause 12.7 of this charter, or any of the following grounds is present:

a) Such acquisition shall result in violation of main economic normatives of the Bank;

b) in the reasonable opinion of the Central Bank of the RA, justified by the guideline, approved by the Board of the Central Bank of the RA, there are grounds to suspect that the transaction may cause worsening of the financial

հեղինակության կամ գործարար համբավի վարկաբեկման միտումներ:

Առանց ՀՀ Կենտրոնական բանկի նախնական համաձայնության այլ մասնակցության ձեռքբերման պայմանագիրն առոչինչ է:

state of the Bank, damage of the business reputation of the Bank.

Any agreement on acquisition of other participation without prior consent of the Central Bank of the RA is null.

13. Բանկի շահույթի բաշխումը

13.1. Իր գործունեության արդյունքում Բանկի ստացած շահույթը Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն ենթակա է հարկման:

13.2. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հարկերը և մյուս պարտադիր վճարումները կատարելուց հետո ձևավորվում է Բանկի տրամադրության տակ մնացած զուտ շահույթը, որի բաշխումն իրականացվում է Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից՝ սույն կանոնադրությամբ սահմանված գլխավոր պահուստի և այլ ֆոնդերի համալրման և շահաբաժինների վճարման նպատակով:

13.3. Բանկն իրավունք ունի որոշում ընդունելու (հայտարարելու) իր բաժնետերերին եռամսյակային, կիսամսյակային կամ տարեկան շահութաբաժինների վճարման մասին, եթե այլ բան նախատեսված չէ օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ:

13.4. Միջանկյալ (եռամսյակային և կիսամսյակային) շահութաբաժինների վճարման, շահութաբաժնի չափի և դրա վճարման ձևի մասին որոշումն ընդունում է Բանկի խորհուրդը:

Միջանկյալ շահութաբաժինների չափը չի կարող գերազանցել նախորդ ֆինանսական տարվա արդյունքներով բաշխված շահութաբաժնի 50 տոկոսը:

13.5. Տարեկան շահութաբաժինների վճարման, շահութաբաժնի չափի և դրա վճարման ձևի մասին որոշումն ընդունում է Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովը՝ խորհրդի առաջարկությամբ:

Տարեկան շահութաբաժինների չափը չի կարող պակաս լինել արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափից:

13.6. Եթե ընդհանուր ժողովի որոշմամբ տարեկան շահութաբաժինների չափը սահմանվում է արդեն

13. Distribution of profits of the Bank

13.1. Profits gained as a result of activities of the Bank is subject to taxation pursuant to the laws of the Republic of Armenia.

13.2. After paying taxes and making other mandatory payments provided under the laws of the Republic of Armenia, the net profit of the Bank is formed, which shall remain at the disposal of the Bank and be distributed by the general meeting of shareholders of the Bank for the purposes of replenishment of reserve fund and other funds, provided under this charter and distribution of dividends.

13.3. The Bank may decide (declare) on payment of quarterly, semi-annual or annual dividends to its shareholders, unless otherwise provided under the laws of the RA and this charter.

13.4. The council shall decide on payment of interim (quarterly or semi-annual) dividends, as well as the amount and method of payment of such dividends.

The amount of the interim dividends shall not exceed 50% of dividends disbursed during the previous financial year.

13.5. The general meeting of shareholders shall decide, upon recommendation of the council, on payment of annual dividends, as well as on the amount and method of payment of such dividends. The amount of the annual dividends shall not be less than the amount of already paid interim dividends.

13.6. In the event when the amount of annual dividends, determined pursuant to decision of the general meeting is

վճարված միջանկյալ շահութաբաժինների չափին հավասար, ապա տարեկան շահութաբաժիններ չեն վճարվում: Եթե ընդհանուր ժողովի որոշմամբ տարեկան շահութաբաժինների չափը սահմանվում է արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափից ավելի, ապա տարեկան շահութաբաժինները վճարվում են սահմանված տարեկան շահութաբաժնի և տվյալ տարում արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների գումարի տարբերությամբ:

13.7. Ընդհանուր ժողովը իրավունք ունի որոշում ընդունելու շահութաբաժիններ չվճարելու մասին:

13.8. Տարեկան շահութաբաժինների վճարման ժամկետը սահմանվում է ընդհանուր ժողովի՝ շահութաբաժիններ վճարելու մասին որոշմամբ: Միջանկյալ շահութաբաժինների վճարման ժամկետը սահմանվում է խորհրդի՝ միջանկյալ շահութաբաժիններ վճարելու մասին որոշմամբ, բայց ոչ շուտ, քան տվյալ որոշման ընդունումից 30 օր հետո: Եթե այլ բան նախատեսված չէ Ընդհանուր ժողովի որոշմամբ, հայտարարված տարեկան շահութաբաժինները Բանկի կողմից պետք է վճարվեն Ընդհանուր ժողովի կողմից շահույթի բաշխման համապատասխան որոշումը կայացնելուց հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում:

13.9. Շահութաբաժինների յուրաքանչյուր վճարման համար խորհուրդը կազմում է շահութաբաժիններ ստանալու իրավունք ունեցող մասնակիցների ցուցակ, որում պետք է ընդգրկվեն՝

- ա) միջանկյալ շահութաբաժիններ վճարելու դեպքում Բանկի այն մասնակիցները, որոնք ընդգրկվել են Բանկի մասնակիցների ռեեստրում խորհրդի միջանկյալ շահութաբաժիններ վճարելու մասին որոշման կայացման օրվանից առնվազն 10 օր առաջ,
- բ) տարեկան շահութաբաժիններ վճարելու դեպքում Բանկի այն մասնակիցները, որոնք ընդգրկվել են Բանկի մասնակիցների ռեեստրում Բանկի մասնակիցների տարեկան ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող մասնակիցների ցուցակը կազմելու օրվա դրությամբ:

13.10. Բանկի բաժնետերերին շահութաբաժիններ բաշխելն արգելվում է, եթե այդ պահին Բանկի կրած կորուստները (վնասները) հավասար են կամ գերազանցում են Բանկում առկա չբաշխված գուտ շահույթի գումարին:

equal to the amount of already paid interim dividends, no annual dividends shall be paid. In the event when the amount of annual dividends, determined pursuant to decision of the general meeting, is more than the amount of already paid interim dividends, the annual dividends shall be distributed in the amount equal to the difference of the determined amount of annual dividends and the amount of interim dividends already paid.

13.7. The general meeting may decide on non-payment of dividends.

13.8. The term of payment of annual dividends is determined by the decision of the general meeting on payment of dividends. The term of payment of interim dividends is determined by the decision of the council on payment of interim dividends and shall not be earlier than 30 days following the date at which such decision has been made. Unless otherwise provided by the resolution of the General Meeting of Shareholders, any declared annual dividends shall be paid by the Bank to the shareholders within 15 business days after the relevant decision of the shareholders for distribution of the profit has been taken.

13.9. For each payment of dividends the council makes a list participants entitled to dividends, which shall include:

- a) in case of payment of interim dividends, the names of the shareholders of the Bank, included in the registry of shareholders of the Bank, as of at least 10 days prior to the date at which decision of the council on payment of dividends has been made;
- b) in case of payment of annual dividends, the names of shareholders of the Bank included in the registry of shareholders of the Bank as of the date at which the list of shareholders, entitled to participate in the annual general meeting of shareholders of the Bank has been made.

13.10. Payment of dividends to shareholders of the Bank is prohibited, if as of the date of payment the losses of the Bank are equal to or more than the amount of the retained profits of the Bank.

13.11. Շահույթի բաշխումը կատարվում է ՀՀ օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով:

14. Բանկի կառավարման մարմինները

14.1. Բանկի կառավարման մարմիններն են՝
ա) Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովը (այսուհետ՝ Ընդհանուր ժողով),

բ) Բանկի խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ),

գ) Բանկի վարչությունը (այսուհետ՝ Վարչություն),

դ) Բանկի վարչության նախագահը (այսուհետ՝ Վարչության նախագահ),

Ընդ որում, Բանկի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Բանկի Վարչության նախագահը՝ Բանկի Վարչության հետ համատեղ:

Բացի վերը նշված կառավարման մարմիններից, Բանկն ունի նաև գլխավոր հաշվապահ և ներքին աուդիտի ստորաբաժանում:

15. Բանկի Բաժնետերերի Ընդհանուր ժողովը

15.1. Բանկի կառավարման բարձրագույն մարմինը Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովն է:

15.2. Բանկը պարտավոր է ամեն տարի գումարել բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողով: Տարեկան ընդհանուր ժողովը գումարվում է ֆինանսական տարվա ավարտից հետո չորս ամսվա ընթացքում:

15.3. Ընդհանուր ժողովը գումարվում է բաժնետերերի համատեղ նիստի, հեռակա կարգով քվեարկության (հարցման) կամ հեռախոսակապի միջոցով: Տարեկան ընդհանուր ժողովը չի կարող անցկացվել հեռակա կարգով քվեարկության (հարցման) միջոցով:

Սույն կանոնադրության 15.26 կետի «բ» և «գ» ենթակետերում նշված հարցերից յոթաքանյուրի վերաբերյալ որոշմանը (դրա ցանկացած փոփոխությունը) բաժնետերերը կարող են տալ իրենց հաստատումը գրավոր ձևով կամ Ընդհանուր ժողովում այդ նպատակով իրենց լիազորված ներկայացուցիչների միջոցով:

15.4. Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովները կարող են լինել հերթական կամ արտահերթ:

13.11. Dividends are distributed in the manner prescribed by the laws of the RA and this charter.

14. Management Bodies of the Bank

14.1. Management bodies of the Bank are:

a) general meeting of shareholders of the Bank (the "General Meeting"),

b) council of the Bank (the "Council"),

c) management board of the Bank (the "Board"),

d) Chairman of the Management Board (the "Chairman of the Management Board"),

Management of day-to-day activities of the Bank is carried out by the Chairman of the Board together with the Board of the Bank.

Besides the abovementioned management bodies, the Bank has a chief accountant and internal audit subdivision.

15. General Meeting of Shareholders

15.1. The General Meeting is the highest management body of the Bank.

15.2. The Bank shall convene the annual General Meeting each year. The annual General Meeting shall be convened within the period of four months upon the end of the financial year.

15.3. The General Meeting may be held via joint meeting of shareholders, remote voting (through inquiry) or communication by telephone. Annual General Meeting shall not be held by remote (through inquiry) voting.

The Shareholders may give their approval to any of the matters stated in sub-point "b)" and "c)" of clause 15.26 of the present charter (or to any variation of them) either in writing or through their authorised representatives for this purpose at a General Meeting.

15.4. The General Meetings may be ordinary or extraordinary.

15.5. Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովի նախապատրաստման ընթացքում Բանկի Խորհուրդը որոշում է ժողովի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, տեղը և ժամանակը, ժողովի օրակարգը, ժողովի մասնակիցների ցուցակի կազմման տարին, ամիսը, ամսաթիվը, ժողովի նախապատրաստման ընթացքում բաժնետերերին տրամադրվող տեղեկությունների և նյութերի ցուցակը, ծանուցման ձևը, քվեաթերթիկների ձևը և քվեանդակությունը, եթե քվեարկությունները կատարվելու են քվեաթերթիկներով:

15.6. Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեն.

ա) Բանկի հասարակ (սովորական) բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը՝ իրենց պատկանող ձայների քանակով, ինչպես նաև անվանատերերը, եթե նրանք ներկայացնում են իրենց կողմից ներկայացվող Բանկի բաժնետերերի անվանումները և նրանց պատկանող բաժնետոմսերի քանակը հիմնավորող փաստաթղթեր:

բ) Բանկի կանոնադրությամբ սահմանված արտոնյալ բաժնետոմսեր տեղաբաշխված լինելու դեպքերում Բանկի արտոնյալ բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը՝ իրենց պատկանող արտոնյալ բաժնետոմսերի քանակին և անվանական արժեքին համապատասխան ձայների քանակով՝ օրենքով սահմանված դեպքերում, ինչպես նաև այդ բաժնետոմսերի անվանատերերը, եթե նրանք ներկայացնում են իրենց կողմից ներկայացվող բաժնետերերի անվանումները և նրանց պատկանող բաժնետոմսերի քանակը հիմնավորող փաստաթղթեր:

գ) Բանկի բաժնետեր չհանդիսացող խորհրդի անդամները և Կարգությունը՝ խորհրդակցական ձայնի իրավունքով:

դ) Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման անդամները՝ որպես դիտորդ,

ե) Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձը՝ որպես դիտորդ (եթե նրա եզրակացությունն առկա է գումարվող ընդհանուր ժողովի օրակարգի հարցերում),

զ) ՀՀ Կենտրոնական բանկի ներկայացուցիչները՝ որպես դիտորդ,

է) Բանկի այլ աշխատակիցները՝ իրենց կողմից Ընդհանուր ժողովի օրակարգում ընդգրկված հարցերը զեկուցելու դեպքում:

ը) տարածքային և կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները՝ որպես դիտորդ,

թ) Ընդհանուր ժողովի օրակարգում ընդգրկված որոշակի հարցերի վերաբերյալ մասնագիտական գիտելիքներին տիրապետող անձինք:

15.5. During preparation of the General Meeting, the Council shall determine the date, place and time of the General Meeting, agenda of the General Meeting, the date of the list of shareholders having right to participate at the General Meeting, list of information and documents to be provided to the shareholders during preparation of the General Meeting, form of the notice, form and content of the voting ballots in case if voting shall be carried out by voting ballots.

15.6. The following individuals are entitled to participate at the General Meeting:

a) shareholders holding ordinary (common) shares of the Bank pro rata to the number of their voting rights, as well as nominees, if they present names of the shareholders represented by them and the documents certifying the number of the shares held by them;

b) in case if preferred shares have been allocated as prescribed by this charter, shareholders holding preferred shares of the Bank by the voting rights pro rata to the number and nominal value of the preferred shares held by them, as well as nominees, if they present the names of the shareholders represented by them and the documents certifying the number of the shares held by them,

c) non-shareholder members of the Council and the Board with a right of advisory vote,

d) members of internal audit subdivision as an observer,

e) individuals carrying out external audit of the Bank (in case when their report is included in the agenda of the General Meeting) as observers,

f) representatives of the Central Bank as observers,

g) other employees of the Bank in case of reporting matters included in the agenda of the General Meeting,

h) heads of territorial and structural subdivisions as observers,

i) individuals having professional knowledge on certain matters included in the agenda of the General meeting.

15.7. Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող Բանկի բաժնետերերի ցուցակը կազմվում է խորհրդի կողմից սահմանված տարվա, ամսվա, ամսաթվի դրությամբ՝ Բանկի բաժնետերերի ռեեստրի տվյալների հիման վրա:

Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող Բանկի բաժնետերերի ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը չի կարող սահմանվել ավելի վաղ, քան Ընդհանուր ժողով գումարելու մասին խորհրդի որոշման ընդունումը, և ավելի ուշ, քան Ընդհանուր ժողովի գումարումից 45 օր առաջ:

Եթե Ընդհանուր ժողովը գումարվում է հեռակա քվեարկությամբ, ապա դրան մասնակցելու իրավունք ունեցող Բանկի բաժնետերերի ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը սահմանվում է Ընդհանուր ժողովի գումարումից առնվազն 35 օր առաջ:

15.8. Բանկը բաժնետերերի ընդհանուր ժողովի անցկացման մասին ՀՀ Կենտրոնական բանկին ծանուցում է դրա անցկացումից ոչ ուշ, քան 15 օր առաջ:

15.9. Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող Բանկի բաժնետերերի ցուցակը կազմելու համար բաժնետոմսերի անվանատերը պարտավոր է ցուցակը կազմելու տարով, ամսով, ամսաթվով տվյալներ տրամադրել այն անձանց մասին, որոնց շահերը ներկայացնելու նպատակով նա տնօրինում է բաժնետոմսերը:

15.10. Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող Բանկի բաժնետերերի ցուցակը պետք է տվյալներ պարունակի Բանկի յուրաքանչյուր բաժնետիրոջ անվան (անվանման), գտնվելու (բնակության) վայրի և Բանկի կանոնադրական հիմնադրամում նրան պատկանող մասնակցության մասին:

15.11. Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող Բանկի բաժնետերերի ցուցակը պետք է տրամադրվի ծանոթացման նպատակով Բանկի այն բաժնետերերին, որոնք գրանցված են Բանկի բաժնետերերի ռեեստրում:

Նշված ցուցակը տրամադրվում է ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետիրոջը սույն կանոնադրության 15.14 կետում նշված ծանուցման հետ միաժամանակ:

Բանկի բաժնետիրոջ պահանջով Բանկը պարտավոր է նրան տրամադրել տեղեկանք՝ Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակում նրա ընդգրկման մասին:

15.7. The list of shareholders entitled to participate at the General Meeting is compiled as of the date determined by the Council on the basis of the data of shareholders' register of the Bank. Compilation date of the list of shareholders entitled to participate at the General Meeting shall not be earlier than the date of the Council resolution on convocation of the General Meeting and later than 45 days prior to convocation of the General Meeting.

In case if the General Meeting is convened by remote voting, compilation date of the list of shareholders entitled to participate at the meeting participants shall be at least 35 days prior to the date of the General Meeting convocation.

15.8. The Central Bank of the Republic of Armenia shall be notified by the Bank on convocation of the General Meeting not later than 15 days prior to convocation.

15.9. For the purpose of compilation of the list of shareholders entitled to participate at the General Meeting, the nominees shall provide information on shareholders, for representation of whose interests the nominee disposes of the shares.

15.10. The list of shareholders entitled to participate at the General Meeting shall include information on the name (firm name), legal (residence) address of each of the shareholders of the Bank and her shareholding in the charter capital of the Bank.

15.11. The list of shareholders entitled to participate at the General Meeting shall be provided for acquaintance purposes to those shareholders of the Bank, who are included in the shareholders' register of the Bank. The above mentioned list shall be provided to the shareholder entitled to participate at the General Meeting together with the notice mentioned in section 15.14. of this charter.

Upon request of the shareholder, the Bank shall provide a certificate on her inclusion in the list of shareholders entitled to participate at the General Meeting.

Նշված տեղեկանքը տրամադրվում է Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետիրոջը վերջինիս գրավոր դիմումի հիման վրա՝ երկօրյա ժամկետում:

15.12. Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող Բանկի բաժնետերերի ցուցակում փոփոխություններ կառող են կատարվել միայն ցուցակը կազմելու ընթացքում թույլ տրված սխալներն ուղղելու կամ դրանում չընդգրկված Բանկի բաժնետերերի խախտված իրավունքները և օրինական շահերը վերականգնելու նպատակով:

15.13. Բանկը տարեկան ընդհանուր ժողովի անցկացման մասին իր բաժնետերերին ծանուցում է ընդհանուր ժողովի գումարման օրվանից 30 օր առաջ: Ըսկ արտահերթ ընդհանուր ժողովի անցկացման մասին իր բաժնետերերին ծանուցում է Ընդհանուր ժողովի գումարման օրվանից 10 օր առաջ:

15.14. Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետիրոջ ծանուցումն իրականացվում է պատվիրված նամակներ ուղարկելու կամ առձեռն հանձնելու կամ էլեկտրոնային փոստի հասցեով ծանուցելու միջոցով:

15.15. Բանկի տարեկան ընդհանուր ժողովի գումարման մասին հայտարարությունը օրենքով սահմանված ժամկետում հրապարակվում է ինտերնետում՝ Բանկի տեղային էջում և մամուլում:

15.16. Ընդհանուր ժողովի մասին ծանուցումը պետք է պարունակի՝

- ա) Բանկի ֆիրմային անվանումն ու գտնվելու վայրը:
- բ) Ընդհանուր ժողովի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամը և վայրը:
- գ) Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը:
- դ) Ընդհանուր ժողովի օրակարգում ընդգրկված հարցերը:
- ե) բաժնետերերի ծանոթանալու կարգը Ընդհանուր ժողովում ըննարկվող հարցերին վերաբերող տեղեկություններին և նյութերին, որոնք պետք է ներկայացվեն բաժնետերերին Ընդհանուր ժողովը նախապատրաստելու ընթացքում:

15.17. Եթե Բանկի բաժնետերերի ռեեստրում գրանցված անձը բաժնետոմսերի անվանատերն է,

The foregoing certificate shall be provided to the shareholder entitled to participate at the General Meeting within 2 days upon her written request.

15.12. The list of shareholders entitled to participate at the General Meeting may be amended solely for the purposes of correcting the mistakes made during compilation of the list or restoring the rights and legal interests of the shareholders of the Bank not included in the list.

15.13. The Bank notifies its shareholders on holding the annual General Meeting at least 30 days prior to its convocation.

The Bank notifies its shareholders on holding the extraordinary General Meeting at least 10 days prior to its convocation.

15.14. Notification of the shareholder entitled to participate at the General Meeting shall be made by registered mail or by hand delivery or via electronic mail.

15.15. The announcement of convocation of the annual General Meeting shall be published on the website of the Bank and in press within the terms prescribed by the law.

15.16. The notice on the General Meeting shall contain:

- a) firm name and legal address of the Bank;
- b) date and location of General Meeting convocation;
- c) list of the shareholders entitled to participate at the General Meeting;
- d) issues included in the agenda of the General Meeting;
- e) order of acquaintance with the information and documents related to issues to be discussed during the General Meeting, which shall be provided to the shareholders during preparation of the General Meeting.

15.17. In case if the person registered in the shareholders' register is a nominee, the notice on the

ապա Ընդհանուր ժողովի գումարման մասին ծանուցումն ուղարկվում է նրան: Վերջինս պարտավոր է ծանուցումն ուղարկել այն անձանց, որոնց շահերը նա ներկայացնում է օրենքով, այլ իրավական ակտերով կամ նրա և այդ անձանց միջև կնքված պայմանագրով սահմանված ժամկետներում:

15.18. Բանկի բաժնետերը, որը ձայնի իրավունք ունեցող բաժնետոմսերի առնվազն 2 տոկոսի սեփականատեր է հանդիսանում, Բանկի ֆինանսական տարվա ավարտից հետո՝ 30-60 օրվա ընթացքում, իրավունք ունի երկուսից ոչ ավելի առաջարկություններ ներկայացնել տարեկան ընդհանուր ժողովի օրակարգի վերաբերյալ: Տարեկան ընդհանուր ժողովի օրակարգի վերաբերյալ առաջարկությունները ներկայացվում են գրավոր՝ նշելով՝

- ա) հարցի առաջարկման հիմքերը,
- բ) հարցը առաջարկող բաժնետիրոջ անունը (անվանումը),
- գ) նրան պատկանող բաժնետոմսերի քանակը,
- դ) առաջարկության հեղինակի ստորագրությունը կամ դրա ֆաքսիմիլյաին վերարտադրությունը:

15.19. Խորհուրդը պարտավոր է քննարկել ներկայացված առաջարկները և որոշում ընդունել դրանք տարեկան ընդհանուր ժողովում ընդգրկելու սույն կանոնադրության 15.18 կետով սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ 15 օրվա ընթացքում:

Խորհուրդը կարող է որոշում ընդունել ներկայացված առաջարկները տարեկան ժողովի օրակարգում ընդգրկելը մերժելու մասին միայն այն դեպքում, եթե՝

- ա) առաջարկ ներկայացրած բաժնետիրոջ կողմից խախտվել է սույն կանոնադրության 15.18 կետով սահմանված ժամկետը,
- բ) առաջարկ ներկայացրած բաժնետերը չի տնօրինում Բանկի սույն կանոնադրության 15.18 կետով սահմանված քանակի ջվեարկող բաժնետոմսերին,
- գ) լրիվ չեն կամ բացակայում են սույն կանոնադրության 15.18 կետով սահմանված տվյալները,
- դ) առաջարկը հակասում է օրենքի և այլ իրավական ակտերի պահանջներին:

General Meeting convocation is dispatched to her. Such person shall dispatch the notice to the persons, whose interests she represents within the terms prescribed by the legal acts or the agreement entered into between her and those persons.

15.18. Shareholder of the Bank, who becomes the owner of at least 2 percent of the shares providing voting rights, is entitled to submit no more than 2 suggestions with respect to the agenda of the annual General Meeting within 30-60 days upon the end of the financial year.

Suggestions on the agenda of the annual General Meeting are submitted in writing and include:

- a) grounds for suggestion,
- b) name (firm name) of suggesting shareholder,
- c) number of shares held by her,
- d) signature of the author of suggestion and its facsimile reproduction.

15.19. The Council shall discuss the presented suggestions and resolve to include the suggested issues in the agenda of the annual General Meeting within 15 days upon expiry of the term mentioned in section 15.18 of this charter.

The Council may resolve to refuse including the suggested issues in the agenda of the annual General Meeting in case if:

- a) the shareholder making the suggestion has not complied with the term set forth in section 15.18. of this charter;
- b) the shareholder making the suggestion does not hold the number of shares set forth in section 15.18. of this charter;
- c) the information prescribed under section 15.18. is incomplete or has not been provided;
- d) the suggestion contradicts to the requirements of the law and other legal acts.

15.20. Խորհրդի հիմնադրված որոշումը ներկայացված առաջարկը տարեկան ընդհանուր ժողովում ընդգրկելը մերժելու մասին ուղարկվում է առաջարկը ներկայացրած բաժնետիրոջը (բաժնետերերին)՝ որոշումն ընդունելու պահից 3 օրվա ընթացքում: Խորհրդի որոշումը ներկայացված առաջարկը տարեկան ընդհանուր ժողովում ընդգրկելը մերժելու մասին կարող է բողոքարկվել դատական կարգով:

15.21. Ընդհանուր ժողովի նախապատրաստման ընթացքում Խորհուրդը որոշում է՝
ա) Ընդհանուր ժողովի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամն ու վայրը.
բ) Ընդհանուր ժողովի օրակարգը.
գ) Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը.
դ) Ընդհանուր ժողովի գումարման մասին բաժնետերերին ճանուցելու կարգը.
ե) բաժնետերերին ընդհանուր ժողովի նախապատրաստման ընթացքում տրամադրվող տեղեկությունների և նյութերի ցուցակը.
զ) քվեաթերթիկների ձևը և բովանդակությունը, եթե քվեարկությունները կատարվելու են քվեաթերթիկներով:

15.22. Տարեկան ընդհանուր ժողովից բացի գումարվող ընդհանուր ժողովները համարվում են արտահերթ:

15.23. Բանկի բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովները գումարվում են Բանկի խորհրդի որոշմամբ՝ սեփական նախաձեռնությամբ, Բանկի վարչության, Բանկի աուդիտն անցկացնող անձի կամ պահանջը ներկայացնելու դրությամբ Բանկի առնվազն 10 տոկոս քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր բաժնետիրոջ (բաժնետերերի) պահանջով:

Եթե խորհուրդը որոշում է մերժել ընդհանուր արտահերթ ժողով հրավիրելու վերաբերյալ առաջարկը, ապա մերժման մասին որոշումը խորհուրդը պարտավոր է ընդունել 5 օրվա ընթացքում՝ պահանջը ներկայացնելու պահից:

Արտահերթ ընդհանուր ժողովի գումարման մասին որոշում ընդունելու դեպքում խորհուրդը պետք է արտահերթ Ընդհանուր ժողովը գումարի սույն կանոնադրության և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Արտահերթ ընդհանուր ժողովի գումարման վերաբերյալ խորհրդի որոշմամբ սահմանվում է

15.20. A well-grounded resolution of the Council concerning rejection to include the presented suggestion in the agenda of the annual General Meeting shall be dispatched to the shareholder(s) within 3 days upon adoption of the resolution. Such resolution may be challenged in judicial order.

15.21. During preparation for General meeting the Council shall determine:

- a) the date and location of the General Meeting;
- b) agenda of the General Meeting;
- c) compilation date of the list of shareholders entitled to participate at the General Meeting;
- d) order of notifying the shareholders on the General Meeting convocation;
- e) form and content of the ballots, in case if the voting shall be made via ballots.

15.22. Any General Meeting other than the annual General Meeting shall be considered extraordinary.

15.23. Extraordinary General Meetings shall be convened by the decision of the Council upon its initiative, upon request of the Board, person carrying out the audit of the Bank or the shareholder(s) holding 10 percent of the voting shares of the Bank as of the date of submission of such request.

In the event if the Council has resolved to refuse the suggestion on convocation of extraordinary General Meeting, the resolution on refusal shall be adopted within 5 days upon submission of the request.

In case of adopting a resolution on convocation of extraordinary General Meeting, the Council shall convene the General Meeting in the manner prescribed under this charter and the legislation of RA.

The resolution on convocation of extraordinary General Meeting shall determine the agenda, procedure of

օրակարգը, արտահերթ ընդհանուր ժողովի գումարման ձևը՝ բաժնետերերի համատեղ ներկայությամբ կամ հեռակա կարգով քվեարկության միջոցով:

15.24. Բաժնետերերը ունեն Բանկի կանոնադրական հիմնադրամում իրենց բաժնետոմսերին համամասնական ձայնի իրավունք:

15.25. Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովն իրավասու է եթե Ընդհանուր ժողովի մասնակիցների գրանցման ավարտի պահին գրանցվել են Բանկի բաժնետերերը (նրանց ներկայացուցիչները), որոնք համատեղ տիրապետում են Բանկի տեղաքաշխմած քվեարկող բաժնետոմսերի 50-ից ավելի տոկոսին:

Քվորումի բացակայության դեպքում հայտարարվում է նոր Ընդհանուր ժողովի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը: Եթե քվորումի բացակայության պատճառով չկայացած Ընդհանուր ժողովի գումարման ամսաթիվը տեղափոխվում է 20 օրից պակաս ժամկետով, ապա այդ Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի նոր ցուցակ չի կազմվում: Նոր Ընդհանուր ժողովի գումարման դեպքում օրակարգի փոփոխություն չի թույլատրվում: Չկայացած Ընդհանուր ժողովի փոխարեն գումարվող նոր Ընդհանուր ժողովն իրավասու է եթե մասնակիցների գրանցման ավարտի պահին գրանցվել են Բանկի բաժնետերերը (նրանց ներկայացուցիչները), որոնք համատեղ տիրապետում են Բանկի տեղաքաշխմած քվեարկող բաժնետոմսերի 30-ից ավելի տոկոսին:

15.26. Բանկի Ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանն են պատկանում.

- ա) Բանկի կանոնադրության հաստատումը, դրանում փոփոխությունների և լրացումների կատարումը,
- բ) Բանկի վերակազմակերպումը, ներառյալ՝ այլ անձանց հետ միացումը,
- գ) Բանկի լուծարումը,
- դ) ամփոփ, միջանկյալ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը, լուծարային հանձնաժողովի նշանակումը,
- ե) խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը: Խորհրդի քանակական կազմի հաստատման և դրա անդամների ընտրության հարցերը ըննարկվում են բացառապես տարեկան Ընդհանուր ժողովներում: Խորհրդի անդամների ընտրության հարցն արտահերթ Ընդհանուր ժողովում

convocation of the General Meeting, i.e. by joint meeting or by remote voting.

15.24. The shareholders have voting rights proportional to the number of shares held by them in the charter capital of the Bank.

15.25. The General Meeting has quorum if at the end of registration of the shareholders participating at the General Meeting, shareholders (their nominees) jointly holding more than 50 percent of the allocated voting shares of the Bank are registered.

In case of absence of a quorum, the date of the new General Meeting is announced. In case if the date of the General Meeting, failed as a result of absence of quorum, is postponed for less than 20 days, no new list of shareholders shall be compiled.

In case of convocation of a new General Meeting, no changes may be made in the agenda.

The General Meeting convened in place of the failed General Meeting is valid in case if as of the end of the registration of the shareholders participating at the General Meeting, shareholder (their nominees) jointly holding more than 30 percent of the allocated voting shares of the Bank are registered.

15.26. The exclusive powers of the General Meeting are:

- a) approval of the charter of the Bank, its amendments and supplements;
- b) reorganization of the Bank, including a merger with/into other legal entities;
- c) liquidation of the Bank;
- d) approval of the summary, interim and liquidation balance sheets, appointment of liquidation commission;
- e) approval of the quantitative composition of the Council, election of its members, early termination of their powers. The issues of approval of the quantitative composition of the Council and election of its members are addressed exclusively during

կարող է քննարկվել, եթե վերջինս որոշում է ընդունել Խորհրդի կամ նրա առանձին անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին.

զ) հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը, ինչպես նաև կանոնադրական հիմնադրամի ավելացումը.

է) խորհրդի ներկայացմամբ Բանկի արտաքին ատդիոն իրականացնող անձի հաստատումը.

ը) Բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունների, շահույթների և վնասների բաշխման հաստատումը, տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը.

թ) Ընդհանուր ժողովի վարման կարգի հաստատումը.

ժ) հաշվիչ հանձնաժողովի ձևավորումը.

Ճա) բաժնետոմսերի համախմբումն ու բաժանումը.

Ճբ) առևտրային կազմակերպությունների միությունների հիմնադրումը.

Ճգ) առևտրային կազմակերպությունների միություններում մասնակցությունը.

Ճդ) խորհրդի անդամների վարձատրության չափի սահմանումը.

Ճե) օրենսդրությամբ սահմանված դեպքերում շահագրգռվածության առկայությամբ գործարքների կնքումը.

Ճզ) օրենսդրությամբ սահմանված դեպքերում Բանկի գույքի օտարման և ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքների կնքումը (Բանկի ակտիվների հաշվեկշռային արժեքի 50 %-ից ավելին), ինչպես նաև Բանկի ակտիվների հաշվեկշռային արժեքի 25-ից մինչև 50 տոկոսի դեպքերում, եթե խորհրդի կողմից չի ընդունվել միաձայն, և հարցը բարձրացվել է Ընդհանուր ժողովի քննարկմանը.

Ճէ) օրենքով նախատեսված դեպքերում բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունքը չկիրառելու մասին որոշման ընդունումը:

15.27. Ընդհանուր ժողովն անցկացվում է հետևյալ կարգով.

annual General Meetings. The issue of election of the Council members may be addressed during the extraordinary General Meeting in case if the latter has adopted a resolution on early termination of the powers of the Council or its separate members;

f) determination of the maximum number of authorized shares, as well as increase of charter capital;

g) approval of the external auditor of the Bank upon submission by the Council;

h) approval of annual financial statements, distribution of profits and losses, decision-making on the annual dividend payment and approval of amount of annual dividends;

i) approval of the procedure of holding the General Meeting;

j) formation of the counting commission;

k) consolidation and splitting of the shares;

l) establishment of unions of commercial organizations;

m) participation in unions of commercial organizations;

n) determination of remuneration of Council members;

o) conclusion of transactions with conflict of interests in cases prescribed by the legislation;

p) conclusion of major transactions related to alienation and acquisition of property in cases prescribed by the legislation (in case if the value of the transaction exceeds 50% of the book value of the Company assets), as well as in case if the value of the transactions is equal to 25-50% of the book value of the Company assets, provided that the Council has failed to unanimously resolve the issue and it has been submitted to the consideration of the General Meeting;

q) disapplication of pre-emption right to acquire the shares in cases prescribed by the legislation.

15.27. The General Meeting shall be held as follows:

- ա) Ընդհանուր ժողովի քարտուղարը մինչև նիստի բացումը Ընդհանուր ժողովի նախագահին զեկուցում է բաժնետերերի նիստին ներկա լինելու վերաբերյալ:
- բ) Ընդհանուր ժողովի նախագահը ողջունում է ներկաներին և նիստը հայտարարում է բացված:
- գ) Ընդհանուր ժողովի նախագահը ներկայացնում է ընդհանուր ժողովի օրակարգը, որից հետո օրակարգի հարցերը ըստ հերթականության դնում է քննարկման.
- դ) Ընդհանուր ժողովի նախագահը առաջարկում է ցանկացողներին իրենց կարծիքը ներկայացնել առաջադրվող հարցի վերաբերյալ:
- ե) առաջադրված հարցի վերաբերյալ կարծիքների արտահայտման փուլն ավարտվելուց հետո քննարկվող հարցերը դրվում են քվեարկության:
- զ) Քվեարկությունը ընդհանուր ժողովում իրականացվում է «Բանկի մեկ քվեարկող բաժնետոմս՝ մեկ ձայն» սկզբունքով:

15.28. Ընդհանուր ժողովի որոշումներն ընդունվում են Ընդհանուր ժողովին մասնակցող՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների պարզ մեծամասնությամբ, բացառությամբ.

- ա) Բանկի կողմից իր բաժնետոմսերը հետ զնելու դեպքում կանոնադրական հիմնադրամի նվազեցման կամ տվյալ բաժնետոմսերի իրացման մասին որոշումներն ընդունում է Ընդհանուր ժողովը՝ դրան մասնակցող՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4-ով, սակայն ոչ պակաս քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 2/3-ից.
- բ) սույն կանոնադրության 15.26 կետի «ա», «դ», «զ» և «ժ» ենթակետերում նշված հարցերի, որոնց վերաբերյալ որոշումներն ընդունում է Ընդհանուր ժողովը՝ դրան մասնակցող՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4-ով.
- գ) սույն կանոնադրության 15.26 կետի «բ» և «գ» ենթակետերում նշված հարցերի վերաբերյալ որոշումներն ընդունում է Ընդհանուր ժողովը՝ դրան մասնակցող՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի միաձայն քվեարկությամբ.
- դ) կանոնադրական հիմնադրամի ավելացման մասին որոշումը, որը ենթադրում է երրորդ անձանց բաժանորդագրումը նոր թողարկված լրացուցիչ բաժնետոմսերի համար, որոնք կազմում են Բանկի քվեարկող բաժնետոմսերի 10 տոկոսը կամ ավելին, Ընդհանուր ժողովի կողմից ընդունվում են քվեարկող

- a) secretary of the General Meeting reports to the chairman of the General meeting on presence of the shareholders prior to opening the session.
- b) chairman of the General Meeting welcomes the shareholders present at the session and declares the session open.
- c) chairman of the General Meeting presents the agenda, following which the issues included in the agenda are provided for discussion by sequence.
- d) chairman of the General Meeting suggests the ones wishing to present their opinions on the suggested issue.
- e) upon completion of the opinion expression phase, the issue discussed is put for voting.
- f) voting at the General Meeting is carried out upon the principle of "one share of a Bank, one vote".

15.28. Resolutions of the General Meeting are adopted by simple majority of the votes of the voting shareholders participating at the General meeting, except for following cases:

- a) Decisions concerning matters on reduction of the charter capital or sale of the shares as a result of buy-back of the shares of the Bank, shall be taken by the General Meeting by 3/4 of the votes of voting shareholders participating in it, however not less than 2/3 of the votes of voting shareholders;
- b) decisions concerning matters stated in sub-points "a)", "d)", "f)" and "p)" of clause 15.26, shall be taken by the General Meeting by 3/4 of the votes of voting shareholders participating in it;
- c) decisions concerning matters stated in sub-points "b)" and "c)" of clause 15.26 of the present charter shall be taken by the General Meeting by unanimous vote of all voting shares;
- d) any decision on the capital increase involving the subscription by a third party for newly issued additional shares representing 10% or more of the Bank's voting shares shall be taken by the General Meeting by a unanimous vote of all voting shares.

բաժնետոմսերի սեփականատերերի միաձայն
քվեարկությանը.

15.26 կետով սահմանված հարցերի (բացառությամբ
15.26 կետի (ժգ) ենթակետով սահմանված հարցերի)
վերաբերյալ որոշումների ընդունումը հանդիսանում են
Ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությունը և չեն
կարող փոխանցվել Բանկի խորհրդին. Բանկի
գործադիր մարմնի անդամներին կամ այլ անձի,
բացառությամբ «ժբ-ժդ» ենթակետերում թվարկված
հարցերի և Բանկի կանոնադրական հիմնադրամի
ավելացման հարցի, որոնցով որոշումների ընդունումը
Ընդհանուր ժողովի որոշմամբ կարող է փոխանցվել
խորհրդին:

15.29. Ընդհանուր ժողովը «Բաժնետիրական
ընկերությունների մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքով սահմանված Ընդհանուր
ժողովի իրավասությանը վերաբերող այլ հարցերով
որոշումներ ընդունելու դեպքերում առաջնորդվում է
նույն օրենքով սվյալ որոշումների ընդունման համար
սահմանված կարգով հաշվի առնելով «Բանկերի և
բանկային գործունեության մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքով սահմանված դրույթները:
Ընդհանուր ժողովն իրավունք չունի փոփոխել
օրակարգը, ինչպես նաև որոշումներ ընդունել
օրակարգում չընդգրկված հարցերի վերաբերյալ:

15.30. Քվեարկության արդյունքները հայտարարվում
են սվյալ ժողովում, կամ ժողովի ավարտից հետո
բաժնետերերը տեղեկացվում են քվեարկության
արդյունքների մասին:

15.31. Ընդհանուր ժողովի որոշումները կարող են
ընդունվել նաև հեռակա քվեարկության (հարցման)
միջոցով, բացառությամբ սույն կանոնադրության 15.26
կետի «բ», «գ» և «դ» ենթակետերում նշված հարցերի:

Հեռակա կարգով անցկացվող Ընդհանուր ժողովի
նիստերի ծանուցումն իրականացվում է սույն
կանոնադրությամբ սահմանված Ընդհանուր ժողովին
բաժնետերերի ծանուցման կարգով ծանուցման մեջ
պարտադիր կերպով նշելով հեռակա կարգով
անցկացման մասին:

Ընդհանուր ժողովը հեռակա քվեարկությամբ
գումարելիս Ընդհանուր ժողովին մասնակցելու
իրավունք ունեցող քույր բաժնետերերին
քվեաթերթիկների և Ընդհանուր ժողովի օրակարգի
հետ մեկտեղ ուղարկվում են օրենքով սահմանված
տեղեկությունները և կտրված:

Հեռակա կարգով քվեարկությամբ ընդունված
Ընդհանուր ժողովի որոշումն օրինական ուժ ունի, եթե

Decision-making on the matters prescribed under clause
15.26. (except for subsection “p”) is exclusive
competence of the General Meeting and may not be
transferred to the Council, members of the executive body
of the Bank or another person, except for the matters listed
in subsections “l)–“n)” of clause 15.26 and the issue of
charter capital increase, decision-making on which may
be transferred to the Council upon resolution of the
General Meeting.

15.29. While making decisions on other matters
prescribed by the Law of the Republic of Armenia On
Closed Joint-Stock companies, the General Meeting is
guided by the procedure prescribed by the foregoing law
for decision-making on those matters taking into
consideration the provisions defined by the Law of
Republic of Armenia On Banks and Banking Activity.

The General Meeting is not entitled to amend the agenda,
as well as adopt decisions on the issues not included
therein.

15.30. The voting results are announced during the
General Meeting, or the shareholders are informed about
the voting results after it.

15.31. Resolutions of the General Meeting may be
adopted via remote voting (inquiry), except for the
matters set forth by points “b)”, “c)” and “h)” of clause
15.26 of this charter.

Notification on a General Meetings to be held in absentia
is filed in the manner prescribed under this charter for
notification on General Meetings, by indicating that the
General Meeting shall be held in absentia.

While convening the General Meeting in absentia, all the
shareholders entitled to participate at the General Meeting
shall be provided with the information and documents set
forth by the law together with the ballots and the agenda
of the General Meeting.

Resolutions of the General Meeting adopted by remote
voting shall be valid in case if more than half of the

ըվեարկությանը մասնակցել է Բանկի ըվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի կեսից ավելին:
Հեռակա կարգով ըվեարկությունը կատարվում է «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխանող ըվեաթերթիկների օգտագործմամբ:
Հեռակա կարգով ըվեարկության ժամանակ ըվեաթերթիկները պետք է տրամադրվեն բաժնետերերին՝ լրացրած ըվեաթերթիկները Բանկի կողմից ընդունումն ավարտելու պահից առնվազն 30 օր առաջ:

15.32. Ընդհանուր ժողովի որոշումները կարող են ընդունվել այնպիսի նիստով, որի ժամանակ Ընդհանուր ժողովի մասնակիցները կարող են հաղորդակցվել միմյանց հետ հեռախոսային, հեռուստակապի կամ այլ կապի միջոցով՝ իրական ժամանակի ռեժիմում:
Նման նիստը հեռակա (հարցման) կարգով անցկացված նիստ չի համարվում:
Հեռախոսային, հեռուստակապի կամ այլ կապի միջոցով անցկացվող Ընդհանուր ժողովի նիստերի ծանուցումն իրականացվում է սույն կանոնադրությամբ սահմանված Ընդհանուր ժողովի գումարման ծանուցման կարգով:
Բանկի մասնակիցների ընդհանուր ժողովի գումարման մասին Բանկի մասնակիցների ծանուցման հետ միասին Բանկի մասնակիցներին են ուղարկվում նաև Ընդհանուր ժողովի օրակարգի հարցերի վերաբերյալ կյութերը, տեղեկատվությունները:
Բանկի մասնակիցների ընդհանուր ժողովի գումարման օրը սահմանված կապի միջոցով հաղորդակցվելով միմյանց հետ՝ Բանկի մասնակիցները ըննարկում են օրակարգի հարցերը և ընդունում են համապատասխան որոշումներ, որոնց հիման վրա կազմվում է արձանագրություն Բանկի մասնակիցների ընդհանուր ժողովում ըննարկված հարցերի և դրանց վերաբերյալ ընդունված որոշումների մասին, որը ուղարկվում է Բանկի մասնակիցներին ստորագրման և Բանկ ետ վերադարձման համար:
Արձանագրության մեջ որպես Ընդհանուր ժողովի գումարման վայր լրացվում է սահմանված կապի միջոցի անվանումը:

15.33. Ընդհանուր ժողովի արձանագրությունը կազմվում է Ընդհանուր ժողովի ավարտից 5 օրվա ընթացքում 2 օրինակով, որոնց ստորագրում են Ընդհանուր ժողովի նախագահը և քարտուղարը:

shareholders holding voting shares of the Bank have participated in the voting.

Remote voting is carried out via ballots complying with the requirements of the Law of the Republic of Armenia On Closed Joint-Stock Companies.

In case of remote voting, the ballots shall be provided to shareholders at least 30 days prior to the deadline of accepting the completed ballots.

15.32. The resolutions of the General Meeting may be adopted at a meeting during which the participants of the General Meeting may communicate with each other via telephone, telecommunication or other means of communication in real time operation mode.

Such a meeting shall not be deemed to be held in absentia (via inquiry).

The notification on a General Meeting to be held via telephone, telecommunication or other means of communication shall be filed in the manner prescribed under this charter for notification on General Meetings.

All the shareholders entitled to participate at the General Meeting shall be provided with the information and documents with respect to the issues included in the agenda together with the notice on the General Meeting.

On the date of convocation of the General Meeting, shareholders of the Bank, by communicating via foregoing means, discuss the matters included in the agenda and adopt respective resolutions. Based on the foregoing, minutes are drafted on the matters discussed during the General Meeting and the resolutions adopted with respect to them, and are provided to the shareholders of the Bank for their signing and return to the Bank.

The established communication means shall be registered as the place of the convocation of General Meeting.

15.33. Minutes of the General Meeting shall be drafted within 5 days following the General Meeting in 2 copies.

Ընդհանուր ժողովի նախագահը պատասխանատվություն է կրում Ընդհանուր ժողովի արձանագրությունում առկա տեղեկությունների հավաստիության համար: Արձանագրության մեջ նշվում են՝

ա) Ընդհանուր ժողովի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը և վայրը:

բ) Բանկի՝ տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի ձայների գումարային քանակը:

գ) Ընդհանուր ժողովին մասնակցած բաժնետերերին պատկանող ձայների գումարային քանակը:

դ) Ընդհանուր ժողովի նախագահը (նախագահությունը) և քարտուղարը (քարտուղարությունը):

ե) Ընդհանուր ժողովի օրակարգը: Արձանագրությունը պետք է պարունակի Ընդհանուր ժողովում կայացած ելույթների հիմնական դրույթները, քվեարկության դրված հարցերը, այդ հարցերի վերաբերյալ քվեարկության արդյունքները, Ընդհանուր ժողովի ընդունած որոշումները:

Բանկի բաժնետերերն իրավունք ունեն ծանոթանալ Ընդհանուր ժողովի արձանագրություններին:

which are signed by the chairman and secretary of the General Meeting.

Chairman of the Meeting is liable for accuracy of the information included in the minutes. The minutes include the following information:

a) date and place of convocation General Meeting.

b) total number of allocated voting shares of the Bank.

c) total number of votes held by shareholders participating at the General Meeting.

d) chairman (presidency) and secretary (secretariat) of the General meeting.

e) agenda of General Meeting.

The minutes shall include the key points made during the General Meeting, matters to be voted on, voting results with respect to the foregoing matters, resolutions made by the General Meeting.

Shareholders of the Bank have right to be acquainted with the minutes of the General Meeting.

16. Բանկի խորհուրդը

16.1. Բանկի խորհուրդը իրականացնում է Բանկի գործունեության ընդհանուր ղեկավարումը՝ օրենքով և սույն կանոնադրությամբ խորհրդի իրավասությանը վերապահված հարցերի սահմաններում:

16.2. Բանկի խորհրդի անդամներն ընտրվում են Բանկի մասնակիցների տարեկան ընդհանուր ժողովում Բանկի ներկա մասնակիցների կողմից, իսկ Բանկի խորհրդի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման դեպքում՝ արտահերթ Ընդհանուր ժողովում Բանկի ներկա մասնակիցների կողմից՝ օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով:

Ընդհանուր ժողովին Բանկի խորհրդի անդամների թեկնածուների վերաբերյալ առաջարկություններ կարող են ներկայացնել Բանկի մասնակիցները, ինչպես նաև խորհուրդը (բացառությամբ առաջին անգամ խորհրդի ձևավորման դեպքի):

16.3. Բանկի մասնակիցների արտահերթ ընդհանուր ժողովում Բանկի խորհրդի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման դեպքում Բանկի խորհրդի նոր անդամի ընտրությունը կատարվում է հետևյալ կարգով:

16. Council of the Bank

16.1. The Council of the Bank shall implement the general management of the activity of the Bank within the scope of issues reserved to the competence of the Council pursuant to the law and this Charter.

16.2. Members of the Council shall be elected at the annual General Meeting by shareholders present at it, and in case of early termination of the powers of Council members, at the extraordinary General Meeting by the participants present at it pursuant to the law and this charter. Proposals with respect to candidates of Council members may be provided to the General Meeting by the shareholders of the Bank, as well as the Council (except for the formation of the Council for the first time).

16.3. In case of early termination of the powers of a Council member at the extraordinary General Meeting, election of the new Council is implemented as follows:

The group (shareholder) representing the Council member, whose powers have been terminated, provides the

Լիազորությունները վաղաժամկետ դադարեցված հորհրդի անդամին ներկայացնող խումբը (բաժնետերը) արտահերթ Ընդհանուր ժողովի գումարման մասին ծանուցվելու պահից հնգօրյա ժամկետում Բանկի բաժնետերերին և Ընդհանուր ժողովին օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տեղեկացնում է իրենց խումբը (կամ իրեն) ներկայացնող հորհրդի անդամի թեկնածուի մասին անհրաժեշտ տեղեկությունները և արտահերթ Ընդհանուր ժողովում հորհրդի նոր անդամի ընտրությունը կատարվում է օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով:

16.4. Բանկի հորհրդի անդամները ընտրվում են նվազագույնը մեկ տարի ժամկետով, վերընտրման իրավունքով:

16.5. Բանկի այն մասնակիցները, որոնք Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող մասնակիցների ցուցակը կազմելու օրվա դրությամբ տիրապետում են Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 10 և ավելի տոկոսին, իրավունք ունեն առանց ընտրության ընդգրկվելու հորհրդի կազմում կամ դրանում նշանակելու իրենց ներկայացուցչին:

16.6. Բանկի այն մասնակիցները, որոնք Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող մասնակիցների ցուցակը կազմելու օրվա դրությամբ տիրապետում են Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի մինչև 10 տոկոսին, կարող են միավորվել և Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 10 և ավելի տոկոսը համալրելու դեպքում՝ առանց Ընդհանուր ժողովի կողմից ընտրության ընդգրկել իրենց ներկայացուցչին հորհրդի կազմում:

Սույն կետի առաջին պարբերությամբ նշված ձևով ներկայացուցչի ընդգրկումը հորհրդում հնարավոր է միայն Բանկի մասնակիցների խմբի ստեղծման մասին համապատասխան պայմանագրի առկայության և այդ պայմանագրի վերաբերյալ Ընդհանուր ժողովին տեղեկացնելու դեպքում:

Սույն կետի երկրորդ պարբերությամբ նշված պայմանագիրը պետք է պարունակի հետևյալ պայմաններն ու տեղեկությունները.

ա) Բանկի միավորվող մասնակիցների վերաբերյալ տվյալներ, ներառյալ՝ նրանց պատկանող Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի քանակը.

բ) միավորվող մասնակիցների կողմից առաջարկվող հորհրդի անդամի թեկնածուի վերաբերյալ «Բանկերի

shareholders of the Bank and the General Meeting with information required with respect to the Council member candidate representing their group (shareholder) within 5 days upon being notified on convocation of the extraordinary General Meeting and election of the new Council member at the extraordinary general meeting is made pursuant to the order defined by the law and this charter.

16.4. Members of the Bank Council shall be elected for a minimum term of one year with a right of re-election.

16.5. All the shareholders of the Bank having 10 percent or more of allocated voting shares of the Bank as of the compilation date of the list of shareholders entitled to participate at the General Meeting, may be included in the Council without any kind of election, as well as appoint their representatives.

16.6. Shareholders of the Bank, who hold allocated voting shares of the Bank not exceeding 10 percent of the allocated ordinary shares of the Bank as of the date of compilation of the list of shareholders entitled to participate at the General Meeting may unite and in case of reaching 10 % or more of the allocated voting shares, include their representative in the Council without election in the Council.

Engagement of the representative in the Council pursuant to the order defined in the first paragraph is possible in case if an agreement is entered on establishment of the group of participants, as well as notifying the General Meeting on it.

The agreement set forth in second paragraph of this clause shall include the following terms and information:

a) data on uniting shareholders of the Bank including number of allocated voting shares of the Bank held by them,

b) information set forth under part 5 of article 43 of Law of the Republic of Armenia On banks and banking

և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43 հոդվածի 5-րդ մասով սահմանված տեղեկությունները.

զ) պայման այն մասին, որ պայմանագիրը կնքվում է առնվազն մեկ տարի ժամկետով և մինչև այդ ժամկետի ավարտը փոփոխման կամ լուծման ենթակա չէ.

դ) միավորվող մասնակիցների հայեցողությամբ՝ այլ պայմաններ:

Պայմանագրի պատճենները տրամադրվում են Ընդհանուր ժողովի քվոր մասնակիցներին՝ Ընդհանուր ժողովի կայացման, իսկ հեռակա կարգով քվեարկության դեպքում՝ լրացրած քվեաթերթիկները Բանկի կողմից ընդունելու համար սահմանված ժամկետի վերջին օրվանից առնվազն 30 օր առաջ:

16.7. Բանկի կանոնադրական հիմնադրամում փոքր մասնակցություն ունեցող մասնակիցներն իրավունք ունեն իրենց շահերը ներկայացնող ներկայացուցչին ընդգրկելու Բանկի խորհրդի կազմում:

Բանկի կանոնադրական հիմնադրամում փոքր մասնակցություն ունեցող մասնակից է համարվում տվյալ Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 10 տոկոսից պակասին տիրապետող այն մասնակիցը, որը չի կնքել սույն կանոնադրության 16.6 կետում նշված պայմանագիրը:

17.15. Բանկի Վարչությունը Խորհրդին պարբերաբար, բայց ոչ պակաս, քան եռամսյակը մեկ անգամ, ներկայացնում է իր գործունեության վերաբերյալ հաշվետվություններ՝ Խորհրդի սահմանած կարգով: Բանկում վարձու աշխատողների աշխատանքի ընդունման, Բանկում այլ աշխատանքի փոխադրման ու աշխատանքից ազատման հրամանագիրը վարելու և պահպանելու պարտականությունը դրվում է Բանկի Վարչության քարտուղար-կադրերի բաժնի պետի վրա:

18. Բանկի Վարչության նախագահը

18.1. Բանկի Վարչության նախագահը, որպես իր քաջատիկ իրավասություն, ներկայացնում է Բանկը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում, Բանկի անունից կնքում է գործարքներ, գործում է Բանկի անունից առանց լիազորագրի, տալիս է լիազորագրեր:

18.2. Բանկի Վարչության նախագահը՝

ա) տնօրինում է Բանկի գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,

բ) աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Բանկի մասնաճյուղերի կառավարիչներին, կառավարիչների տեղակալներին, գլխավոր հաշվապահներին (մասնաճյուղերի մյուս աշխատակիցներին աշխատանքի են ընդունում և աշխատանքից ազատում մասնաճյուղերի կառավարիչները), գլխամասային Բանկի աշխատակիցներին, քաջատությամբ այն աշխատակիցների, որոնց աշխատանքի ընդունելու և աշխատանքից ազատելու իրավասությունը պատկանում է ժողովին կամ Խորհրդին:

գ) Բանկի Խորհրդի հաստատած Բանկի տարեկան ծախսերի նախահաշվի շրջանակներում հաստատում է Բանկի աշխատատեղերը:

դ) Բանկի աշխատակիցների նկատմամբ կիրառում է իրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ:

ե) Խորհրդին պարբերաբար, բայց ոչ պակաս, քան եռամսյակը մեկ անգամ ներկայացնում է իր գործունեության վերաբերյալ հաշվետվություններ՝ Խորհրդի կողմից սահմանված կարգով:

18.3. Բանկի Վարչության նախագահի (Վարչության) իրավասությանը ենթակա հարցերով որոշումների

17.15. The Management Board shall submit from time to time but not less than once a quarter reports on its activity to the Council in accordance with procedure established by the Council. Obligation for holding and maintenance of order book of personnel admission, transfer of officers and dismissal falls under competence of the secretary of the Management Board of the Bank – head of HR department.

18. Chairman of the Management Board

18.1. It is the exclusive competence of the Chairman of the Management Board to represent the Bank in the Republic of Armenia and abroad, execute transactions and act on behalf of the Bank without a power of attorney, grant powers of attorney.

18.2. The Chairman of the Management Board shall:

a) manage the property, including financial means of the Bank, issue orders, instructions within her powers, give mandatory instructions and control their performance;

b) hire and dismiss managers of the branches of the Bank, their deputies, chief accountants (other employees of branches shall be hired and dismissed by branch managers), Head office employees, except for the employees the power to hire and dismiss of which belongs to the Meeting or the Council;

c) approve the positions of the Bank in the scope of the estimate annual expenses of the Bank approved by the Council;

d) enforce incentive measures and disciplinary sanctions over the Bank employees;

e) from time to time but not less than once a quarter file reports with the Council on her activity in the manner prescribed by the Council.

18.3. Making of decisions on issues which are reserved to the competence of the Chairman of the Management

ընդունումը չի կարող փոխանցվել Բանկի կառավարման այլ մարմինների, Բանկի ներքին աուդիտին, Բանկի գլխավոր հաշվապահին կամ այլ անձի, բացառությամբ եթե Բանկի Վարչության նախագահի լիազորությունների իրականացումը պատշաճ կերպով ժամանակավորապես փոխանցվել է նրան փոխարինող անձին:

Վարչության նախագահի լիազորությունները պատշաճ կերպով ժամանակավորապես կարող են փոխանցվել նրան փոխարինող անձին, եթե վերջինս համապատասխանում է ՀՀ Կենտրոնական բանկի սահմանած որակավորման և մասնագիտական համապատասխանության չափանիշներին:

18.4. Խորհրդի կողմից Վարչության նախագահի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են իր դիմումի համաձայն, կամ եթե՝

ա) նա դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ:

բ) նրա պաշտոնավարման ընթացքում ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնց ուժով նրան արգելվում է լինել Բանկի Վարչության նախագահ (Բանկի ղեկավար):

գ) օրենքով սահմանված կարգով որակագրկվել է կամ գրկվել է որոշակի պաշտոն վարելու իրավունքից:

18.5. Վարչության նախագահի լիազորությունները վաղաժամկետ կարող են դադարեցվել նաև լիազորությունների մնացած ժամանակահատվածի, իսկ եթե այդ ժամանակահատվածը մեկ տարուց ավելի է, ապա մեկ տարվա համար սահմանված աշխատավարձը Բանկի կողմից նրան փոխհատուցելու պայմանով:

Բանկն իրավունք ունի Վարչության նախագահի պաշտոնից ազատված անձից հետ պահանջելու նրան փոխհատուցված աշխատավարձը՝ դատարանում ապացուցելով Վարչության նախագահի կողմից պաշտոնական պարտականությունների թերացման փաստը:

19. Բանկի գլխավոր հաշվապահը

19.1. Բանկի գլխավոր հաշվապահը՝

ա) Բանկի գլխավոր հաշվապահը կամ նման պարտականություններ իրականացնող անձը (այսուհետ՝ Գլխավոր հաշվապահ) իրականացնում է «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքով

Board may not be transferred to other management bodies of the Bank, internal audit of the Bank, chief accountant or any other person except when the fulfilment of powers of the Chairman of the Management Board has been duly and temporarily transferred to the person substituting her. Powers of the Chairman of the Management Board may be duly and temporarily transferred to the person substituting her, if such person satisfies the qualification and professional requirements set forth by the Central Bank of the Republic of Armenia.

18.4. Powers of the Chairman of the Management Board shall be early terminated upon the latter's application by the Council, or if:

a) she has been recognized upon judgment of the court entered into legal force incapable or having limited capacity,

b) such circumstances have been disclosed while serving as a Chairman of the Management Board which prohibit him from holding the position of the Chairman of the Management Board (Bank Manager),

c) she has been disqualified or deprived from holding certain position in accordance with the law.

18.5. Powers of the Chairman of the Management Board may be early terminated upon compensation for the remaining period of her powers, and if this period exceeds one year, on compensation of the remuneration for one year.

The Bank may present a claim on return of the compensation by the person dismissed from the position of the Chairman of the Management Board upon condition of proving in the court misconduct of such person.

19. Chief Accountant of the Bank

19.1. The Chief Accountant of the Bank:

a) The chief accountant of the Bank or the person performing such obligations (the "Chief Accountant")

գլխավոր հաշվապահի համար սահմանված իրավունքները և պարտականությունները:

բ) Բանկի գլխավոր հաշվապահը նշանակվում է Բանկի խորհրդի կողմից՝ Բանկի Վարչության նախագահի (Վարչության) ներկայացմամբ:

Բանկի գլխավոր հաշվապահը ընտրվում է նվազագույնը մեկ տարի ժամկետով:

գ) Բանկի գլխավոր հաշվապահի իրավունքները և պարտականությունները չեն կարող փոխանցվել Բանկի ընդհանուր ժողովին, խորհրդին, գործադիր մարմնի անդամներին, ներքին աուդիտի ստորաբաժանմանը կամ այլ անձի:

դ) Բանկի գլխավոր հաշվապահը առնվազն եռամսյակը մեկ անգամ Բանկի խորհրդին և Վարչության նախագահին (Վարչությանն) է ներկայացնում ֆինանսական հաշվետվություն՝ խորհրդի հաստատած ձևով և բովանդակությամբ:

ե) Բանկի գլխավոր հաշվապահը պատասխանատվություն է կրում Բանկի հաշվապահական հաշվառման վարման, դրա վիճակի և հավաստիության, տարեկան հաշվետվության, ֆինանսական և վիճակագրական հաշվետվություններն օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված պետական կառավարման մարմիններին ժամանակին ներկայացնելու, ինչպես նաև Բանկի մասնակիցներին, պարտատերերին և մամուլի ու զանգվածային լրատվության մյուս միջոցներին Բանկի մասին տրամադրվող ֆինանսական տեղեկությունների հավաստիության համար՝ օրենքին, այլ իրավական ակտերին և Բանկի կանոնադրությանը համապատասխան:

19.2. Հաշվետվությունների և տեղեկատվության մեջ անարժանահավատ տվյալների հայտնաբերման դեպքերում Գլխավոր հաշվապահը ներկայացնում է դրանց առաջացման նախադրյալները, վկայակոչում է Բանկի աշխատակիցներին, որոնք անմիջականորեն մասնակցել են տվյալ հաշվետվությունների կամ տեղեկատվության կազմման աշխատանքներին և առաջարկում է միջոցներ դրանք ապագայում չկրկնելու կամ առկա թերությունները վերացնելու ուղղությամբ: Եթե նման դեպքերը կրում են պարբերական բնույթ, ապա խորհուրդը հարց է բարձրացնում Գլխավոր հաշվապահի մասնագիտական համապատասխանության հարցը քննարկելու մասին:

19.3. Գլխավոր հաշվապահը «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, այլ օրենքներով և իր կողմից կեղծված «Լրիվ նյութական

performs the rights and obligations provided for chief accountant under the Law of the RA On Accounting.

b) The Chief Accountant of the Bank is appointed by the Council of the Bank upon recommendation of the Chairman of the Management Board. The Chief Accountant of the Bank is appointed for a minimum term of one year.

c) Rights and obligations of the Chief Accountant may not be transferred to the General Meeting, Council, members of management bodies, subdivision of internal audit or other person.

d) The Chief Accountant of the Bank shall at least once a quarter file financial reports with the Council and Chairman of the Management Board, substantially in the form approved by the Council.

e) The Chief Accountant of the Bank is liable for the accounting of the Bank, its state and accuracy, for timely filing of the annual, financial and statistics reports to state executive bodies provided by law and other legal acts, as well as for the accuracy of the information included therein. In accordance with legal acts and the charter of the Bank, the Chief Accountant is also liable for the accuracy of financial information of the Bank submitted to the members, creditors of the Bank, press and other means of mass media pursuant to the law, other legal acts and charter of the Bank.

19.2. In the event of disclosure of incorrect data in the reports and in the information, the Chief Accountant shall present causes of their origination, refer the employees of the Bank who directly participated in the process of making reports and suggest measures to avoid repeating such mistakes in future or to eliminate the existing shortages. If such cases bear repeating nature, the Council shall raise a question on discussion of professional compliance of the Chief Accountant.

19.3. The Chief Accountant is liable for damages caused to the Bank as a result of her intentional actions (omission) in accordance with the Law of the RA On

պատասխանատվության» պայմանագրին համապատասխան պատասխանատվություն է կրում իր դիտավորյալ գործողությունների (անգործության) հետևանքով Բանկին պատճառված վնասների համար:
20. Ներքին աուդիտի ստորաբաժանումը

20.1. Ներքին աուդիտի ստորաբաժանման (այսուհետև՝ ներքին աուդիտ) ղեկավարը և անդամները նշանակվում են Բանկի խորհրդի կողմից:

20.2. Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման աշխատակիցները ընտրվում են նվազագույնը մեկ տարի ժամկետով:

20.3. Ներքին աուդիտի անդամ չեն կարող լինել Բանկի կառավարման մարմինների անդամները, այլ ղեկավարներ ու աշխատակիցներ, ինչպես նաև գործադիր մարմնի անդամների հետ փոխկապակցված անձինք:

20.4. Ներքին աուդիտի ղեկավարը և անդամները պարտավոր են պահպանել Բանկի աշխատակիցների համար սահմանված աշխատանքային կարգապահությունը:

20.4. Բանկի ներքին աուդիտը Բանկի խորհրդի հաստատած կանոնադրության համաձայն՝
ա) հսկողություն է իրականացնում Բանկի ընթացիկ գործունեության և գործառնական ռիսկերի նկատմամբ,
բ) հսկողություն է իրականացնում Բանկի Վարչության նախագահի (Վարչության), տարածքային և կառուցվածքային ստորաբաժանումների կողմից օրենքների, այլ իրավական ակտերի և Բանկի ներքին ակտերի, Վարչության նախագահին (Վարչությանը) տրված հանձնարարականների կատարման նկատմամբ,
գ) եզրակացություններ և առաջարկություններ է տալիս Բանկի խորհրդի ներկայացրած, ինչպես նաև սեփական նախաձեռնությամբ առաջադրված հարցերի վերաբերյալ:

20.6. Ներքին աուդիտի իրավասություններին վերաբերող հարցերը չեն կարող փոխանցվել Բանկի կառավարման մարմինների կամ այլ անձանց լուծմանը: Ներքին աուդիտի ստորաբաժանման աշխատակիցները դիտորդի կարգավիճակով կարող են մասնակցել Բանկի խորհրդի և Վարչության նիստերին:

Banks and Banking, other laws and the agreement on Full material liability executed by her.

20. Subdivision of Internal Audit

20.1. The head and members of internal audit subdivision (the "Internal Audit") are appointed by the Council of the Bank.

20.2. Officers of the subdivision of internal audit of the Bank are appointed for a minimum term of one year.

20.3. Other managers and officers of the Bank, as well as persons affiliated with the members of the management bodies of the Bank shall not be members of the internal audit the members of management bodies of the Bank.

20.4. The head and members of internal audit shall follow disciplinary rules provided for the employees of the Bank.

20.5. In accordance with the charter approved by the Council of the Bank, the internal audit of the Bank:

- a) exercises control over the day to day activity and operational risks of the Bank,
- b) exercises control over the fulfilment of the requirements of laws, other legal acts and bylaws of the Bank, instructions given to the Chairman of the Management Board (the Board), territorial and structural subdivisions of the Bank;
- c) makes conclusions and suggestions with regards to the issues submitted by the Council of the Bank as well as on its own initiative.

20.6. Matters reserved to the competence of the internal audit may not be transferred to the management bodies of the Bank or other parties. Officers of the subdivision of internal audit may participate as observers in the meetings of the Council and the Board. Minutes of the Board meetings are submitted to internal audit upon its request.

Ներքին աուդիտի պահանջով ներքին աուդիտին ներկայացվում են Վարչության նիստերի արձանագրությունները:

20.7. Ներքին աուդիտի ղեկավարը Բանկի խորհրդին և Վարչության նախագահին (Վարչությանն) է ներկայացնում հետևյալ հաշվետվությունները՝
ա) հերթական՝ տարեկան ծրագրով սահմանված ստուգումների արդյունքների մասին,
բ) արտահերթ, եթե բացահայտվել են ներքին աուդիտի հիմնավորված կարծիքով էական խախտումներ, ընդ որում, եթե խախտումները հետևանք են Վարչության նախագահի (Վարչության) կամ խորհրդի գործողությունների կամ անգործության, ապա հաշվետվությունը ներկայացվում է անմիջապես խորհրդի նախագահին:

20.8. Ներքին աուդիտի հիմնավորված կարծիքով էական խախտումներ բացահայտվելու դեպքում ներքին աուդիտի կողմից կազմվում է համապատասխան արձանագրություն, որտեղ տրվում է խախտման մանրամասն նկարագիրը, ում կողմից է կատարվել խախտումը և ներքին աուդիտի ղեկավարի կողմից փակ ծրագրով համապատասխան գրանցամատյանում գրանցելուց հետո ներկայացվում է Բանկի խորհրդին և Վարչության նախագահին, իսկ եթե խախտումը հետևանք է Վարչության նախագահի (Վարչության) կամ խորհրդի գործողությունների կամ անգործության, ապա ներկայացվում է անմիջապես խորհրդի նախագահին:

Նշված դեպքերում հաշվետվությունները ներկայացվում են խախտումը հայտնաբերելուց առավելագույնը երկու աշխատանքային օրվա ընթացքում:

20.9. Ներքին աուդիտն օրենքների, այլ իրավական ակտերի խախտումներ բացահայտելու դեպքում պարտավոր է դրանք ներկայացնել Բանկի խորհրդին՝ միաժամանակ առաջարկելով այդ խախտումների վերացման և ապագայում չկրկնման ուղղությամբ ձեռնարկվելիք միջոցառումներ:

20.10. Օրենքների, այլ իրավական ակտերի խախտումներ բացահայտվելու դեպքում ներքին աուդիտի կողմից կազմվում է համապատասխան արձանագրություն, որտեղ տրվում է խախտման մանրամասն նկարագիրը, ում կողմից է կատարվել խախտումը, ներքին աուդիտի առաջարկությունները նշված խախտումների վերացման և ապագայում

20.7. The Head of internal audit files with the Council and the Chairman of the Management Board (the Board) the following reports on:

a) ordinary reports on the results determined by annual program;

b) extraordinary reports, in the event material violations have been disclosed in the reasonable opinion of the internal audit. Moreover, if the violations are the results of the actions or inaction of the Chairman of the Management Board (the Board) and the Council, the reports are directly filed with the chairman of the Council.

20.8. When disclosing material violations in the reasonable opinion of the internal audit, respective minutes are drafted which includes the detailed description of the violation, the person committing it, and after being recorded by the head of the internal audit in the respective record book is submitted in a closed envelope to the Council of the Bank and the Chairman of the Management Board, and if the violation is a result of the actions or inaction of the Chairman of the Management Board (the Board) or the Council, then submitted directly to the chairman of the Council. In such cases the reports are filed within maximum two business days following the disclosure of the violation.

20.9. In the event of disclosure of violations of laws, other legal acts, the internal audit shall present them to the Council of the Bank, meanwhile proposing measures aimed at elimination of the violations and their avoiding in the future.

20.10. In the event of disclosure of violations of laws, other legal acts, relevant minutes are drafted by the internal audit which includes the detailed description of the violation, the person committing it, suggestions of the internal audit on the measures aimed at elimination of the violations and their avoiding in the future, and after being

չըրկնման ուղղությամբ ձեռնարկվելից միջոցառումների վերաբերյալ և ներքին ատոյիտի ղեկավարի կողմից փակ ծրարով համապատասխան գրանցամատյանում գրանցելուց հետո ներկայացվում է Բանկի խորհրդին՝ խախտումը հայտնաբերելուց առավելագույնը 10 աշխատանքային օրվա ընթացքում:

21. Բանկի արտաքին ատոյիտը

21.1. Յուրաքանչյուր տարի Բանկի ֆինանսատնտեսական գործունեության ստուգման նպատակով Բանկը պետք է ներգրավի օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով ատոյիտորական ծառայությունների իրականացման իրավունք ունեցող անկախ ատոյիտ իրականացնող անձի (այսուհետ՝ արտաքին ատոյիտ), կնքելով նրա հետ համապատասխան պայմանագիր:

21.2. Բանկի արտաքին ատոյիտին ընտրում է Ընդհանուր ժողովը՝ «Կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգով: Արտաքին ատոյիտի ծառայությունների համար վճարվող գումարի չափը որոշում է Բանկի խորհուրդը:

21.3. Բանկի ֆինանսատնտեսական գործունեության ստուգման արտաքին ատոյիտի կողմից կարող է իրականացվել նաև Բանկի՝ քվեարկող բաժնետոմսերի անվազն 5 տոկոսի սեփականատեր բաժնետերերի պահանջով:

Այդ դեպքում արտաքին ատոյիտ իրականացնող անձին ընտրում, նրա հետ պայմանագիր են կնքում, նրա ծառայությունների դիմաց վճարում են ստուգում պահանջող բաժնետերերը, ընդ որում, նրանք կարող են Բանկից պահանջել իրենց կատարած ծախսերի հատուցում, եթե այդ ստուգումն Ընդհանուր ժողովի որոշմամբ արդարացված է եղել Բանկի համար:

Բանկի արտաքին ատոյիտ ցանկացած ժամանակ կարող է հրավիրվել նաև Բանկի խորհրդի կողմից՝ Բանկի միջոցների հաշվին:

recorded by the internal audit in a record book, is submitted in a closed envelope to the Council of the Bank, within 10 business days following the disclosure of the violation.

21. Independent Audit of the Bank

21.1. The Bank shall, for the purposes of audit of its financial-economic activity, each year engage an independent auditor (hereinafter "external auditor") having the right to perform audit services in accordance with the laws and other legal acts, by concluding a respective agreement.

21.2. The external auditor of the Bank is selected by the General Meeting in the manner prescribed by the Central Bank of the RA. The amount of payment for the external audit services is determined by the Council of the Bank.

21.3. The audit of the financial-economic activity of the Bank may be performed by the external auditor also upon request of the shareholders of the Bank, holding at least 5% of voting shares.

In such case, the external auditor is selected, an agreement is concluded with her, and the payment for its services is made by the shareholders demanding audit. The shareholders may demand a compensation for their expenses if the audit has been justified for the Bank by the decision of the General Meeting. An external audit of the Bank may be initiated any time by the Council at the expenses of the Bank.

21.4. Բանկն արտաքին աուդիտ իրականացնող անձի հետ կնքվող պայմանագրում, բացի աուդիտորական եզրակացության կազմումից, պետք է նախատեսի նաև աուդիտորական հաշվետվության (նամակ Բանկի ղեկավարությանը) կազմում:

Բանկն արտաքին աուդիտ իրականացնող անձի հետ կնքվող պայմանագրում պետք է նախատեսի նաև իր կողմից ՀՀ Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունների արժանահավատության ստուգում:

21.5. Բանկում աուդիտ իրականացնելու ընթացքում արտաքին աուդիտի կողմից Բանկի ֆինանսական վիճակն իր կարծիքով էականորեն վատթարացման փաստեր, ինչպես նաև ներքին համակարգերի (այդ թվում՝ ներքին հսկողության համակարգի) թերություններ հայտնաբերելու դեպքում արտաքին աուդիտը պարտավոր է դրանց մասին անմիջապես տեղյակ պահել ՀՀ Կենտրոնական բանկին:

21.6. ՀՀ Կենտրոնական բանկը կարող է պարտադրել Բանկին չորս ամսվա ընթացքում հրավիրել արտաքին աուդիտ և հրապարակել նրա եզրակացությունը, ինչպես նաև իրավունք ունի պահանջելու Բանկից, որպեսզի նա փոխի արտաքին աուդիտն իրականացնող անձին և նշանակի այլ արտաքին աուդիտ իրականացնող անձ:

21.4. Besides submission of an audit conclusion the Bank shall provide in the agreement concluded with the auditor, submission of audit report (letter to the Management of the Bank).

The Bank shall also provide in the agreement to be concluded with the auditor verifying of accuracy of the reports to be filed with the Central Bank of the RA.

21.5. The external audit shall immediately inform the Central Bank of RA about the facts that in its opinion significantly aggravates the financial status of the Bank, as well as of defects of the internal systems (including internal control system) disclosed when performing audit in the Bank.

21.6. The Central Bank of the RA may demand from the Bank to initiate an external audit within four months and publish its conclusion, as well as to dismiss the auditor and appoint a new auditor.

22. Հաշվառումը, հաշվետվությունը և վերահսկողությունը Բանկի նկատմամբ

22.1. Բանկը կազմում, հրապարակում և ՀՀ Կենտրոնական բանկ է ներկայացնում տարեկան, եռամսյակային ֆինանսական և այլ հաշվետվություններ, որոնց ձևերը, ներկայացնելու կարգը և ժամկետները սահմանում է ՀՀ Կենտրոնական բանկը՝ հաշվի առնելով միջազգային ստանդարտները:

Բանկի կողմից ՀՀ Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները և այլ տեղեկությունները պետք է լինեն ամբողջական և արժանահավատ:

22.2. Բանկը հաշվապահական հաշվառումը վարում է ՀՀ Կենտրոնական բանկի և ՀՀ կառավարության լիազորված մարմնի հետ համաձայնեցված կարգով՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման ստանդարտներին համապատասխան:

22. Accounting, Reporting and Control of the Bank

22.1. The Bank prepares, publishes and submits to the Central Bank of the RA annual and quarterly financial and other statements the form, filing procedure and terms of which are set forth by the Central Bank of RA, taking into account the international standards. The statements submitted by the Bank to the Central Bank of the RA shall be complete and accurate.

22.2. Accounting is effected by the Bank in compliance with the accounting standards of the Republic of Armenia, according to the procedure coordinated with the Central Bank of the RA and authorized state body of the Republic of Armenia.

22.3. Բանկի գործառնական տարին սկսվում է հունվարի 1-ին և ավարտվում է նույն տարվա դեկտեմբերի 31-ին:

22.4. Բանկը ՀՀ Կենտրոնական բանկի սահմանած ծնով, դեպքերում, կարգով և ժամկետներում, սակայն ոչ պակաս, քան տարին մեկ անգամ, պարտավոր է ՀՀ Կենտրոնական բանկ ներկայացնել՝

ա) Բանկի կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն ունեցող իրավաբանական անձանց ֆինանսական հաշվետվությունները, տեղեկություններ այդ իրավաբանական անձանց ղեկավարների և նշանակալից մասնակցություն ունեցող անձանց մասին.

բ) Բանկի կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն ունեցող անձանց հետ փոխկապակցված իրավաբանական անձանց ֆինանսական հաշվետվությունները, տեղեկություններ այդ փոխկապակցված իրավաբանական անձանց ղեկավարների և նշանակալից մասնակցություն ունեցող անձանց մասին.

գ) Բանկի կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն ունեցող անձանց հայտարարություններն այն մասին, որ նրանց մասնակցության միջոցով որևէ նոր անձ Բանկում անուղղակի նշանակալից մասնակցություն ունեցող անձի կարգավիճակ ձեռք չի բերել:

Հակառակ դեպքում Բանկը պարտավոր է ՀՀ Կենտրոնական բանկի համաձայնությունը ստանալու նպատակով այդ անձի՝ Բանկում անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերելու օրվանից հետո՝ 10-օրյա ժամկետում, ՀՀ Կենտրոնական բանկ ներկայացնել Բանկում անուղղակի նշանակալից մասնակցություն ունեցող անձանց վերաբերյալ ՀՀ Կենտրոնական բանկի սահմանած փաստաթղթերը, ինչպես նաև այն իրավաբանական անձանց վերաբերյալ փաստաթղթերը (այդ թվում՝ անվանումը, գտնվելու վայրը, ֆինանսական հաշվետվություններ, տեղեկություններ ղեկավարների մասին, տեղեկություններ նշանակալից մասնակցություն ունեցող անձանց մասին), որոնցում Բանկում անուղղակի նշանակալից մասնակցություն ունեցող անձը հանդիսանում է նշանակալից մասնակցություն ունեցող անձ:

Սույն կետով սահմանված հաշվետվությունները և տեղեկությունները Բանկ ներկայացնելու պարտականությունը կրում են Բանկի կանոնադրական

22.3. The operational year of the Bank commences on January 1 and ends on December 31 of the same year.

22.4. The Bank shall submit to the Central Bank of the RA in the form, cases, manner and terms established by the Central Bank of the RA, but not less than once a year the following:

a) financial reports of legal entities with significant participation in the charter capital of the Bank, information on heads of such legal entities and individuals with significant participation,

b) financial reports of legal entities affiliated with individuals with significant participation in the charter capital of the Bank, information on heads of such affiliated legal entities and individuals with significant participation,

c) declarations of individuals with significant participation in the charter capital of the Bank about the fact that no other person has acquired status of a person with indirect significant participation in the Bank.

Otherwise, to seek the consent of the Central Bank, the Bank shall within 10 days following through such person documents provided by the Central Bank for indirect significant participants, as well as documents in relation to such legal entities (including name, address, financial reports, information about on and significant participants) where the person having indirect significant participation in the Bank has significant participation.

Persons with significant participation in the charter capital of the Bank are liable for submission of information and reports to the Bank provided under this clause.

հիմնադրամում նշանակալից մասնակցություն ունեցող անձինք:

22.5. Բանկի գործունեության նկատմամբ վերահսկողության բացառիկ իրավունքը պատկանում է ՀՀ Կենտրոնական բանկին: ՀՀ Կենտրոնական բանկն այդ վերահսկողությունը իրականացնում է «Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

22.6. Բանկը պարտավոր է ընդունել և աջակցել ՀՀ Կենտրոնական բանկի ծառայողներին: Վերահսկողություն և վերստուգումներ իրականացնելիս արգելվում է ծառայողների օրինական գործողություններին խոչնդատելը կամ միջամտելը:

23. Բանկի ղեկավարների պատասխանատվությունը

23.1. Բանկի ղեկավարները գործում են՝ ելնելով Բանկի շահերից, իրականացնում են իրենց իրավունքները և կատարում են Բանկի նկատմամբ իրենց պարտականությունները բարեխիղճ ու ողջամիտ կերպով (ֆիդուցիար պարտականություն):

Բանկի ղեկավարները Բանկի առջև պատասխանատվություն են կրում իրենց դիտավորյալ գործողությունների (անգործության) հետևանքով Բանկին պատճառված իրական վնասի համար՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

Եթե Բանկին վնաս պատճառած արարքն իրականացրել են Բանկի մեկից ավելի ղեկավարներ, ապա նրանց Բանկի առջև կրում են համապարտ պատասխանատվություն:

Բանկին հասցված վնասի համար պատասխանատվությունից ազատվում են Բանկի այն ղեկավարները, որոնք Բանկին վնաս պատճառած որոշման ընդունմանը դեմ են քվեարկել կամ նիստին ներկա չեն գտնվել:

23.2. Եթե Բանկի խորհրդին ներկայացվող հաշվետվությունները բացահայտում են օրենքների, այլ նորմատիվ իրավական և Բանկի ներքին իրավական ակտերի խախտումներ, ապա խորհուրդը պարտավոր է ձեռնարկել միջոցներ այդ խախտումների վերացման և հետագայում չկրկնման ուղղությամբ:

23.3. Բանկի ղեկավարների պատասխանատվությունը ներառում է, սակայն չի սահմանափակում հետևյալ հնարավոր դեպքերը՝

22.5. The exclusive right of control over the activity of the Bank belongs to the Central Bank of the RA. The Central Bank of the RA performs such control in accordance with the Law of the RA On the Central Bank of the Republic of Armenia.

22.6. The Bank shall accept and assist the officers of the Central Bank. It is prohibited to interfere with or to disturb the lawful actions of the officers while processing control and audit.

23. Liability of Managers of the Bank

23.1. Managers of the Bank act in the interests of the Bank, fulfil their rights and perform their obligations with regard to the Bank in good faith and reasonable manner (fiduciary obligation).

Managers of the Bank are liable for the actual damage caused to the Bank as a result of their intentional actions (inaction) in accordance with the laws of RA.

In the event the action causing damage to the Bank has been committed by more than one Manager of the Bank, they shall be jointly liable.

Shall be relieved of liability those managers of the Bank who voted against the decision causing damage to the Bank or were not been present at the meeting.

23.2. In the event the reports filed with the Council of the Bank disclose violations of laws, other normative legal acts and bylaws of the Bank, the Council shall take measures to eliminate such violations and to not to repeat them in future.

23.3. The liability of the Managers of the Bank includes without limitation the following possible situations:

ա) մեկ փոխառուի, խոշոր փոխառուների, Բանկի հետ կապված անձանց գծով սահմանված նորմատիվների խախտումով տրամադրված վարկերի, փոխառությունների կամ կնքված այլ գործարքների հետևանքով Բանկին պատճառված իրական վնասների հատուցման համար պատասխանատվություն է կրում Բանկի վարչության նախագահը, իսկ եթե տվյալ գործարքի կնքման համար օրենքով պահանջվում է Խորհրդի որոշում, ապա Խորհրդի անդամները և վարչության նախագահը:

բ) գործադիր մարմնի անդամները պարտավոր են հատուցել նաև Բանկի խորհրդի կողմից ընդունված ներքին իրավական ակտերի խախտումներով կնքված գործարքների հետևանքով Բանկին պատճառված իրական վնասները:

գ) եթե Բանկի խորհրդին ներկայացվող հաշվետվությունները բացահայտել են օրենքների, այլ նորմատիվ իրավական և Բանկի ներքին իրավական ակտերի խախտումներ, և հետագայում Բանկը կրել է նույն խախտումներով պայմանավորված վնաս, ապա Խորհրդի անդամները համապարտ պատասխանատվություն են կրում այդ իրական վնասների հատուցման համար, բացառությամբ, եթե Խորհրդի անդամն իր իրավասությունների սահմաններում ձեռնարկել է այդ խախտումները կանխելու ուղղությամբ թավաբար և խելամիտ գործողություններ:

դ) եթե ներքին ատյիտի կողմից ստուգման արդյունքներով բացահայտված օրենքների, այլ իրավական ակտերի խախտումների վերաբերյալ տեղեկությունները Բանկի խորհրդին չեն ներկայացվել, և հետագայում Բանկը, այդ խախտումներով պայմանավորված, վնասներ է կրել, ապա ներքին ատյիտի ղեկավարը պարտավոր է հատուցել այդ իրական վնասները:

ե) եթե Բանկի հետ կապված անձի հետ գործարքը կնքվել է Բանկի ներքին ընթացակարգերի խախտումով Խորհրդին ներկայացված դրական եզրակացության հիման վրա, ապա այդ գործարքի հետևանքով Բանկին պատճառված իրական վնասների հատուցման համար պատասխանատվություն է կրում Բանկի վարչության նախագահը:

23.4. Անձն ազատվում է Բանկին պատճառված վնասի համար պատասխանատվությունից, եթե գործել է բարեխիղճ այն համոզմունքով, որ իր գործողությունները ելնում են Բանկի շահերից: Մասնավորապես՝

a) The Chairman of the Management Board of the Bank is liable for the actual damages caused to the Bank as a result of disbursement of loans with violations of normatives established for one borrower, major borrowers, Bank affiliates or other executed transactions, and where the resolution of the Council is required by law for conclusion of such transactions, then the members of the Council and the Chairman of the Management Board are liable.

b) Members of the Management body shall compensate the actual damages caused to the Bank as a result of transactions made with violations of bylaws adopted by the Council of the Bank.

c) In the event the reports filed with the Council of the Bank have disclosed violations of laws, normative legal acts and bylaws of the Bank and that damages have been subsequently caused to the Bank in connection with the same violations, then the members of the Council are jointly liable for the compensation of such actual damages, except where the member of the Council has taken reasonable actions within his/her powers to prevent such violations.

d) In the event the information on the violations of laws, other legal acts discovered during by the internal audit has not been presented to the Council of the Bank and that damages have been subsequently caused to the Bank in connection with those violations, the Head of internal audit shall compensate those damages.

e) In the event the transaction with the Bank has been made upon the affirmative conclusion presented to the Council in violation of internal procedures of the Bank, the Chairman of the Management Board shall be liable for the compensation of actual damages caused to the Bank as a result of such transaction.

23.4. Shall be relieved of liability for the damages caused to the Bank the person who acted in good faith, with the conviction that his/her actions are in the interests of the Bank. In particular:

ա) եթե ողջամիտ գործարար տրամաբանությունից ելնելով՝ կայացվել են որոշումներ, նույնիսկ եթե դրանք Բանկին հետագայում հասցրել են այնպիսի վնասներ, որոնց առաջացումն այդ որոշումն ընդունելիս հստակորեն հաշվի է առնվել որպես բիզնես ռիսկ:

բ) եթե ղեկավարի կողմից սխալ կամ թերի որոշումների ընդունումը եղել է բարեխիղճ՝ առանց վնաս պատճառելուն հատկապես ուղղված միտման, և եթե այդ որոշումների ընդունմամբ չեն խախտվել օրենքների կամ այլ իրավական ակտերի պահանջները: Բանկի ղեկավարների պաշտոնից ազատվելը չի ազատում նրանց իրենց մեղքով Բանկին պատճառված վնասի համար պատասխանատվությունից:

23.5. Բանկը կամ Բանկի այն բաժնետերը (բաժնետերերը), որը (որոնք համատեղ) տնօրինում է (են) Բանկի տեղաբաշխված հասարակ (սովորական) բաժնետոմսերի (կանոնադրական հիմնադրամում մասնակցության) մեկ և ավելի տոկոսը, իրավունք ունի (ունեն) Բանկի ղեկավարների դեմ հայցով դիմելու դատարան՝ Բանկին պատճառված վնասների փոխհատուցման պահանջով:

24. Բանկի գույքի ձեռքբերման և օտարման հետ կապված խոշոր գործարքները: Բանկի գործարքներում շահագրգռվածությունը

24.1. Խոշոր գործարք են համարվում

ա) մեկ կամ մի քանի փոխկապված գործարքները, որոնք, բացառությամբ Բանկի քնականոն տնտեսական գործունեության շրջանակներում կատարվող գործարքների, ուղղակի կամ անուղղակի կապված են Բանկի կողմից գույքի ձեռքբերման, օտարման կամ գույքի ձեռքբերման հնարավորության կամ գույքի օտարման հնարավորության հետ, և որոնց արժեքը գործարքը կնքելու մասին որոշում ընդունելու պահի դրությամբ կազմում է Բանկի ակտիվների հաշվեկշռային արժեքի 25 և ավելի տոկոսը:

բ) մեկ կամ մի քանի փոխկապված գործարքները, որոնց առարկա է հանդիսանում Բանկի հասարակ (սովորական) կամ հասարակ (սովորական) բաժնետոմսերի փոխարկվող արտոնյալ բաժնետոմսերի տեղաբաշխումը, որը կազմում է Բանկի կողմից արդեն տեղաբաշխված հասարակ (սովորական) բաժնետոմսերի 25 և ավելի տոկոսը:

Խոշոր գործարքի առարկա հանդիսացող գույքի արժեքը որոշվում է սույն կանոնադրությամբ սահմանված կարգով:

a) if decisions were taken as per reasonable business logic even if they subsequently caused such damages to the Bank, the origination of which was considered as a business risk when making them,

b) if the taking of wrong or incomplete decisions by a manager was in good faith, without the intention to cause damages and if the requirements of laws and other legal acts have not been violated as a result of such decisions: The dismissal of the managers of the Bank from their position does not relieve them of liability for the damages caused to the Bank by their fault.

23.5. The Bank or the shareholder of the Bank who jointly possesses (possess) 1% and more of the charter capital of the Bank consisting of allocated ordinary shares, may initiate a court action against the managers of the Bank, claiming compensation of the damages caused to the Bank.

24. Major Transactions Related to the Acquisition and Alienation of the Property of the Bank. Transactions with conflict of interest

24.1. Are deemed major transactions:

a) one and more related transactions that, except for the transactions made within the framework of the regular activity of the Bank, are directly or indirectly related to the acquisition, alienation of the property of the Bank or the possibility of its acquisition or alienation, and the amount of which at the moment of conclusion of the transaction makes 25% or more of balance sheet value of the assets of the Bank.

b) one and more related transactions which have as subject the allocation of preferred shares of the Bank convertible to ordinary shares, which makes 25% and more of the ordinary shares already allocated.

The price of the property subject to major transaction is determined in the manner prescribed by this charter.

24.2. Խոշոր գործարք կնքելու մասին որոշումը, որի առարկա է հանդիսանում գույքը, և որի արժեքը գործարքը կնքելու մասին որոշումն ընդունելու պահի դրությամբ կազմում է Բանկի ակտիվների հաշվեկշռային արժեքի 25-ից 50 տոկոսը, պետք է ընդունվի Խորհրդի կողմից միաձայն: Եթե գործարք կնքելու մասին որոշումը Խորհրդի կողմից չի ընդունվել, ապա Խորհուրդն իրավունք ունի որոշում ընդունելու՝ հարցն Ընդհանուր ժողովում քննարկելու մասին:

Սույն կետով սահմանված դեպքում, ինչպես նաև եթե գործարքի առարկա հանդիսացող գույքի արժեքը գործարքը կնքելու մասին որոշումն ընդունելու պահի դրությամբ կազմում է Բանկի ակտիվների հաշվեկշռային արժեքի 50 տոկոսից ավելին, ապա գործարքը կնքելու մասին որոշումն ընդունվում է Ընդհանուր ժողովի կողմից՝ դրան մասնակցող քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4-ով:

Սույն կետով պահանջները չպահպանելը հանգեցնում է գործարքի անվավերության:

Սույն կետով պահանջները չպահպանելը խոշոր գործարք կնքելիս չի հանգեցնում գործարքի անվավերության, եթե Բանկի հետ գործարք կնքած անձը գործել է բարեխիղճ՝ չգիտեր կամ չէր կարող իմանալ նշված պահանջները Բանկի կողմից չպահպանելու մասին:

24.3. Բանկի գործարքներում շահագրգիռ անձինք են համարվում Խորհրդի անդամը, Բանկի կառավարման մարմիններում այլ պաշտոն զբաղեցնող անձը կամ Բանկի բաժնետերը, որն իր հետ փոխկապակցված անձանց հետ միասին տիրապետում է Բանկի քվեարկող բաժնետոմսերի 10 և ավելի տոկոսին, եթե այդ անձինք կամ նրանց հետ փոխկապակցված անձինք՝

- ա) հանդիսանում են գործարքի կողմ կամ մասնակցում են գործարքին որպես միջնորդ կամ ներկայացուցիչ:
- բ) տիրապետում են գործարքի կողմ, միջնորդ կամ ներկայացուցիչ հանդիսացող իրավաբանական անձի քվեարկող բաժնետոմսերի 20 և ավելի տոկոսին:
- գ) պաշտոններ են զբաղեցնում գործարքի կողմ, միջնորդ կամ ներկայացուցիչ հանդիսացող իրավաբանական անձի կառավարման մարմիններում:

24.4. Սույն կանոնադրության 24.3 կետում նշված անձինք պարտավոր են տեղեկություններ տրամադրել Խորհրդին, ներքին աուդիտին և արտաքին աուդիտն իրականացնող անձին՝

24.2. The decision on conclusion of a major transaction having as subject a property the price of which at the moment of taking the decision on conclusion of a major transaction makes 25% to 50% of the book value, shall be adopted unanimously. If the decision on conclusion of a major transaction has not been adopted by the Council, then the Council may decide to discuss the question at the General Meeting.

In such a case as provided by this clause, as well as when the price of the property subject of transaction at the moment of taking the decision makes more than 50% of the book value of the assets of the Bank, then the decision on conclusion of the transaction is adopted at the general meeting, by 3/4 of the votes of owners of voting shares participating in the meeting.

Failure to meet the requirements under this clause leads to invalidity of the transaction.

Failure to meet the requirements under this clause while concluding a major transaction does not lead to invalidity of the transaction if the person concluding the transaction with the Bank acted in good faith, did not know or could not know that the Bank failed to meet the mentioned requirements.

24.3. Are deemed interested parties in the transactions of the Bank the member of the Council, the person holding another position in the management bodies of the Bank or the shareholder, who along with his/her affiliate, possesses 10% and more of voting shares if those persons or their affiliated persons:

- a) are considered as a party to the transaction or participate in the transaction as an agent or representative,
- b) possess 20% or more of voting shares of the legal entity acting as a party to the transaction, agent or representative,
- c) hold positions in management bodies of the legal entity acting as a party to the transaction, agent or representative.

24.4. Persons mentioned in Section 24.3 of this charter shall give information to the Council, internal auditor and external auditor about:

ա) այն իրավաբանական անձանց մասին, որոնցում նրանք ինքնուրույն կամ նրանց հետ փոխկապակցված անձի (անձանց) հետ համատեղ տիրապետում են քվեարկող բաժնետոմսերի 20 և ավելի տոկոսին.

բ) այն իրավաբանական անձանց մասին, որոնց կառավարման մարմիններում նրանք պաշտոններ են զբաղեցնում.

գ) կնքված կամ կնքման նախատեսված իրենց հայտնի գործարքների մասին, որոնցում իրենք կարող են համարվել շահագրգիռ անձ:

24.5. Բանկի որոշումը գործարքը կնքելու մասին, որում առկա է շահագրգռվածությունը, ընդունում է խորհուրդը՝ գործարքը կնքելու մեջ շահագրգռվածություն չունեցող խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ:

24.6. Խորհուրդը շահագրգռվածության առկայությամբ գործարքը կնքելու մասին որոշումն ընդունելու համար պետք է զա այն եզրակացության, որ՝ ա) գործարքը կնքելու հետևանքով Բանկի կողմից ստացված վճարը պակաս չէ գործարքի արդյունքում Բանկի կողմից գործարքի մյուս կողմին փոխանցվող գույքի, տրամադրված ծառայության կամ կատարված աշխատանքի՝ սույն կանոնադրության 24.12 կետով սահմանված կարգով հաշվարկված շուկայական արժեքից, կամ

բ) գործարքը կնքելու հետևանքով Բանկի ձեռք բերված գույքի, ստացված ծառայության կամ Բանկի համար կատարված աշխատանքի դիմաց վճարը չի գերազանցում նշված գույքի, ծառայության կամ աշխատանքի՝ սույն կանոնադրության 24.12 կետով սահմանված կարգով հաշվարկված շուկայական արժեքը:

24.7. Որոշումը գործարքը կնքելու մասին, որում առկա է շահագրգռվածությունը, ընդունվում է Ընդհանուր ժողովի կողմից քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող և գործարքի կատարման մեջ շահագրգռվածություն չունեցող մասնակիցների ձայների մեծամասնությամբ, եթե գործարքը և (կամ) փոխկապակցված գործարքները կնքվում են Բանկի քվեարկող բաժնետոմսերի կամ քվեարկող բաժնետոմսերի փոխարկվող Բանկի այլ արժեթղթերի տեղաբաշխման նպատակով, որոնց քանակն ավելի է Բանկի՝ արդեն տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի քանակի 2 տոկոսից:

a) the legal entities where they alone or along with their affiliated person (persons) possess 20% and more of voting shares,

b) the legal entities in the management bodies of which they hold positions,

c) the transactions already made or to be made and known to them in which they may be considered as interested parties.

24.5. The decision of the Bank on conclusion of a major transaction is adopted by the Council, by majority of votes of its members not interested in the transaction.

24.6. In order to adopt a decision on conclusion of the transaction with interested persons, the Council shall come to the conclusion that:

a) the payment received by the Bank as a result of conclusion of the transaction is not less than the market value of the property transferred by the Bank to the other party, of the services and works performed, calculated in accordance with Section 24.12 hereof.

b) the payment for the property acquired, services received by the Bank or for the work performed for the Bank as a result of conclusion of the transaction does not exceed the market value of this property, service or work calculated in accordance with Section 24.12 hereof.

24.7. The decision on conclusion of the transaction in which there is a conflict of interest is adopted by the General Meeting by majority of votes of shareholders owners of voting shares if the transaction and (or) related transactions are concluded for the purposes of allocation of voting shares or other securities of the Bank convertible to voting shares the amount of which is more than 2% of the allocated voting shares of the Bank.

24.8. Գործարքի կնքումը, որում առկա է շահագրգռվածությունը, և որը բավարարում է սույն կանոնադրության 24.7 կետով սահմանված պահանջները, կարող է կնքվել առանց Ընդհանուր ժողովի որոշման, եթե՝

ա) գործարքը Բանկին շահագրգիռ անձի կողմից տրամադրվող փոխառություն է:

